


ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԱՆՏԱՌԱՅԻՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆՏԱՌԱՅԻՆ
ԲԱՐԻՔՆԵՐԸ

Երևան 2012



ՉՏԴ 911.2 (479.25): 630*2

ԳՄԴ 26.89 (2h)+43

Խ 266

Նագիկ Խանջյան

Կենսաբանական գիտությունների դոկտոր
անտառային բարիքները,

Ն. Խանջյան: WWF-Հայաստան,
Եր. «Արտ-Սայթ» ՍՊԸ, 2012, 144 էջ:
ISBN 978-99941-2-702-3

Հեղինակը շնորհակալություն է հայտնում WWF հայաստանյան մասնաճյուղին գրքի պատրաստման և հրատարակության համար հնարավորություն ընձեռելու, ինչպես նաև աջակցություն ցուցաբերելու համար:

WWF հայաստանյան մասնաճյուղը և հեղինակը շնորհակալություն են հայտնում լուսանկարների բոլոր հեղինակներին, ովքեր սիրով տրամադրեցին դրանք գրքում օգտագործելու համար:

Գիրքը նվիրված է Հյուսիսային Հայաստանի անտառների ոչ բնափայտային արտադրանքի աղբյուր հանդիսացող ծառերի, թփերի, խոտաբույսերի և սնկերի հիմնական տեսակներին: Բերվում են հակիրճ տեղեկություններ դրանց մասին, ներառյալ օգտագործման ոլորտները: Հրատարակությունը նախատեսված է անտառային ոլորտի մասնագետների, դասախոսների, մանկավարժների, ուսանողների, քաղաքացիների, անտառներով ու բույսերով հետաքրքրվողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՉՏԴ 911.2 (479.25): 630*2

ԳՄԴ 26.89 (2h)+43

© WWF-Հայաստան, 2012

© Նագիկ Խանջյան, 2012

Քարտեզները.

© WWF-Հայաստան / Տ. Մելքունյան



Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրամիության և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից ֆինանսավորվող «Անտառային օրենսդրության կիրառման և անտառային ոլորտի կառավարման բարելավում Եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան երկրներում և Ռուսաստանում» (ENPI-FLEG) տարածաշրջանային ծրագրի շրջանակներում որպես WWF հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացված գործողություն: Հրատարակությունում զետեղված բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն WWF հայաստանյան մասնաճյուղը: Հրատարակության բովանդակությունը որևէ ձևով արտահայտում Եվրոպական միության, Ավստրիական զարգացման համագործակցության կամ ծրագրի գործընկերների տեսակետները:

This publication has been produced in the framework of the regional project Improving Forest Law Enforcement and Governance in the European Neighborhood Policy East Countries and Russia (ENPI FLEG) financed by the European Union and the Austrian Development Cooperation as an activity implemented by WWF-Armenia. The contents of this publication are the sole responsibility of WWF-Armenia and can in no way be taken to reflect the views of the European Union, the Austrian Development Cooperation or the Implementing Organizations.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Գրքի կառուցվածքը	6
1. Անտառը և նրա նշանակությունը	7
2. Հյուսիսային Հայաստանի ֆիզիկա-աշխարհագրական բնութագիրը	9
3. Հյուսիսային Հայաստանի անտառները	12
4. Հյուսիսային Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները	14
5. Անտառի կողմնակի կամ ոչ բնափայտային օգտագործում	20
6. Հյուսիսային Հայաստանի անտառային ոչ բնափայտային պաշարներ	23
▪ Ծառեր և թփեր	24
▪ Խոտաբույսեր	66
▪ Սնկեր	118
Գրականություն	132
Հավելվածներ	
1. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսությունները	133
2. Բույսերի և սնկերի հայերեն անունների ցանկ	134
3. Բույսերի և սնկերի լատիներեն անունների ցանկ	138
4. Բույսերի և սնկերի ռուսերեն անունների ցանկ	141

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2011թ. անտառների միջազգային տարին էր: Այդ առիթով կարելի է մեկ անգամ ևս հիշել, որ անտառը բնության ամենամեծ պարզևն է, առանց որի անհնար է պատկերացնել մարդու կյանքը: Դեռ հնուց մարդն անտառն օգտագործել է որպես բնափայտի աղբյուր, սնունդ հայթայթելու, պատսպարվելու և պաշտպանվելու միջոց, ինչպես նաև հանգստանալու, բուժվելու և գեղագիտական հաճույք ստանալու համար: Այն ներկայումս էլ չի կորցրել իր այդ բազմաբնույթ նշանակությունը:

Անտառը մեծ հարստություն է ցանկացած երկրի համար: Բացի բնափայտից, այն մարդուն տալիս է կյանքի համար անհրաժեշտ ոչ բնափայտային բազմաթիվ բարիքներ, այսպես կոչված, կողմնարդյունք: Վեջինիս նպատակային և տնտեսապես արդյունավետ օգտագործումն իրականացնելու համար անհրաժեշտ է ճանաչել անտառի ոչ բնափայտային կողմնարդյունքը: Ներկա հրատարակության հիմնական նպատակն է օգնել ընթերցողին, հատկապես, երիտասարդ սերնդին, ճանաչելու, պահպանելու և արդյունավետ օգտագործելու անտառի հարստությունը, այդ թվում ոչ բնափայտային արտադրանքը:

Հյուսիսային Հայաստանի անտառաշատ տարածքներում են գտնվում Վանաձորի, Դիլիջանի, Հանքավանի, Ծաղկաձորի, Սևանա լճի ավազանի հանգստյան և առողջարանային գոտիները, բազմաթիվ հյուրանոցներ, հանգստյան տներ, առողջարաններ, բուժհիմնարկներ: Այստեղ են գտնվում նաև «Դիլիջան» և «Սևան» ազգային պարկերը, բազմաթիվ արգելավայրեր, բնության հուշարձաններ և դենդրոպարկեր: Տեղաբնակների, հանգստացողների, բազմաթիվ այցելուների և հովելների ծանոթությունն անտառային բույսերի և դրանց հատկությունների հետ կարող է նպաստել ոչ միայն դրանց ճիշտ օգտագործմանը, այլև պահպանությանը:

ԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գիրքը կազմված է ընդհանուր բաժիններից, որոնք ներկայացնում են Հյուսիսային Հայաստանի ֆիզիկա-աշխարհագրական պայմանները, այնտեղ գտնվող անտառները և դրանց նշանակությունը, բնության հատուկ պահպանվող տարածքները, ոչ բնափայտային անտառօգտագործման օրենսդրական հիմքերը, ինչպես նաև անտառային բույսերին և սնկերին նվիրված բաժիններից: Գրքում ներկայացված են Հայաստանի չորս՝ Իջևանի, Լոռու, Ապարանի և Սևանի ֆլորիստիկական շրջաններում հանդիպող անտառային բույսերի 138 և սնկերի 19 տեսակ: Բացի անտառային տեսակներից, ընդգրկվել են նաև մի շարք տեսակներ, որոնց կյանքն այս կամ այն չափով կապված է անտառի հետ. աճում են անտառեզրերին, հանդիպում են անտառի ստորին սահմանի մոտ, կամ անտառի վերին սահմանի անտառամերձ մարգագետիններում, ինչպես նաև անտառային գոտում գտնվող բնակավայրերում և դրանց շուրջը: Նկատի ունենալով, որ հնարավոր չէ ներկայացնել անտառային ֆլորան ամբողջությամբ, ընտրվել են մարդու համար արժեքավոր հատկություններով օժտված և ավելի մեծ կիրառություն ունեցող տեսակները, ինչպես նաև Հյուսիսային Հայաստանում ավելի մեծ տարածում ունեցող կամ միայն այդ տարածքին հատուկ բույսերը: Բոլոր տեսակները խմբավորված են երեք բաժիններում: Բարձրակարգ բույսերի տեսակները տրվում են երկու բաժիններում, ըստ կենսաձևի, ծառաթփային բույսեր և խոտաբույսեր: Առանձին բաժնում ներկայացված են սնկերը:

Բաժիններում բույսերը և սնկերը դասավորված են ըստ իրենց հայերեն գիտական անունների այբբենական կարգի: Յուրաքանչյուր բույսի համար տրվում են ցեղի և տեսակի հայերեն, լատիներեն և ռուսերեն անունները, ընտանիքի հայերեն և լատիներեն անունները (փակագծում), հակիրճ նկարագրությունը, աճման բարձունքային միջերը և էկոլոգիական պայմանները, տարածումը ըստ ֆլորիստիկական շրջանների՝ Հյուսիսային Հայաստանում և Հայաստանում ընդհանրապես: Վերջում բերվում են տեղեկություններ մարդու համար բույսի օգտակար հատկությունների և կիրառության վերաբերյալ:

Հատուկ նշաններով առանձնացվում են.

- թունավոր բույսեր 
- Հայաստանի Կարմիր գրքում գրանցվածներ 

Անհրաժեշտ է նշել, որ Կարմիր գրքում գրանցված տեսակների օգտագործումն արգելվում է: Հավելվածներն ընդգրկում են բույսերի և սնկերի հայերեն, լատիներեն և ռուսերեն անունների ցանկերը: Մի շարք բույսերի համար տրվում են նաև տեղական բնակչության կողմից օգտագործվող հնուց պահպանված հայերեն անունները:

«Անտառ» հասկացությունն ունի գիտականորեն հիմնավորված տարբեր բնորոշումներ: Սակայն սովորական մարդու համար անտառը ծառերի գերակշռությամբ տարածք է, որտեղ առկա է անտառային բույսերի, կենդանիների և սնկերի մեծ բազմազանություն: Անտառում կարելի է հավաքել տարբեր պտուղներ, բույսեր, սերմեր, սնկեր, հանգստանալ, կազդուրվել և օգտվել անտառային այլ բարիքներից:

Գիտնականների մեծ մասը համակարծիք են, որ անտառային էկոհամակարգի հիմնական բաղադրիչները հետևյալներն են.

- ծառուտ
- մատղաշ
- ենթանտառ
- կենդանի ծածկոց
- անտառային թաղիք կամ մեռյալ ծածկոց
- կենդանական աշխարհ

Այդ բաղադրիչներից ամենագլխավորները՝ ծառուտն ու մատղաշը հանդիսանում են գոյություն ունեցող անտառի հերթափոխը և ապագա անտառի հիմքը: Սակայն մյուսները նույնպես կարևոր են անտառի գոյության համար, քանի որ յուրաքանչյուրն, իրականացնելով դարերի ընթացքում հղկված և բնության կողմից իրեն վերապահված գործընթացը, նպաստում է անտառի գոյությանը և պահպանմանը:

Ծառուտն անտառի հիմնական և գլխավոր բաղադրիչն է, որը որոշակի տարածքում աճող ծառերի ամբողջությունն է:

Մատղաշը մայրական սաղարթի տակ աճող անտառակազմող տեսակի փոքր հասակի ծառերն են, որոնք հետագայում կազմելու են անտառի հիմնական ծառուտը: Մատղաշով է պայմանավորված ապագա անտառի գոյությունը:

Ենթանտառն անտառի սաղարթի տակ աճող տարբեր տեսակի ցածրահասակ ծառերն ու թփերն են: Դրանք հիմնականում ստվերասեր տեսակներ են: Ենթանտառում ընթանում են տարբեր գործընթացներ, որոնք նպաստում են անտառակազմող գլխավոր ծառատեսակի բնական վերականգնմանը:

Կենդանի ծածկոցն անտառի սաղարթի տակ աճող խոտաբույսերի, ցածրահասակ կիսաթփերի, մանուշակների և քարաքոսերի ամբողջությունն է: Այն իր բազմաթիվ գործընթացների շնորհիվ նպաստում է անտառի կենսագործունեությանը:

Անտառային թաղիքը կամ մեռյալ ծածկոցը կազմված է բուսերի թափուկներից՝ տերևներ, ճյուղեր, բողբոջներ, սերմեր և այլն, ինչպես նաև մահացած կենդանիների մնացորդներից: Դրանց մեխանիկական և կենսաբանական քայքայման արդյունքում առաջանում են հանքային նյութեր և հումուս, իսկ վերջնական արդյունքում՝ ջուր և ածխաթթու գազ:

Կենդանական աշխարհը կազմված է ցածրակարգ օրգանիզմներից մինչև բարձրակարգ ողնաշարավորների ներկայացուցիչներ, որոնք բազմաթիվ սննդային շղթաներով կապված են միմյանց և անկենդան բնության բաղադրիչների հետ:

Անգնահատելի է անտառի դերը կենսոլորտի և մարդու համար: Անտառի կենսոլորտային նշանակությունը հսկայական է և անփոխարինելի: Ծառերի կանաչ տերևները ֆոտոսինթեզի միջոցով մթնոլորտից կլանում են ածխաթթու գազ և արտադրում թթվածին, դրանով ապահովելով կյանքի գոյության և պահպանման համար այնքան անհրաժեշտ թթվածնի անընդհատ հոսքը դեպի կենսոլորտ: Անտառն ունի նաև մեծ նշանակություն կենսոլորտում ածխածնի շրջապտույտի համար: Բուսական օրգանիզմներից միայն բնափայտային բույսերն են, որ կլանելով մթնոլորտի ածխաթթու գազը, ստեղծում են փայտանյութ, որի չոր քաշի կեսը ածխածինն է: Փայտանյութի մեջ կուտակված ածխածինը պահպանվում է հարյուրավոր տարիներ և նորից վերադառնում մթնոլորտ ծառերի մահանալուց և քայքայվելուց հետո:

Անտառն ունի նաև անմիջական անփոխարինելի տնտեսական նշանակություն մարդու համար: Մարդու կողմից օգտագործվող անտառային հարստությունը կամ արտադրանքն ընդունված է բաժանել երկու խմբի. նյութական, որը տեսանելի է և հեշտությամբ կարելի է հաշվել չափի միավորներով, և ոչ նյութական կամ անկշիռ, որն անտեսանելի է և հնարավոր չէ հաշվել: Վերջինս հաճախ անվանում են նաև անտառի էկոհամակարգային ծառայություններ և դրանք կապված են հիմնականում անտառի բնապահպանական հատկությունների հետ, որոնցից մարդն օգտվում է միջնորդված ձևով: Դրանք ավելի են կարևորվում հատկապես Հայաստանի նման լեռնային երկրի համար: Անտառի հողապաշտպան հատկությունը շատ կարևոր է հողերի դեգրադացիայի դեմ պայքարելու համար, իսկ ջրակուտակիչ և կլիմայակարգավորիչ հատկությունները, կլիմայի գլոբալ փոփոխության տեսակետից, կատարում են շատ կարևոր դեր անապատացման դեմ պայքարելու առումով:

Անտառի նյութական արտադրանքը նախևառաջ փայտանյութն է, որը շատ մեծ նշանակություն ունի մարդու կյանքում: Բնափայտը կիրառվում է ամենատարբեր բնագավառներում՝ քաղաքաշինության, արդյունաբերության, գյուղատնտեսության, նավաշինության մեջ, թղթի արտադրության համար, կենցաղում, անփոխարինելի է երկաթգծերի փայտակոճեր, հանքահորերի հենասյուներ պատրաստելիս և այլն:

Անտառի նյութական արտադրանքի մեջ կարևոր նշանակություն ունի նաև ոչ բնափայտային արտադրանքը կամ կողմնակի անտառօգտագործման արգասիքները, որոնք կապված են ուտելի, դեղատու, ներկատու, ձիթատու, եթերայուղատու, մեղրատու, համեմունքային, միջատասպան և մարդու համար այլ օգտակար հատկություններով օժտված բույսերի, սնկերի և կենդանիների հետ:

Անտառի ռեկրեացիոն՝ մարդու համար առողջարար, կազդուրիչ և ուժերը վերականգնող հատկությունը կապված է անտառային հատուկ միջավայրի հետ, որտեղ թթվածնով հարուստ օդը, շրջապատի կանաչ գույնը, աղմուկի բացակայությունը և այլ գործոնները բարերար են ազդում նյարդային համակարգի և, ընդհանրապես, մարդու առողջության վրա: Դրա հետ է կապված մեծ քաղաքների տարածքում անտառային կղզյակների պահպանման և անտառային տարածքներում առողջավայրեր կառուցելու հնուց հայտնի իմաստուն սովորույթը:

Անտառի ծառափային տեսակներից շատերն արտադրում են ցնդող նյութեր՝ ֆիտոնցիդներ, որոնք ունեն մանրէասպան հատկություն: Դրա համար էլ, ի տարբերություն քաղաքի օդի, անտառային օդը զերծ է վնասակար շատ նյութերից, իսկ մանրէները քիչ են կամ բացակայում են: Այս գործոնները ստեղծում են ավելի բարենպաստ պայմաններ մարդու կյանքի համար:

Շատ երկրներում տնտեսապես շահավետ և բարձր է գնահատվում անտառի հետ կապված սպորտի զարգացման և տուրիզմի, հատկապես, էկոտուրիզմի կազմակերպման նշանակությունը: Այն հեռանկարային է և ներկայումս զարգացման բուռն թափ է ստանում նաև Հայաստանում:

Մեծ է անտառի գիտահետազոտական և ուսուցողական նշանակությունը, հատկապես, անտառագիտության և էկոլոգիական կրթության համար: Անտառային էկոհամակարգի բաղադրիչների՝ կենսացենոզների և կենսատոպների բնականորեն հավասարակշռված կենսագործունեության մոդելի ուսումնասիրությունն ու ըմբռնումը կարող են օրինակելի և կիրառելի լինել մարդու համար կյանքի այլ բնագավառներում՝ նպաստելով մարդու կյանքի համար անհրաժեշտ միջավայրի պահպանությանը:

Անտառն ունի նաև հոգևոր և գեղագիտական արժեք, ձևավորում է ճաշակ, բարություն, նրբագեղություն, կարող է հանդիսանալ դրական զգացմունքների, ոգեշնչման աղբյուր, ստեղծագործական աշխատանքի հիմք, հատկապես, նկարիչների, երաժիշտների, գրողների և այլ մասնագետների համար:

2.

ՀՅՈՒՍԻՍԱՎՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱ-ԱՇՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներկա հրատարակության համար Հյուսիսային Հայաստան հասկացությունը ներառում է հետևյալ տարածքը. Տավուշի մարզն ամբողջությամբ և դրան սահմանակից Լոռու մարզի արևելյան, ինչպես նաև Սևանի և Կոտայքի մարզերի հյուսիսային անտառապատ տարածքները: Աշխարհահռչակ գիտնական ակադեմիկոս Ա. Լ. Թախտաջյանի կողմից 1954 թ. կազմված Հայաստանի բուսա-աշխարհագրական բաժանման համաձայն այն ընդգրկում է Իջևանի ֆլորիստիկական շրջանն ամբողջությամբ և դրան հարող Լոռու, Ապարանի և Սևանի ֆլորիստիկական շրջանների համապատասխան անտառային տարածքները (տես քարտեզ 1. Հայաստանի ֆլորիստիկական և վարչական շրջանները):

Ընդունված սահմաններում Հյուսիսային Հայաստանը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում: Այն Փոքր Կովկասի լեռնահամակարգի կենտրոնական հատվածն է և կազմում է Հայաստանի տարածքի մոտ 1/3 մասը: Հյուսիսային Հայաստանը հյուսիսից սահմանակից է Վրաստանին, իսկ հյուսիս-արևելքից՝ Ադրբեջանին:

Երկրաբանական կառուցվածքի տեսակետից Հյուսիսային Հայաստանի տարածքը գտնվում է հյուսիսային և հյուսիս-արևելյան ծալքաբեկորային լեռնաշղթաների մարզում, որտեղ պահպանվել են գրեթե բոլոր երկրաբանական ժամանակաշրջանների գոյացությունները՝ սկսած հնագույն միջքեմբրյանից մինչև նորագույն անթրոպոգենը: Տարածքի առավելագույն բարձրությունը թե՛ լեռն է 3101 մ բարձրությամբ, իսկ ամենացածր կետը 375 մ է և գտնվում է Դեբեդ գետի ստորին հոսանքում:

Լեռնագրության առումով հյուսիս-արևմտյան մասում, Վրաստանի սահմանի երկարությամբ, ձգվում է Վիրահայոց լեռնաշղթան ամենաբարձր Լավվար (2543 մ) գագաթով: Դրանից հարավ, գրեթե զուգահեռ, տարածվում է Բազումի լեռնաշղթան, իսկ մի փոքր էլ հարավ՝ Հալաբի լեռներն են Բովաքար (3016 մ) գագաթով: Դրանցից ավելի հարավ գտնվում է Փամբակի լեռնաշղթայի արևելյան բարձրադիր հատվածը թե՛ լեռ ամենաբարձր գագաթով և իր Ծաղկունյաց լեռնաբազուկով, որտեղ թեղենիսը (2846 մ) ամենաբարձրն է:

Հյուսիսային Հայաստանի արևելյան հատվածում, սկսած գրեթե Վրաստանի սահմանից, հյուսիսից հարավ տարածվում է Գուգարաց լեռնաշղթան Չափն (2244 մ) լեռնագագաթով, որից դեպի հյուսիս-արևելք ձգվում են Ոսկեպարի, Սթնասարի և Իջևանի, իսկ դեպի արևմուտք՝ Սևորոյան ցածրադիր լեռնաբազուկները: Նույն արևելյան հատվածում Գետիկ գետի հովտի երկարությամբ տարածվում է Միափորի լեռնաշղթան Մուրղուզ (2993 մ) բարձրագույն գագաթով, որից դեպի հյուսիս-արևելք, գրեթե միմյանց զուգահեռ, հյուսիսից դեպի հարավ հաջորդականությամբ ձգվում են Հախումի, Կեճաց, Տավուշի և Խնձորուտի լեռնաբազուկները: Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի երկայնքով ոչ բարձրադիր Արեգունի լեռնաշղթան է, որին, դեպի հարավ-արևելք, սկսած Շորժա բնակավայրից, հաջորդում է Սևանի լեռնաշղթան:

Տարածքում գտնվում են երկու լեռնանցքներ՝ Սևանի (2114 մ) և Պուշկինի (2038 մ): Առաջինը Փամբակի և Արեգունի լեռնաշղթաների հանդիպման տեղում է և կապում է Սևանի ավազանը Դիլիջանի գոգավորության հետ, իսկ երկրորդը Բազումի լեռնաշղթայի վրա է և միացնում է Փամբակ և Գարգառ գետերի հովիտները: Նեկայունս երկու լեռնանցքների անցումները կրճատվել են բունելային ավտոճանապարհներով:

Հյուսիսային Հայաստանի ջրագրական ցանցը կազմված է հիմնականում Դեբեդ և Աղստև գետերից ու դրանց վտակներից, ինչպես նաև Հրազդան գետի աջակողմյան վտակ Սարմարիկ գետից, որոնք բոլորն էլ պատկանում են Կովկասի ամենախոշոր Կուր գետի ավազանին: Նշված բոլոր գետերն ունեն խառը սնուցում և սկիզբ են առնում ստորգետնյա աղբյուրներից և հալոցքային ջրերից:

Աղստև գետը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի թե՛ լեռան հյուսիս-արևմտյան լանջից: Հայաստանի տարածքով մոտ 81 կմ հոսելու ընթացքում նրան միանում են Բլդան, Հաղարծին, Գետիկ, Սառնաջուր, Պայտաջուր և Ոսկեպար խոշոր վտակները: Այն, անցնելով ևս 33 կմ Ադրբեջանի տարածքով, աջից թափվում է Կուր գետի մեջ:

Դեբեդ գետը կազմավորվում է Ջորագետ և Փամբակ գետերի միախառնումից: Այն աջից ընդունում է Մարց և Շնող, իսկ ձախից՝ Ախթալա խոշոր վտակները: Հայաստանի տարածքում հոսում է 152 կմ (Փամբակի հետ միասին), այնուհետև Վրաստանում՝ ևս 26 կմ և թափվում Կուրի աջակողմյան վտակ հարամ գետը:

Մարմարիկ գետը՝ Հրազդան գետի ամենամեծ վտակը, սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի կենտրոնական բարձրադիր հատվածի Մայմեխ (3081 մ) և Դեբախլի (2820 մ) գագաթներից և, հոսելով 37 կմ համանուն անտառապատ հովտով, Հրազդան քաղաքի մոտ աջից միախառնվում է Հրազդան գետին, որն իր հերթին թափվում է Հայկական Լեռնաշխարհի մայր գետի՝ Արաքսի մեջ:


Հյուսիսային Հայաստանը հայտնի է իր չոր մերձարևադարձային կլիմայով, ինչպես նաև վերջինիս տարատեսակը հանդիսացող չափավոր շոգ կլիմայով: Մինչև 900 մ բարձրություններում ձևավորվում է չոր մերձարևադարձային կլիման, որին բնորոշ են կարճատև մեղմ ձմեռը՝ ոչ հաստատուն ձյունածածկույթով, տաք ու կարճատև գարունը, չոր տևական ամառը՝ շոգ եղանակի գերակշռությամբ և տաք ու մեղմ տևական աշունը՝ վերջում անձրևային եղանակով: Այստեղ կլիմայական պայմանները նպաստավոր են ջերմասեր բույսերի համար:

900-1300 (1500) մ բարձրություններում ձևավորվում է չափավոր շոգ կլիման, որին բնորոշ են չափավոր ցուրտ, հաստատուն ձյունածածկույթով ձմեռը, մեղմ անձրևային գարունը, չափավոր շոգ ու համեմատաբար խոնավ ամառը և արևոտ ու զով աշունը: Կլիմայական պայմանները և անտառային լանդշաֆտը նպաստավոր պայմաններ են ստեղծում հանգստի և բուժման համար:

1500-2400 մ բարձրություններում լեռնալանջերին ձևավորվում է բարեխառն կլիման: Ձմեռը ցուրտ է, հաստատուն ձյունածածկույթով, գարունը մեղմ է և տևական, ամառը տաք է և չափավոր խոնավ, իսկ աշունը՝ տաք և անհողմ: Կլիմայական պայմանները նպաստավոր են հողագործության, լեռնային հանգստավայրերի և առողջարանների համար:

2400 մ-ից ավելի բարձր ձևավորվում է ցուրտ լեռնային կլիման, որին բնորոշ են հաստատուն ձյունածածկույթով տևական ձմեռը, կարճատև զով ամառը և կարճատև ցուրտ աշունը:

ՔԱՐՏԵԶ 1. Հայաստանի ֆլորիստիկական և վարչական շրջանները



3.

ՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ

Հայաստանի անտառային տարածքները սահմանափակ են: Դա կապված է հանրապետության աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, մարդու գործունեության և այլ գործոնների հետ: Հայկական լեռնաշխարհը, լինելով մարդկային քաղաքակրթության հնագույն կենտրոններից մեկը, շատ է ենթարկվել տնտեսական գործունեության բացասական ազդեցության: Գիտնականների վկայությամբ, հնագույն ժամանակներում Հայաստանի տարածքի մոտ 40%-ը ծածկված է եղել անտառներով, այդ թվում մշտադալար փշատերև անտառներով: Սակայն Հայաստանը, ինչպես նաև անտառածածկ հյուսիսային հատվածը, տևականորեն ենթարկվել է անխնա շահագործման: Ավելին, XX-րդ դարի երկրորդ կեսից, կապված կլիմայական պայմանների գլոբալ փոփոխությունների, մարդածին գործոնների ազդեցության մեծացման և ուրբանիզացիայի հետ, տեղի է ունեցել անտառային տարածքների զգալի կրճատում, իսկ որոշ վայրերում, նույնիսկ, իսպառ վերացում:

Ներկայումս Հայաստանում անտառային հողերը կազմում են 344,2 հազ. հա, որից անտառածածկ տարածքները՝ 277,1 հազ. հա: Հայաստանի անտառները լեռնային են: Դրանք հիմնականում տարածված են հանրապետության հյուսիսային և հարավային շրջաններում: Կենտրոնական Հայաստանում անտառները քիչ են և ներկայացված են առանձին կղզյակների կամ չորասեր նոսրանտառների տեսքով: Հանրապետության արևմտյան հատվածը և Արարատյան դաշտավայրը գրեթե անտառազուրկ են:

Հյուսիսային Հայաստանի բնական անտառները հիմնականում կովկասյան տիպի մեզոֆիլ անտառներ են: Անտառկազմող հիմնական ծառերն են հաճարենին (*Fagus L.*), կաղնին (*Quercus L.*) և բոխին (*Carpinus L.*): Դրանք առաջացնում են ինչպես միատարր համակեցություններ՝ հաճարկուտներ, կաղնուտներ և բոխուտներ, այնպես էլ խառն անտառների տարբեր ենթատիպեր: Անտառային գոտում, միջին և, հատկապես, վերին սահմանի մոտ, որպես ուղեկցող տեսակներ, հանդիպում են թխկին (*Acer L.*), լորենին (*Tilia L.*), հացենին (*Fraxinus L.*), թեղին (*Ulmus L.*), իսկ վերին սահմանում, որտեղ տարածվում են նոսրացած ծառուտները, աճում են կեչին (*Betula L.*), տեղ-տեղ՝ կաղամախին (*Populus tremula L.*), այծուռին (*Salix caprea L.*): Ենթանտառի տարբեր շարահարկերում հանդիպում են ավելի ցածրահասակ և սովորաբար ծառեր ու թփեր: Անտառներում շատ են վայրի պտղատու ծառերը՝ տանձենին (*Pyrus L.*), խնձորենին (*Malus Mill.*), սալորենին (*Prunus L.*), ընկուզենին (*Juglans L.*), թխենին (*Padus Hill*) և այլն, ինչպես նաև թփերը՝ սովորական տխլենին (*Corylus avellana L.*), հաղարջենին (*Ribes L.*), կոկոռչենին (*Grossularia Hill*), ազնվամորին (*Rubus idaeus L.*), թխակապույտ մոշենին (*Rubus caesius L.*) և այլն:

Գիտական տվյալների վկայությամբ, Հյուսիսային Հայաստանի բոխուտային անտառները հանդիսանում են կաղնու, իսկ տեղ-տեղ՝ հաճարենու անտառների հերթափոխության արդյունք: Ավելի տարածված կաղնուտա-բոխուտային անտառները, բոխու մատղաշի բարձր կենսունակության, ինչպես նաև մարդու գործունեության հետևանքով (սովորաբար հատվում է բարձրարժեք բնափայտով օժտված կաղնին) փոխարինվում են բոխուտներով: Հերթափոխության հաջորդ փուլում բոխու սովորական (*Carpinus betulus L.*) տեսակը փոխարինվում է ավելի մեծ ճկունությամբ օժտված բոխու արևելյան (*Carpinus orientalis Mill.*) տեսակով:

Չորասեր նոսրանտառները Հյուսիսային Հայաստանում կազմված են հիմնականում մշտադալար գիհու երկու՝ գարշահոտ (*Juniperus foetidissima Willd.*) և բազմապտուղ (*Juniperus polycarpus K. Koch*) տեսակներից: Գիհուտները տարածվում են Դեբեդ և Աղստև գետերի հովիտներում մեծ թեքությամբ աչքի ընկնող առավել զառիթափ ժայռոտ և ծերպավոր լեռնալանջերին: Ընդ որում, նշված գետերի հովիտներում գարշահոտ գիհին ունի բավականին լայն տարածում, իսկ բազմապտուղ գիհին հանդիպում է հատուկեմտ ծառերի կամ փոքր ծառախմբերի տեսքով:

Աղստև գետի հովտում գարշահոտ գիհուց կազմված նոսրանտառները տարածվում են հովիտը երիզող լեռնաշղթաների հովտահայաց լեռնալանջերին: Գիհուտային նոսրանտառներն այստեղ տարածվում են մոտ 700 - 2100 մ բարձրությունների վրա և առաջացնում բավականին մեծ զանգվածներ, որոնք գետափերին բնորոշ սաղարթավոր ծառերի նեղ շերտից դեպի վեր բարձրանում են մինչև լեռների կատարները՝ կազմելով համատարած գոտի: Աղստևի ձախ ափին գիհուտները տարածվում են 20-21 կմ երկարությամբ՝ սկսած Թեղուտ գյուղից մինչև Իջևան քաղաքը, իսկ աջ ափին՝ սկսած Գետիկի հովտից մինչև Իջևան քաղաքը ձգվում են մոտ 10 - 11 կմ երկարությամբ:

Դեբեդ գետի հովտում գարշահոտ գիհու նոսրանտառները տարածվում են գետի աջ ափի երկարությամբ Չաղպատից մինչև Ախթալա՝ զբաղեցնելով լեռնալանջերի մոտ 800-1500 մ բարձրությունները: Գիհուտներում աճում են բազմաթիվ ցածրահասակ ծառեր և խիտ ճյուղավորված, հաճախ փշոտ թփեր՝ ցաքին (*Paliurus* Mill.), չմենին (*Cotoneaster* Medik.), դժնիկը (*Rhamnus* L.), հասմիկը (*Jasminum* L.) և այլն:

Բազմապտուղ գիհուց կազմված նոսրանտառների առավել մեծ զանգվածներ գտնվում են Սևանի ավազանում: Դրանք Արեգունու և հատկապես Սևանի լեռնաշղթաների երկարությամբ մինչև Արեգունի գյուղն առաջացնում են յուրահատուկ համատարած գոտի՝ տարածվելով միջին լեռնային գոտում, տեղ-տեղ հասնելով մինչև 2200 մ բարձրությունները: Գիհուտների առավել զարգացած և ավելի խիտ ու համակցված տեղամասերը գտնվում են Ջիլ - Ծափաթաղ - Փամբակ գյուղերի հատվածում, իսկ Արտանիշի թերակղզու գիհուտները խիստ նոսրացած են և ունեն ճնշված բնույթ:

Լուսասեր, չորադիմացկուն և հողի նկատմամբ քիչ պահանջկոտ գիհուտային նոսրանտառներն ունեն էրոզիան կանխող հրաշալի հատկություն, որը շատ կարևոր է Չայաստանի նման լեռնային երկրի համար:

Սոճին (*Pinus* L.) Չյուսիսային Չայաստանում ունի լայն տարածում հիմնականում արհեստական տնկարկների շնորհիվ: Սոճուտները, դժնիկանման չիչխանի (*Hippophae rhamnoides* L.) հետ միասին, տարածվում են Սևանի ավազանում՝ զբաղեցնելով ջրից ազատված գոունտները, Դիլիջան քաղաքում և շրջակայքում՝ սկսած Սևանի ոլորաններից մինչև Չաղարծին, ինչպես նաև Դեբեդի և նրա վտակների հովիտներում: Սոճու տնկարկների հիմնումն ակտիվորեն շարունակվում է: Անտառագետների ներկայիս կարծիքի համաձայն, սոճու շատ փոքր բնական կղզյակներ պահպանվել են միայն Լոռու անտառներում:

Չատուկ ուշադրության են արժանի Չյուսիսային Չայաստանի մերձարևադարձային բնույթի անտառները, որոնք տարածվում են Դեբեդի ստորին հոսանքում, զբաղեցնելով ձախափնյա հովտահայաց լեռնալանջերը՝ սկսած Ալավերդի քաղաքից մինչև Ախթալա: Այստեղ ժայռոտ ու քարքարոտ լեռնալանջերին, զիպսակիր և կրային հողերի վրա տարածվում են ջերմասեր ծառերից և թփերից կազմված ցածրահասակ, աշնանը գունագեղ գրավչությամբ զարդարուն անտառները: Թեղու, բոխու, թխկենու, երբեմն կաղնու հետ միասին առատորեն աճում են կովկասյան փռչնին (*Celtis caucasica* Willd.), բթատերև պիստակենին (*Pistacia mutica* Fisch. & C. A. Mey.), սովորական դրախտածառը (*Cotinus coggygria* Scop.), սզնու (*Crateagus* L.) տարբեր տեսակները, ավելի ցածրահասակ թփերի՝ ասպիրակի (*Spiraea* L.), ցաքիի, դժնիկի, չմենու և ջերմասեր նռնենու (*Punica granatum* L.), թզենու (*Ficus carica* L.), խուրմայի (*Diospyros lotus* L.) և զկռենու (*Mespilus germanica* L.) հետ միասին:

Հանրահայտ է, որ կենդանի օրգանիզմների և դրանց բնակության միջավայրի պահպանության լավագույն ձևերից է պահպանվող տարածքների ստեղծումը: Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են ըստ չորս կատեգորիայի՝ պետական արգելոցներ (3), ազգային պարկեր (4), պետական արգելավայրեր (26) և բնության հուշարձաններ (230), որոնցից 19-ը բնության կենսաբանական հուշարձաններ են:

Հյուսիսային Հայաստանում (2-րդ բաժնում ընդունված սահմանների համաձայն) կան երեք կատեգորիաների պատկանող պահպանվող տարածքներ՝ 2 ազգային պարկեր («Դիլիջան» և «Սևան»), 13 պետական արգելավայրեր և 9 կենսաբանական հուշարձաններ (տես քարտեզ 2. Հայաստանի անտառները և բնության հատուկ պահպանվող տարածքները):

Ազգային Պարկեր

- **«Դիլիջան» ազգային պարկը** ստեղծվել է 2002 թ. համանուն պետական արգելոցի հիման վրա, որն, իր հերթին, ստեղծվել էր 1958 թ. նախկին Դիլիջանի և Կույբիշևի անտառտնտեսությունների հիման վրա: «Դիլիջան» ազգային պարկը գտնվում է ՀՀ բնապահպանության նախարարության գերատեսչական ենթակայության ներքո:

Ազգային պարկը գտնվում է Տավուշի վարչական մարզի սահմաններում և մտնում է Իջևանի ֆլորիստիկական շրջանի մեջ: Այն զբաղեցնում է 33765 հա և տարածվում է Փոքր Կովկասի լեռնային համակարգի լեռնաշղթաների՝ Փամբակի, Արեգունու, Միափորի, Իջևանի և Հալաբի հովտահայաց լանջերին 1070-2400 մ բարձրությունների վրա: Նրա տարածքով հոսում է Աղստև գետն իր հիմնական վտակներով՝ Հովաջուր, Շտոգանաջուր, Բլղան, Հաղարծին և Գետիկ: Ազգային պարկի տարածքում գտնվում են երկու գեղատեսիլ լճեր՝ Պարզ լիճը (Դիլիջան քաղաքի մոտ, 1400 մ բարձրության վրա) և Տզրկա կամ Գոշա լիճը (Գոշ գյուղի մոտ, 1500 մ բարձրության վրա): Պարկում գտնվում են նաև Բլղանի և Ֆրոլովայի հանքային աղբյուրները, որոնց «Դիլիջան» և «Դիլիջան Ֆրոլովա» արդյունաբերական նշանակությամբ հայտնի հանքային ջրերն ունեն բուժիչ և առողջարար հատկություն մարդու համար:

Ազգային պարկում պահպանվում են հաճարենու և կաղնու կովկասյան տիպի մեզոֆիլ՝ խոնավասեր անտառները, հատապտղային կենու (*Taxus baccata* L.) Հայաստանում եզակի անտառակը, բազմաթիվ հազվագյուտ բույսերի տեսակներ, անտառային կենդանիներ և մի շարք բնական ու պատմաճարտարապետական հուշարձաններ: Ազգային պարկի տարածքը հայտնի է հանգստի և տուրիզմի կազմակերպման համար առկա բարենպաստ պայմաններով:

- **«Սևան» ազգային պարկը** հիմնադրվել է 1978 թ. և զբաղեցնում է 147456 հա: Այն ամբողջությամբ գտնվում է Գեղարքունիքի վարչական մարզի սահմաններում և մտնում է Սևանի ֆլորիստիկական շրջանի մեջ: «Սևան» ազգային պարկը գտնվում է ՀՀ բնապահպանության նախարարության գերատեսչական ենթակայության տակ:

Ազգային պարկը տարածվում է 1900-2000 մ բարձրությունների վրա և զբաղեցնում է Սևանա լճի հայելին և դրան հարող ափամերձ տարածքի ջրից ազատված հատակային գրունտները մինչև շուրջսևանյան ավտոճանապարհը: Այն շրջապատված է Սևանա լիճը երիզող Փամբակի, Արեգունու, Սևանի, Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաներով: Սևանա լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետեր՝ Արգիճին, Մասրիկը, Գավառագետը, Կարճաղբյուրը, Վարդենիսը, Ձկնագետը և այլն: Նրանից սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդան (Ձանգու) գետը:

Ազգային պարկում պահպանվում են տարածաշրջանային ռազմավարական նշանակության Սևանա լճի քաղցրահամ խմելու ջրի պաշարները, էնդեմ ձկնատեսակների (իշխան, սևանի բեղլու) և թռչունների (հայկական որոր) բնակության միջավայրերը, չվող թռչունների հանգստավայրերը, էնդեմ և հազվագյուտ բույսերի աճելավայրերը, բնության և պատմա-ճարտարապետական հուշարձանները: Պարկի տարածքը վաղուց դարձել է ռեկրեացիայի՝ վերականգման, հանգստի և էկոտուրիզմի սիրված տարածք:

Պեական արգելավայրեր

- **«Ախնաբադի կենու պուրակ» արգելավայրը** (25 հա) հիմնադրվել է 1959 թ.: Այն գտնվում է Տավուշի վարչական մարզի տարածքում, ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո: Արգելավայրը տարածվում է Միափորի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջին, Աղավնավանք գյուղի մոտ գտնվող Ախնաբադի եկեղեցու հարևանությամբ, 1400-1700 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում է Հայաստանում հազվագյուտ մշտադալար բարձրաբժեք բնափայտով հայտնի, գեղեցկատես հատապտղային կենին կամ կարմրածառը:
- **«Արզական-Մեղրածորի» արգելավայրը** (13532 հա) հիմնադրվել է 1971 թ.: Այն գտնվում է Կոտայքի մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդանի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Դարալիկ և Մարմարիկ գետերի ավազաններում 1600-2100 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում են անտառային կենդանիներ և հազվագյուտ բույսեր, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:
- **«Արջատխլենու» արգելավայրը** (40 հա) հիմնադրվել է 1958 թ.: Այն գտնվում է Տավուշի մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Իջևանի լեռնաշղթայի վրա, Սառնաջուր գետի աջափնյա գառիթափ լանջին, Գետահովիտ գյուղից վերև, 1500-1800 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում է Հայաստանում հազվագյուտ, գեղեցկատես արժեքավոր բնափայտով հայտնի ծառային տխլենին կամ արջատխլենին (*Corylus colurna* L.):
- **«Բանքսի սոճու» արգելավայրը** (4 հա) հիմնադրվել է 1959 թ.: Այն գտնվում է Կոտայքի մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդանի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի 1800-2000 մ բարձրությունների վրա, Մեղրածոր գյուղի դիմաց, համանուն միջնադարյան եկեղեցու հարևանությամբ: Այստեղ պահպանվում է ներմուծված Բանքսի սոճու (*Pinus banksiana* L.) արհեստական անտառակը:
- **«Գանձաբարի - Վերին Աղդանի» արգելավայրը** (6813 հա) հիմնադրվել է 1971 թ.: Այն գտնվում է Տավուշի մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Աղստև գետի վտակ Պայտաջուր գետի ավազանում 1500-2000 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում են անտառային կենդանիները:
- **«Գետիկի» արգելավայրը** (5728 հա) հիմնադրվել է 1971 թ.: Այն գտնվում է Գեղարքունիքի մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ճամբարակի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Գետիկ գետի ավազանում, Արեգունու լեռնաշղթայի 1500-2700 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում են անտառային կենդանիները:
- **«Գիհու նոսրանտառային» արգելավայրը** (3312 հա) հիմնադրվել է 1958 թ.: Այն գտնվում է Գեղարքունիքի մարզում, ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կազմում: Արգելավայրը տարածվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաների

Այստեղ պահպանվում են հիմնականում գիհու նոսրանտառները և կաղնու մնացորդային անտառակը:

- **«Գյուլագարակի» արգելավայրը** (2576 հա) հիմնադրվել է 1958 թ.: Այն գտնվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Բազումի լեռնաշղթայի Քարհանքջուր գետակի հովտում 1400-1900 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում են սոճու դարավոր անտառներ (կան 130-150 տարեկան ծառեր), արժեքավոր ծառատեսակներ և հազվագյուտ անտառային խոտաբույսեր:
- **«Զիկատար» արգելավայրը** (150 հա) հիմնադրվել է 2010 թ.: Այն գտնվում է Տավուշի մարզում, ՀՀ բնապահպանության նախարարության «Անտառային գիտափորձարարական կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում: Արգելավայրը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի Զիկատար լեռնագագաթի հյուսիս-արևելյան դիրքադրության լանջերին, 1150-1450 մ բարձրությունների վրա: Այստեղ հիմնականում պահպանվում են անտառային բնական էկոհամակարգերը, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանությունը:
- **«Իջևանի» արգելավայրը** (5908 հա) հիմնադրվել է 1971 թ.: Այն գտնվում է Իջևանի մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Իջևանի և Կայենի լեռնաշղթաների լանջերին 900-2100 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում են անտառային կենդանիները:
- **«Կովկասյան մրտավարդի» արգելավայրը** (761 հա) հիմնադրվել է 1959 թ.: Այն գտնվում է Լոռու մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Փամբակի լեռնաշղթայի հյուսիսհայաց լեռնալանջին, Մեղրաձոր - Մարգահովիտ գյուղերի միջև ընկած գրունտային ճանապարհի մոտ, 1900-2200 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում է Հայաստանում հազվագյուտ կովկասյան մրտավարդի (*Rhododendron caucasicum* Pall.) բուսուտներից մեկը: Հյուսիսային Հայաստանը (Ջավախքի, Բազումի, Հալաբի, Փամբակի լեռնաշղթաներ) հանդիսանում է կովկասյան մրտավարդի ընդհանուր տարածման ծայր հարավային սահմանը:
- **«Հանքավանի ջրաբանական» արգելավայրը** (5202 հա) հիմնադրվել է 1981 թ.: Այն գտնվում է Կոտայքի մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդանի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Մարմարիկ գետի վերին հոսանքում, 2000-2300 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում է «Հանքավան» հանքային ջրի սնման ավազանը:
- **«Մարգահովտի» արգելավայրը** (2814 հա) հիմնադրվել է 1971 թ.: Այն գտնվում է Լոռու մարզում, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի անտառտնտեսության կազմում: Արգելավայրը տարածվում է Փամբակի լեռնաշղթայի հյուսիսհայաց լանջերին 1900-2200 մ բարձրությունների վրա: Այստեղ պահպանվում են անտառային կենդանիները:


Բնության կենսաբանական հուշարձաններ

- **«Ալայան գորգ»**` գտնվում է Կոտայքի մարզում, Մեղրաձոր-Ֆիլիստով գրունտային ճանապարհի ամենաբարձր` Փամբակի լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, 3000 մ բարձրության վրա:
- **«Գետահովտի մամռապատ ժայռ»**` գտնվում է Տավուշի մարզում, Գետահովիտ գյուղի մոտ, Սառնաջուր գետի ձախ ափին, 700-800 մ բարձրությունների վրա: Ուղղահայաց

մշտապես ջրային հոսքով խոնավացող ժայռի վրա աճում է Հայաստանի հազվագյուտ պտերմերից մեկը՝ Ադիանտում վեներայի վարսը կամ Գիսակ աստղկավարսը (*Adiantum capillus-veneris* L.), որը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:

- **«Ենթալայան մարգագետին»**՝ գտնվում է Գեղարքունիքի մարզում, Դրախտիկ գյուղի մոտ, 2200 մ բարձրության վրա:
- **«Արտավարդ կովկասյան»**՝ գտնվում է Լոռու մարզում, Պուշկինի լեռնանցքի բարձրադիր մասում: Այն կովկասյան մրտավարդի գեղեցկատես բուսուտ է:
- **«Նոյեմբերյանի սոսի»**՝ գտնվում է Տավուշի մարզում, Ջորական գյուղի մոտ: Այն երկարակյաց արևելյան սոսու (*Platanus orientalis* L.) բազմաթիվ հաստ բներով և փչակով տնկովի դարավոր ծառ է:
- **«Ռելիկտային կրկես Քյոռօղլի լեռան մոտ»**՝ գտնվում է Կոտայքի մարզում, Արտավազ գյուղի մոտ: Բնական կրկես է յուրահատուկ հազվագյուտ տեսակներով հարուստ ֆլորայով:
- **«Սարի գյուղի սոսի»**՝ գտնվում է Տավուշի մարզում, Սարիգյուղի մոտ: Արևելյան սոսու տնկովի դարավոր ծառ է:
- **«Վարդան Մամիկոնյանի կաղնի»**՝ գտնվում է Տավուշի մարզում, Ակնաղբյուր գյուղի տարածքում: Դարավոր կաղնու չորացած, իսկ հետագայում կայծակից տապալված ծառ է, որը, ըստ ավանդության, տնկել է հայ զորավար Վարդան Մամիկոնյանը:
- **«Տանձուտ»**՝ գտնվում է Տավուշի մարզի Աղավնավանք գյուղի մոտ:

ՔՐԴՏԵՉ 2. Հայաստանի անտառները և բնության հատուկ պահպանվող տարածքները



Չայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

Պետական արգելոցներ և ազգային պարկեր

1. «Խոսրովի անտառ» պետական արգելոց
2. «Էրեբունի» պետական արգելոց
3. «Շիկահող» պետական արգելոց
4. «Արփի լիճ» ազգային պարկ
5. «Դիլիջան» ազգային պարկ
6. «Սևան» ազգային պարկ
7. «Արևիկ» ազգային պարկ

Պետական արգելավայրեր

8. «Զիկատար»
9. «Գյուլագարակի»
10. «Իջևանի»
11. «Արջատխլենու»
12. «Գանձաքարի-Վերին Աղղանի»
13. «Մարգահովտի»
14. «Չանքավանի ջրաբանական»
15. «Կովկասյան մրտավարդի»
16. «Ախնաբադի կենու պուրակ»
17. «Գետիկի»
18. «Արզական-Մեղրածորի»
19. «Բանքսի սոճու»
20. «Արագածի ալպյան»
21. «Գիհու նոսրանտառային»
22. «Արարատի որդան կարմիր»
23. «Խոր Վիրապ»
24. «Գոռավանի ավազուտներ»
25. «Եղեգիսի»
26. «Ջերմուկի ջրաբանական»
27. «Ջերմուկի անտառային»
28. «Յերիերի նոսրանտառային»
29. «Սև լիճ»
30. «Գորիսի»
31. «Չանգեզուր»
32. «Բողաքարի»
33. «Սոսու պուրակ»

Պլանավորված պահպանվող տարածքներ

34. «Ջերմուկ»
35. «Գնիշիկ»
36. «Խուստուկի»

Անտառային արտադրանքի կողմնակի կամ ոչ բնափայտային օգտագործումն անտառի կառավարման կարևոր բաղադրիչներից է: Արդյունավետ կազմակերպելու դեպքում այն կարող է հանդիսանալ անտառային պաշարների կայուն կառավարման մի մաս, ինչպես նաև նպաստել տնտեսական և բնապահպանական բազմաբնույթ խնդիրների լուծմանը, ապահովել անտառի երկարաժամկետ և արդյունավետ օգտագործումը: Կողմնակի անտառօգտագործումը կարելի է իրականացնել հետևյալ ձևերով.

- խտտհունձ
- արածեցում
- մեղվաբուծություն
- վայրի պտուղների հավաք
- սննդային, դեղատու, տեխնիկական և այլ օգտակար բույսերի հավաք
- ուտելի սնկերի հավաք
- խեժի հավաք խեժատու բույսերից
- անտառի առողջարարական և վերականգնողական ներուժի օգտագործում
- անտառի հետազոտական և ուսուցողական հնարավորությունների օգտագործում
- անտառի հոգևոր և գեղագիտական ներուժի օգտագործում

ՀՀ անտառային օրենսգրքում, որն ընդունվել է 2005 թ., ամրագրվել են անտառային պաշարների արդյունավետ օգտագործման տարբեր ձևերը: Դրանց թվում, բնափայտի և այլ անտառանյութի (կոճղ, կեղև և այլն) մթերման հետ միաժամանակ, նշվում են կողմնակի կամ ոչ բնափայտային անտառօգտագործումը, մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառի օգտագործումը և անտառօգտագործման այլ ձևեր:

Անտառային օրենսգրքը սահմանում է նաև ոչ բնափայտային անտառօգտագործման ձևերը և հիմնական սկզբունքները: Մասնավորապես, նշվում է, որ անտառներում և անտառային հողերի վրա ոչ բնափայտային անտառանյութի մթերումը, փեթակների տեղադրումը, խտտհունձը, արածեցումը և այլն պետք է կատարվի անտառօգտագործման պայմանագրի և անտառային տոմսի հիման վրա՝ առանց անտառին վնաս պատճառելու: Նույն, վնաս չպատճառելու պայմանով, վարձակալության պայմանագրով անտառային հողերի վրա կարող է իրականացվել նաև մշակաբույսերի աճեցում, տնկադաշտերի ստեղծում և այլն:

Ըստ օրենսգրքի, քաղաքացիներն իրավունք ունեն առանց որևէ թույլտվության գտնվելու պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անտառներում՝ հանգստանալու և անձնական օգտագործման նպատակով վայրի պտուղներ, սերմեր, հատապտուղներ, սնկեր, բույսեր հավաքելու համար: Այդ դեպքում անհրաժեշտ է անտառում պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, թույլ չտալ հատումներ կամ ծառերի և թփերի կտրատում, անտառի աղտոտում, մրջնանոցների, թռչունների և կենդանիների բնատեղերի ոչնչացում և այլ խախտումներ:

Ի տարբերություն անձնական օգտագործման նպատակով հավաքվող անտառանյութի, ոչ բնափայտային անտառանյութի մթերումը և անտառից դուրս բերումը պետք է կատարվի թույլտվության՝ անտառային տոմսի հիման վրա՝ համապատասխան վճարից հետո: Անտառային տոմսում տրվում են տեղեկություններ տարածքի մասին, մասնավորապես, տարածքի կոնկրետ տեղադրությունը և մակերեսը, օգտագործման չափը, ժամկետները և սակագինը: Այդ տարածքներում ծառերի հատումը, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված բույսերի հավաքը, ինչպես նաև անտառներում անասուններ արածեցնելն արգելվում է:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ը իրականացնում է պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության, արդյունավետ օգտագործման և անտառների ու անտառային հողերի հետ կապված այլ գործառնություններ: «Հայանտառ»-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ 19 մասնաճյուղերը (անտառտնտեսությունները)՝ հանրապետության տարբեր մարզերում: Ոչ բնափայտային անտառ-

օգտագործման տարբեր ձևերի իրականացման հետ միաժամանակ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ը կատարում է կողմնակի անտառօգտագործման հետ կապված սպասարկման ծառայություններ, այդ թվում, տալիս է անտառի ոչ բնափայտային արտադրանքի մթերման թույլտվություն՝ անտառային տոմս, որը կարելի է ստանալ համապատասխան անտառտնտեսությունից (տես Հավելված 1):

Ինչ վերաբերում է բնության հատուկ պահպանվող տարածքներին, ապա անտառի ոչ բնափայտային արտադրանքի օգտագործումը սահմանափակվում է դրանց պահպանության ռեժիմներով՝ ըստ պահպանվող տարածքի կատեգորիայի: Այսպես, ազգային պարկերի տնտեսական գոտում թույլատրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բուսական ռեսուրսների, այդ թվում, անտառի ոչ բնափայտային արտադրանքի օգտագործում, որի համար պետք է ստանալ թույլտվություն համապատասխան լիազորություններ ունեցող կառավարման մարմնից:

6.

ՀՅՈՒՄԱՆԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՉ ԲՆԱԹԱՅՏԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ



ՇԱՌԵՐ ԵՎ ԹՓԵՐ

Ասպիրակ աղեղնատեր, թագուհի մարգագ

Spiraea crenata L.
Таволга городчатая
(Վարդագգիներ - Rosaceae)

Տերևաթափ խիտ ճյուղավորված թուփ է 50-100 սմ բարձրության: Տերևները էլիպսաձև են կամ ձվաձև, սեպաձև հիմքով: Ծաղիկները մանր են, սպիտակ, երկար կոթուններով, խմբված վահանիկանման ծաղկաբույլերում: Պտուղը տերևապտուղ է, մանր թևավոր սերմերով: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 1000-1800 մ բարձրությունների վրա, սաղարթավոր անտառների բացատներում, անտառեզրերին, նոսրանտառներում, ինչպես նաև չոր քարքարոտ լանջերին: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է և ունի լայն կիրառություն կանաչ շինարարության մեջ: Շվիտամիտով հարուստ դեղաբույս է:

Արոսենի սովորական, ծտի խնձոր

Sorbus aucuparia L.
Рябина обыкновенная
(Վարդագգիներ - Rosaceae)

Կլորավուն սաղարթով ծառ է մինչև 15 մ բարձրության: Տերևները կենտ փետրաձև են, կազմված երկարավուն սղոցաեզր տերևիկներից: Ծաղիկները հնգատիպ են, սպիտակ պսակաթերթերով, խմբված վահանիկանման ծաղկաբույլերում: Պտուղը խնձորանման է, վառ նարնջակարմիր, հյութալի պտղամսով և 3 եռանիստ սերմերով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին: Պտուղները ծառի վրա պահպանվում են ամբողջ ձմեռ:

Աճում է 1600-2500 մ բարձրությունների վրա, լուսավոր անտառներում, անտառեզրերին: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի և Հայաստանի մնացած անտառային ֆլորիստիկական շրջաններում:

Պտուղները դեղատու են: Պարունակում են վիտամիններ, սորբինային, ասկորբինային և այլ թթուներ, կարոտիններ, շաքարներ և այլն: Դրանք օգտագործվում են բժշկության մեջ որպես պոլիվիտամինների աղբյուր: Սննդային բույս է: Պտուղներն օգտագործվում են հրուշակագործության, խմիչքների արտադրության, քացախ ստանալու համար: Մեղրատու է: Ունի ամուր բնափայտ, որն օգտագործվում է ատաղձագործության մեջ:

Բալենի մահալեբի

Cerasus mahaleb (L.) Mill.
Вишня антипка, кучина, магалевка
(Վարդագգիներ - Rosaceae)

Կլորավուն սաղարթով ծառ է 4-10 մ բարձրության: Տերևները մուգ կանաչ են, լայն ձվաձև կամ կլորավուն, սղոցաեզր, զարգանում են ավելի վաղ՝ քան ծաղիկները: Ծաղիկները մանր են, սպիտակ պսակաթերթերով, երկար կոթուններով, խմբված վահանիկանման ողկյուղներում: Կորիզապտուղը մանր է, ձվաձև, սև, մսալի պտղամսով, 1 փայտացած կլորավուն կորիզով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 600-1800 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, ձորակներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Պտուղները պարունակում են շաքարներ, հատկապես սախարոզա, օրգանական թթուներ, ներկանյութեր և այլն, կորիզն՝ ամիգդալին, ճարպայուղեր, եթերայուղ: Պտուղն օգտագործվում է թարմ և վերամշակված՝ մուրաբա, կոմպոտ, դոշաք, հյութ, գինի պատրաստելու համար, կորիզը՝ բժշկության մեջ:



▲ Ասպիրակ աղեղնաեզր
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



▲ Արոսենի սովորական
© Lida Onishenko (www.plantarium.ru)



▲ Բալենի մահալերի
© Ivelina Assyova (www.nahuby.sk)

Բաղեղ սովորական

Hedera helix L.
Плющ обыкновенный
(Արալիազգիներ - Araliaceae)

Մշտադալար լիան է, փայտացած սողացող ցողունով: Տերևները հերթադիր են, նետաձև, կենտրոնական ձգված և 2 եզրային ավելի փոքր բլթակներով: Ծաղիկները մանր են, աննկատ, խմբված հովանոցանման ծաղկաբույլում: Պտուղը գնդաձև է, սև: Ծաղկում է սեպտեմբեր-հոկտեմբերին, պտղաբերում՝ հոկտեմբերից մինչև դեկտեմբերի սկիզբը:

Աճում է 700-800 մ բարձրությունների վրա, խոնավ և սովորոտ անտառներում, կառչում է ծառերից, ժայռերից, սողում քարերի և հողի վրա: Հանդիպում է Իջևանի ֆլորիստիկական շրջանում, ինչպես նաև Ջանգեզուրում:

Գեղազարդային բույս է: Գեղեցիկ տերևների, արագաճ խիտ ճյուղավորված, գետնի վրա սողացող կամ ուղղահայց պատերի ու ժայռերի վրա մագլցող ցողունի շնորհիվ օգտագործվում է կանաչ շինարարության մեջ:

Բարդի դողդոջուն, կաղամախի

Populus tremula L.
Тополь дрожащий, осина
(Ուռազգիներ - Salicaceae)

Տերևաթափ ծառ է մինչև 15 մ բարձրության: Տերևները կլորավուն են կամ ձվաձև, աղեղնաեզր, երկարակոթ: Ծաղիկները մանր են, միասեռ, խմբված կատվիկ ծաղկաբույլում: Պտուղը տուփիկ է, վերևից բացվող 2-4 փեղկերով: Սերմերը բազմաթիվ են, մանր, մուգ գունավորված, հիմքում մետաքսյա մազիկների փնջով: Ծաղկում է մարտ-ապրիլին, պտղաբերում՝ մայիսին:

Աճում է մինչև 2400 մ բարձրության վրա, բոլոր տիպի անտառներում և հատկապես անտառի վերին սահմանի մոտ՝ անտառի և մարգագետնի սահմանագծի երկայնքով: Հանդիպում է Լոռու, Իջևանի և Ապարանի, ինչպես նաև Գեղամի, Դարեղեգիսի, Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Ունի տնտեսական նշանակություն: Ամուր և թեթև բնափայտն օգտագործվում է որպես շինանյութ և վառելիքայտ, ինչպես նաև լուցկու արտադրության համար: Օգտագործվում է դաշտապաշտպան անտառաշերտերի, փլվածքների և սողքերի ամրացման համար: Դեղաբույս է: Կեղևը պարունակում է դաբաղանյութեր, տերևը հարուստ է վիտամիններով, բողբոջը՝ եթերայուղերով: Գեղազարդային տեսակ է:

Բեկտեմի լաստեմիանման

Frangula alnus Mill.
Крушина ольховидная
(Դժմիկազգիներ-Rhamnaceae)

Փոքրիկ ծառ կամ թուփ է մինչև 7 մ բարձրության: Տերևները փայլուն են, երկարավուն էլիպսաձև կամ ձվաձև, սեպաձև հիմքով, կարճ կոթունով: Ծաղիկները կոթունավոր են, դեղնավուն պսակով, խմբված տերևածոցերում փնջերով՝ 2-7-ական: Պտուղը գնդաձև է, սև, սերմերը՝ կտուցանման ելունդով: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 500-1500 մ բարձրությունների վրա, անտառներում: Հանդիպում է հազվադեպ Իջևանի, ինչպես նաև Դարեղեգիսի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Կեղևն օգտագործվում է որպես լուծողական:



▲ Բաղեղ սվորական
 © WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



◀ Բարդի դողդոջուն
 © Անուշ Ներսեսյան



▲ Բարդի դողդոջուն (ծաղկաբույլ)
 © Sergey Mayorov (www.plantarium.ru)



▶ Բեկտենի լաստենիանման
 © Vasyi Heluta (www.plantarium.ru)

Բոխի արևելյան (ղաժի)

Carpinus orientalis Mill.
Граб восточный, грабинник
(Տխիլազգիներ - *Corylaceae*)

Տերևաթափ ծառ է 8-15 մ բարձրությամբ: Տերևները ձվաձև են կամ ձվաէլիպսաձև, ատամնաեզր, սրագագաթ: Ծաղիկները մանր են, խմբված միասեռ կատվիկ ծաղկաբույլում: Ընկույզիկն օվալ է, թեթևակի սեղմված, շրջապատված բարակաթաղանթ լայն ձվաձև պտղագավաթով: Ծաղկում է ապրիլին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 500-1300 մ բարձրությունների վրա, երբեմն հասնում է մինչև 1600 մ բարձրության, անտառներում, հարավային դիրքադրության արևկող լեռնալանջերին, թույլ զարգացած հողերի վրա: Հանդիսանում է անտառակազմող հիմնական ծառատեսակներից մեկը և վրացական կաղնու (*Quercus iberica* Stev.) հետ կազմում է կաղնուտա-բոխուտային անտառներ, իսկ երբեմն՝ միատարր բոխուտներ: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Բոխին Հայաստանում, այդ թվում նաև Հյուսիսային Հայաստանում, ներկայացված է նաև մեկ այլ սովորական բոխի (*Carpinus betulus* L.) տեսակով:

Ունի տնտեսական նշանակություն: Բնափայտը շատ խիտ է, ամուր և դիմացկուն, օգտագործվում է տնայնագործական արտադրանքի համար: Հանդիսանում է լավ վառելիքայտ:

Գերիմաստի

Viburnum lantana L.
Калина гордовина
(Այծատերևազգիներ - *Caprifoliaceae*)

Խիտ ճյուղավորված թուփ է 1-2 մ բարձրության: Տերևները երկարակոթ են, օվալաձև սրածայր, սղոցաեզր, մի փոքր կնճռոտ տերևաթիթեղով, ցողունի վրա հակադիր դասավորված: Սպիտակ ծաղիկները, իսկ հետագայում պտուղները շատ են, խմբված գագաթնային հովանոցանման խիտ ծաղկաբույլում: Պտուղն օվալաձև միասեռ կորիզապտուղ է: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է մինչև 2300 մ բարձրությունների վրա: Հանդիպում է ամենուրեք, անտառի ստորին սահմանից մինչև վերին սահմանը, անտառում որպես ենթանտառի թփատեսակ, թփերի մացառուտներում: Տարածված է Հայաստանի բոլոր անտառային շրջաններում:

Գեղազարդային թուփ է, կարող է օգտագործվել այգիների ու պուրակների կանաչապատման համար:

Գիհի գարշահոտ, ցրտենի

Juniperus foetidissima Willd.
Можжевельник вонючий
(Կիպարիսազգիներ - *Cupressaceae*)

Մշտադալար, անդուր հոտով, ուղիղ բրգաձև սաղարթով մինչև 16 մ բարձրության ծառ է: Տերևները մուգ կանաչ են, գծային-երկարավուն, ասեղնածայր, ծակող: Հասուն կոները կլորավուն են, սևակարմրավուն: Ծաղկում է ապրիլ ամսին, պտղաբերում՝ մայիս-հունիսին: Երկարակյաց է, ապրում է 500 և ավելի տարի:

Աճում է 700-2000 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ և ժայռոտ լանջերին: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Հաճելի խեժային բուրմունքով բազմապտուղ գիհին (*Juniperus polycarpos* K. Koch) Հայաստանում հանդիպում է նաև Ապարանի և Երևանի ֆլորիստիկական շրջաններում («խոսրովի անտառ» արգելոց):

Գիհիների բնափայտը ամուր է, դիմացկուն, ներծծված խեժերով և այլ նյութերով: Այն վաղուց ունի բազմաբնույթ կիրառություն: Քաղցրավուն պտուղները պարունակում են եթերայուղեր, խեժեր, օրգանական թթուներ, շաքար, յունիպերին դառը գլյուկոզիդ և այլ նյութեր: Դրանք կիրառվում են դեղագործական նպատակով և սննդի արդյունաբերության մեջ որպես համեմունք: Կոները օգտագործվում են նաև ժողովրդական բժշկության մեջ: Փշատերևները և երիտասարդ ընձյուղները նույնպես պարունակում են եթերայուղեր, ունեն հակաանեմիկ հատկություն և օգտագործվում են անասնաբուժության մեջ:



▲ Բոխի արևելյան
© Անուշ Ներսեսյան



▲ Գերիմաստի
© Vasyl Heluta (www.plantarium.ru)



◀ Գիլի գարշահոտ
© Pavel Evseenkov (www.plantarium.ru)

Դափնյակ (տերևատ) սովորական

Daphne mezereum L.
Волчегодник обыкновенный, волчье лыко
(Գոմնակազգիներ – Thymelaeaceae)

Տերևաթափ դեղնամոխրագույն կեղևով թուփ է 1,5-2 մ բարձրության: Ծաղիկները մուգ վարդագույն են, քառաբլթակ, դասավորված 3-5-ական ցողունի երկարությամբ, նախորդ տարվա տերևների ծոցերում, ծաղկում են վաղ գարնանը մինչև տերևների զարգանալը: Տերևները խոշոր են, երկարավուն նշտարած, բարակ, գրեթե թափանցիկ տերևաթիթեղով: Պտուղը վառ կարմիր հատապտուղ է: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 1700-2200 մ բարձրությունների վրա, իսկ երբեմն հասնում է մինչև 2500 մ բարձրության: Հանդիպում է կաղնու, կաղնու-բոխու և բոխու անտառներում, անտառի վերին սահմանի մոտ: Տարածված է Լոռու, Իջևանի, Ապարանի և Սևանի ֆլորիստիկական շրջաններում, ինչպես նաև Զանգեզուրում:

Դեղաբույս է: Պարունակում է տարբեր քիմիական նյութեր՝ գլիկոզիդներ, սապոնիններ, ճարպանյութեր, շաքարներ, դեղին ներկանյութ և այլն: Օգտագործվում է հոդաբորբերի, այտուցների, մաշկային որոշ հիվանդությունների բուժման համար:



Պտուղը թունավոր է:

Դժնիկ (եղջերափուշ) լուծողական

Rhamnus cathartica L.
Жостер слабительный
(Դժնիկազգիներ – Rhamnaceae)

Թուփ կամ փոքր ծառ է մինչև 8 մ բարձրության, սևավուն ճաքճքած կեղևով և հակադիր դասավորված փշոտ ճյուղերով: Տերևները խոշոր են, էլիպսաձև կամ օվալաձև, երբեմն կլորավուն: Ծաղիկները մանր են, միասեռ, քառատիպ՝ 10-15-ական փնջերով խմբված ճյուղերի գագաթներին: Պտուղը կլորավուն, սև, փայլուն, հյութեղ կորիզապտուղ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 600-2200 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, թփուտների կազմում, հատատեղերում, չոր քարքարոտ լանջերին: Տարածված է գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Բնափայտն օգտագործվում է ատաղձագործության մեջ: Պտուղն ուտելի չէ, պարունակում է ներկանյութեր: Այն, ինչպես նաև կեղևը, պարունակում է անտրագլիկոզիդներ և օգտագործվում որպես լուծողական: Մեղրատու բույս է:

Դրախտածառ (նարնջափայտ) սովորական

Cotinus coggygria Scop.
Скумпия обыкновенная, желтинник
(Աղտորազգիներ – Anacardiaceae)

Փռված թուփ է 3-5 մ բարձրության: Տերևները կաշեկերպ են, հակածված կամ գրեթե կլորավուն, անբողջաեզր, վերևից՝ մուգ կանաչ, ներքևից՝ թխակապույտ փառով, ամառվա վերջին՝ դեղնող, ցրտերի հետ՝ կարմրող: Ծաղկաբույլերը գագաթնային են, բազմաթիվ չզարգացած ծաղիկների փետրածև մազիկներով և երկարացած ծաղկակոթերով: Ծաղիկները հնգատիպ են, մանր, կանաչադեղնավուն: Պտուղը հակածված հատապտուղ է, սկզբում՝ կանաչ, հասունանալիս՝ սևացող: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 500-1400 մ բարձրությունների վրա, հարավային դիրքադրության չոր, քարքարոտ լեռնալանջերին: Տարածված է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Երևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Բնափայտը նարնջագույն է (այստեղից ցեղի հայերեն նարնջափայտ անունը): Դրանից ստացվում է դեղին և նարնջագույն ներկ: Տերևները պարունակում են տանին, որի շաքարաման փոշին օգտագործվում է որպես հակաբորբոքային, ախտահանիչ և հականեխիչ միջոց: Գեղազարդային թուփ է: Օգտագործվում է դաշտապաշտպան տնկարկներում:



▲
Դափնյակ սովորական
© Sergey Glotov (www.plantarium.ru)



▲
Դժնիկ լուծողական
© Մվետլանա Հարությունյան

Դրախտածառ սովորական
© Նազիկ Խանջյան



Չկոենի (գորենի) գերմանական

Mespilus germanica L.
Мушмула немецкая (обыкновенная)
(Վարդագինիներ - Rosaceae)

Թուփ կամ փոքր ծառ է 1,5-6 մ բարձրության: Տերևները երկարավուն էլիպսաձև են, սղոցաեզր, ներքևից սպիտակավուն թավոտությամբ: Ծաղիկները մեկական են, խոշոր, սպիտակ պսակաթերթերով: Պտուղը տանձաձև է, գորշ կամ կարմրավուն, դարչնագույն պտղամսով և ամուր մուգ գույնի կորիզներով: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:

Աճում է 600-2000 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, նոսրանտառներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի և Ապարանի, ինչպես նաև Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Պտուղն ունի թթվաշ, տոփա, սակայն հաճելի համ և սիրված միրգ է: Հասուն պտուղները պարունակում են շաքարներ, խնձորաթթու, կարոտին, վիտամին C և այլն: Տերևները և խակ պտուղները պարունակում են դաբաղանյութեր և ունեն կապող հատկություն, որի համար օգտագործվում են ժողովրդական բժշկության մեջ: Ունի լավ հղկվող ամուր բնափայտ, որը օգտագործվում է ստաղծագործության մեջ: Մեղրատու բույս է:

Ընկուզենի սովորական

Juglans regia L.
Орех грецкий
(Ընկուզագինիներ - Juglandaceae)

Հզոր, խիտ ճյուղավորված, մեծ սաղարթով, սովորաբար ծառ է մինչև 35 մ բարձրության: Տերևները կենտ փետրաձև են, 5-9 զույգ խոշոր էլիպսաձև տերևիկներով: Ծաղիկները միատուն են, միասեռ, արեգակորենները՝ երկարավուն կախված կատվիկ ծաղկաբույլերում, վարսանդավորները՝ 2-4-ական ճյուղերի գագաթներին: Պտուղը գրեթե զնդաձև է, մուգ կանաչ, գեղձային կետերով ծածկված: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ սեպտեմբերին:

Աճում է 400-2000 մ բարձրությունների վրա, քարքարոտ խոր ձորերում, կաղնու-բոխու խառն անտառներում, օդային հոսանքներից պաշտպանված տաք ու խոնավ միկրոկլիմայի պայմաններում: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Մշակվում է գրեթե ամբողջ Հայաստանում:

Հայտնի է բարձրարժեք բնափայտով և համեղ ու սննդարար պտուղներով: Պտուղները լայնորեն օգտագործվում են ուտելու համար, հրուշակագործության և խոհարարության մեջ: Պտուղներից ստացվող յուղն օգտագործվում է նկարչության մեջ: Տերևները պարունակում են յուզլանդին ալկալոիդը, որը կիրառվում է բժշկության մեջ: Գեղագարդային տեսակ է, նաև՝ ներկատու:

Թանթրվենի (կտտկենի) սև

Sambucus nigra L.
Бузина черная
(Այծատերևագինիներ - Caprifoliaceae)


Խիտ ճյուղավորված թուփ է 3-6 մ բարձրության, բնի խցանային միջուկով և բաց մոխրագույն կեղևով: Տերևները կենտ փետրաձև են, ձվաձև սրագագաթ տերևիկներով, ցողունի վրա հակադիր դասավորությամբ: Ծաղիկները մանր են, հնգատիպ, դեղնասպիտակավուն պսակաթերթերով: Ծաղկաբույլը խիտ է, խոշոր, հովանոցանման: Պտուղը գնդաձև, փայլուն, հյութալի կորիզապտուղ է, հասուն ժամանակ մուգ մանուշակագույն կամ սևացող: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հոկտեմբերին:

Աճում է 600-1500 մ բարձրությունների վրա, սովորաբար անտառներում, անտառեզրերին, գետերի խոնավ ափերին: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, ինչպես նաև Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Ծաղիկները պարունակում են սամբունիզոլին գլիկոզիդ, եթերայուղ, խեժ, վալերիանաթթու, պտուղները՝ շաքար, օրգանական թթուներ, ներկանյութեր, իսկ սերմերը՝ ճարպ: Ծաղիկներն ունեն միզամուղ, քրտնաբեր, ախտահանող, հակաբորբոքային հատկություն: Պտուղները օգտագործվում են որպես գինու և լիկյորների ներկանյութ:



▲
Ջկրենի գերմանական
© Անուշ Ներսեսյան



▲
Ընկուզենի սովորական
© Նազիկ Խանջյան

Թանթրվենի սև
© Սվետլանա Հարությունյան
▼



Թեղի (ծփի) էլիպսաձև

Ulmus eliptica K. Koch
Вязь эллиптический
(Թեղազգիներ - Ulmaceae)

Խիտ սաղարթով տերևաթափ ծառ է մինչև 30 մ բարձրության: Տերևները էլիպսաձև են, սուր գագաթով, վերևից կոշտ խորդուբորդ, կարճակոթ: Ծաղիկները մանր են, երկսեռ, փնջերով, ծաղկում են մինչև տերևների զարգանալը: Պտուղը միասերմ թևավոր ընկույզիկ է: Ծաղկում է մարտին, պտղակալում՝ ապրիլ-մայիսին:

Աճում է 1300-2100 մ բարձրությունների վրա, կաղնու, կաղնու-բոխու, հաճարենու խառը անտառներում, գետափերի ողողվող անտառաշերտերում: Տարածված է Իջևանի և Ապարանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Բնափայտը ջրադիմացկուն է և օգտագործվում է շինարարության ու կահույքի արտադրության մեջ: Տերևները և խակ պտուղները պարունակում են վիտամիններ, կեղևը՝ դեղին ներկանյութ: Գեղազարդային տեսակ է:

Թզենի սովորական

Ficus carica L.
Инжир обыкновенный, винная ягода
(Թզազգիներ - Caricaceae)

Տերևաթափ, սպիտակ կաթնահյութով, երկտուն ծառ է 5-10 մ բարձրության: Տերևները խոշոր են, ամբողջական կամ մատնածև բլթակավոր, վերևից՝ մուգ կանաչ, անողորկ կոշտ ու խորդուբորդ, ներքևից՝ սպիտակավուն թավոտությամբ: Ծաղիկները բազմաթիվ են, շատ մանր: Փոշոտումը կատարվում է փոքրիկ միջատների՝ բլաստոֆագերի միջոցով: Իգական ծաղկաբույլերից առաջանում է խոշոր հյութալի տանձանման պտղաբույլը՝ թուզը: Արական ծաղկաբույլերը մանր են, կոշտ: Ծաղկում է ապրիլին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 500-1300 մ բարձրությունների վրա, կիրճերում և գետահովիտներում՝ կրային հողերի վրա, արևկող քարքարոտ լանջերին: Տարածված է Իջևանի, ինչպես նաև Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Պտղաբույլը համեղ և սննդարար միրգ է: Այն պարունակում է շաքարներ, վիտամիններ, պեկտինային նյութեր, օրգանական թթուներ, սպիտակուցներ և այլ նյութեր: Օգտագործվում է թարմ և վերամշակված: Բնափայտը նույնպես կիրառելի է:

Թխենի սովորական

Radus avium Mill.
Черемуха обыкновенная
(Վարդազգիներ - Rosaceae)

Թուփ կամ փոքր ծառ է մինչև 6 մ բարձրության: Տերևները երկարավուն էլիպսաձև են, սղոցաեզր, սրածայր, կլորավուն հիմքով, կարճակոթ: Ծաղիկները հնգատիպ են, սպիտակ պսակաթերթերով, հաճելի հոտով: Ծաղկաբույլը երկարավուն է, ողկույզաձև, կազմված մինչև 20 ծաղիկներից: Պտուղը գնդաձև, հյութալի, սև գույնի կորիզապտուղ է, փայտացած կորիզով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1500-2200 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, ձորակներում, գետերի ափերին: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է դաբաղանյութեր, շաքար, օրգանական թթուներ, ամիգդալին գլիկոզիդ, ֆիտոնցիդներ և այլն: Ունի կապող հատկություն և կիրառվում է ժողովրդական բժկության մեջ որպես հակալուծողական միջոց: Գեղազարդային տեսակ է, նաև՝ մեղրատու:



▲ Թեղի էլիպսաձև
© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան



▲ Թզենի սովորական
© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան



▲ Թխենի սովորական
© Vasył Heluta (www.plantarium.ru)

Թխկի դաշտային

Acer campestre L.
Клен полевой
(Թխկազգիներ - Aceraceae)

Ծառ է 25-30 մ բարձրությամբ: Տերևները մատնաձև են, 3-5 բլթակներով, սրտաձև հիմքով, երկար կոթունով: Ծաղիկները կանաչադեղնավուն են, խմբված սակավաթիվ ծաղկաբույլերում: Պտուղը թևավոր է, կազմված 2 միասերմ ընկույզիկանման պտղիկներից և դրանցից շատ ավելի երկար հորիզոնական դասավորված թաղանթանման թևերից: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 1500-2200 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, ձորակներում, գետերի ափերին: Հայաստանում թխկու ամենատարածված տեսակն է: Հանդիպում է գրեթե բոլոր անտառային շրջաններում: Հյուսիսային Հայաստանում աճում են թխկու ևս մի քանի տեսակներ, որոնցից առավել գրավիչ է կարմրավուն պտուղներով Տրաուտվետերի թխկին (*Acer trautvetteri* Medw.): Այն աճում է անտառի վերին գոտում:

Մեղրատու է: Տերևները պարունակում են դաբաղանյութեր, վիտամին C և այլն: Բնափայտը օգտագործվում է կահույքի, երաժշտական գործիքների արտադրության, նավաշինության մեջ:

Իլենի (խուրենի) լայնատերև

Euonymus latifolia (L.) Mill.
Бересклет широколистный
(Իլենազգիներ – Celastraceae)

Կանաչ հարթ ընձուղներով, տերևաթափ թուփ է 2-3 մ բարձրության: Տերևները խոշոր են, էլիպսաձև կամ հակաձվաձև: Ծաղիկները մանր են, դեղին կամ կանաչասպիտակավուն, խմբված կիսահովանոցանման ծաղկաբույլերում: Պտուղը տուփիկ է, 4-5 բներով, նարնջակարմրավուն սերմերով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 800-2100 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, կիրճերում և ձորակներում: Հանդիպում է գրեթե բոլոր անտառային շրջաններում:

Իլենու տեսակներից ստանում են գուտապերչ:



Բույսի բոլոր մասերը թունավոր են:

Լորենի սրտաձև

Tilia cordata L.
Липа сердцевидная
(Լորենազգիներ - Tiliaceae)

Փռված սաղարթով տերևաթափ ծառ է մինչև 30 մ բարձրության: Տերևները հերթադիր են, երկարակոթ, սրտաձև, նեղացող գագաթով, սղոցաեզր: Ծաղիկները հոտավետ են, մանր, դեղնասպիտակ, 5-ական բաժակաթերթերով և պսակաթերթերով: Ծաղկակիցները մեծ են, երկարավուն, տերևանման, դեղնականաչավուն: Պտուղը կլորավուն թավոտ ընկույզիկ է: Ծաղկում է հունիսի վերջին, պտղակալում՝ սեպտեմբերին:

Աճում է անտառային գոտում մինչև 2200 մ բարձրության վրա, կաղնու-բոխու, հաճարենու անտառներում, երբեմն սոճու տնկարկներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի և Սևանի ֆլորիստիկական շրջաններում: Լորենու մեկ այլ տեսակ՝ կովկասյան լորենին (*Tilia caucasica* Rupr.) նույնպես տարածված է միայն Հյուսիսային Հայաստանում՝ Լոռու և Իջևանի ֆլորիստիկական շրջաններում:

Լորենին ունի բժշկական նշանակություն: Ծաղիկների (ծաղկակիցների հետ միասին) թուրմն օգտագործվում է մրսածության, նյարդային գրգռվածության, բերանի խոռոչի բորբոքային հիվանդությունների, այրվածքների, թութի բուժման համար: Մեղրատու է:



Ռխկի դաշտային
© Pavel Evseenkov (www.plantarium.ru)



Ռխկի Տրաուսովետերի
© Alexander Ivanov (www.plantarium.ru)



Իլենի լայնատերև
© Նազիկ Խանջյան



Լորենի սրտածև
© Նազիկ Խանջյան

Խաղող (որթ) անտառային

Vitis sylvestris C. C. Gmel.
Виноград лесной
(Խաղողազգիներ - Vitaceae)

Մագլցող ցողունով լիան է, երկայնակի ճաքճքված, հաջորդ տարին կլավող, կարմրադարչնագույն կեղևով: Տերևները մատնած են, ամբողջական կամ խոր կտրատված 5 բլթակներով, երկար տերևակոթով: Ծաղիկները մանր են, միասեռ, կանաչադեղնավուն՝ խմբված ողկույզ ծաղկաբույլերում: Պտուղները կլոր են կամ օվալ, սևավուն, փայլուն, հյութեղ, տտիպ կամ թթվաչ պտղամսով, 2-4 մուգ դարչնագույն, փայլուն կորիզներով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 700-900 մ բարձրությունների վրա, անտառների եզրերին, գետահովիտներում, ձորերում, լեռնակիրճերում: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Խաղողը ունի հազարավոր կուլտուրական սորտեր, որոնք մշակվում են Եվրոպայի հարավում, Կովկասում, Միջին Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում: Լայնորեն մշակվում է նաև Հայաստանում:

Խաղողի պտուղը պարունակում է օրգանական թթուներ, շաքարներ, հանքային նյութեր, տարբեր վիտամիններ (B, C, PP), հոտավետ եթերայուղեր, ներկող նյութեր և այլն: Կուլտուրական սորտերից ստանում են գինի և կոնյակ: Օգտագործվում է թարմ վիճակում որպես միրգ, չորացած՝ չամչի ձևով, վերամշակված՝ հյութ, կոմպոտ, մուրաբա, դոշաբ: Տերևներն օգտագործվում են սննդի մեջ: Ունի նաև բուժիչ հատկություն սրտի, թոքերի, լյարդի և այլ հիվանդությունների համար:

Խնձորենի արևելյան

Malus orientalis Uglitzk.
Яблоня восточная
(Վարդազգիներ - Rosaceae)

Կարմրավուն կեղևով ծառ է 3-10 մ բարձրության: Տերևները պարզ են, ամբողջական, էլիպսաձև, ատամնաեզր, կոթունավոր: Ծաղիկները մեծ են, երկսեռ, սպիտակ կամ նուրբ վարդագույն պսակաթերթերով, փնջերով հավաքված են հովանոցանման ծաղկաբույլում: Պտուղը խնձորիկ է, կլորավուն, բևեռներից թեթևակի տափակացած, հյութալի պտղամսով, 5 կաշեկերպ բներով և դարչնասևավուն կորիզներով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին: Ապրում է 120 և ավելի տարի:

Աճում է 500-1300 մ բարձրությունների վրա, անտառներում: Հանդիպում է Հայաստանի բոլոր անտառային շրջաններում: Վայրի խնձորենին քիչ է օգտագործվում, քանի որ մշակության մեջ տարածված են բազմաթիվ սորտեր՝ խոշոր, հյութալի և տարբեր համու բուրմունք ունեցող պտուղներով:

Պտուղն ուտելի է, կիսաքաղցր և համեղ: Այն պարունակում է շաքարներ, օրգանական թթուներ, պեկտինային նյութեր, սպիտակուցներ, վիտամիններ և այլ նյութեր: Կեղևը պարունակում է ներկանյութ: Գեղազարդային է, նաև՝ մեղրատու:

Խուրմա սովորական

Diospyros lotus L.
Хурма обыкновенная
(Էբենազգիներ - Ebenaceae)

Փոքրիկ, տերևաթափ ծառ է 4-6 մ բարձրության: Տերևները պարզ են, կաշեկերպ, ձվաձև կամ էլիպսաձև, սրացած գագաթով: Ծաղիկները 1-ակն են կամ երբեմն՝ 2-3-ակն, հնգատիպ: Պտուղը 1-1,5 սմ տրամագծով, գնդաձև, հյութալի, հասունանալիս սևավուն հատապտուղ է, մի քանի տափակ սերմերով: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ սեպտեմբերին:

Աճում է 500-1000 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, թփուտների մեջ, ձորակներում՝ գետերի երկայնքով: Հանդիպում է հիմնականում Իջևանի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում, առանձին ծառերի և փոքր ծառախմբերի տեսքով: Աճում է նաև Հրազդան գետի կիրճում: Մշակության մեջ հայտնի է խուրմա արևելյան կամ ճապոնական տեսակը (*Diospyros kaki* L.), որի պտուղները մեծ են (մինչև 12 սմ տրամագծով), նարնջակարմրավուն, ավելի հյութեղ պտղամսով: Այն լայնորեն մշակվում է Իջևանի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Պտուղներն ուտելի են թարմ և չորացած վիճակում: Օգտագործվում է որպես պատվաստակալ:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքի տեղեկատվական նյութերում, որպես «Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ» (NT կատեգորիա):



▲ Խաղող անտառային
© Boris Assyov



▲ Խնձորենի արևելյան
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



◀ Խուրմա արևելյան
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան

Խուրմա սովորական
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



Ծորենի (կծոխուր) սովորական

Berberis vulgaris L.
Барбарис обыкновенный
(Ծորենազգիներ - Berberidaceae)

Տերևաթափ, խիտ ճյուղավորված, փշոտ թուփ է մինչև 2,5 մ բարձրությամբ: Տերևները հակաձվածև են կամ օվալ, բարակ, սղոցատեղ, կարճակոթ: Ծաղիկները վառ դեղին ծաղկապատով են խմբված ողկույզանման կախված ծաղկաբույլերում: Պտուղը վառ կարմիր փայլուն հատապտուղ է, 2 երկարավուն-օվալաձև դարչնագույն սերմերով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

Աճում է 400-2100 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, թփերի մացառուտներում, զետահովիտների չոր լանջերին: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Սևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Բույսի բոլոր մասերը և, հատկապես, արմատներն ու տերևները պարունակում են ալկալոիդներ, որոնցից հիմնականը բերբերինն է: Պտուղը պարունակում է օրգանական թթուներ, շաքարներ, պեկտինային նյութեր, սերմերը՝ յուղ: Օգտագործվում է որպես լեղամուղ, նյարդային համակարգը հանգստացնող, զարկերակային ճնշումն իջեցնող միջոց: Թթվաշ պտուղներն օգտագործում են հրուշակագործության մեջ և խոհարարությունում, ամուր բնափայտը՝ ատաղձագործության մեջ: Գեղազարդային տեսակ է, նաև՝ մեղրատու:

Կաղնի խոշորատեղ

Quercus macranthera Fisch. & C. A. Mey. ex Hohen.
Дуб крупнопольниковый
(Հաճարազգիներ - Fagaceae)

Կլորավուն սաղարթով, միատուն ծառ է 20-30 մ բարձրությամբ: Տերևները մուգ կանաչ են, օվալաձև, բլթակավոր, կարճակոթ: Ծաղիկները մանր են, միասեռ, արականները՝ ներքև թեքված կատվիկ ծաղկաբույլերում, իգականները՝ 2-4-ական տերևածոցերում: Պտուղը միասեռ, օվալաձև, գորշ դեղնավուն կաղին է, վերին մասը՝ պտղազավաթով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին: Երկարակյաց է, ապրում է 500-600, երբեմն մինչև 1000 տարի:

Աճում է 1300-2500 մ բարձրությունների վրա, կազմում է լայնատերև անտառներ: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի և Սևանի (առանձին կղզյակի տեսքով), ինչպես նաև Հայաստանի մյուս անտառային շրջաններում: Այս տեսակը, Հայաստանում տարածված կաղնու մյուս տեսակների և հատկապես լեռնային ստորին գոտում (մինչև 1600 մ) ավելի շատ տարածված վրացական կաղնու (*Quercus iberica* Stev.) հետ միասին հանդիսանում է անտառակազմող հիմնական ծառատեսակներից մեկը:

Կաղնու կեղևը պարունակում է մեծ քանակությամբ դաբաղանյութեր, որի շնորհիվ ձեռք է բերել դեղագործական նշանակություն: Այն ունի կապող և հակաբորբոքային հատկություն և օգտագործվում է հիմնականում բերանի խոռոչի տարբեր հիվանդությունների ժամանակ: Կիրառվում է նաև այրվածքների բուժման համար: Կաղնու պտուղներից ստացվող սուրճը այժմ էլ չի կորցրել իր նշանակությունը: Սովորական եղերդակի (*Cichorium intybus* L.) և սովորական տատրակի (*Tussilago farfara* L.) հետ խառնված՝ այն ունի հաճելի համ և բուժիչ հատկություն: Կաղնու պտուղները հրաշալի կեր են ընտանի և վայրի կենդանիների համար: Կաղնին ունի մեծ կիրառություն անտառակուլտուրաների, դաշտապաշտպան շերտերի, բնակավայրերի կանաչապատման և կանաչ շինարարության բնագավառներում: Կաղնու բնափայտն ունի բազմաբնույթ կիրառություն որպես շինափայտ:

Կենի հատապտղային, կարմրածառ, բզենի

Taxus baccata L.
Тисс ягодный
(Կենազգիներ - Taxaceae)

Մշտադալար, գեղեցիկ ծառ է մինչև 25 մ բարձրությամբ: Տերևները երկարավուն նշտարած են, փայլուն, տափակ, սրածայր, դուրս ցցված կենտրոնական ջղով, պահպանվում են 5-8 տարի: Պտուղը կլորավուն վառ կարմիր հատապտուղ է: Կոները զարգանում են մարտ-ապրիլին, պտղաբերում հունիս-հունիսին: Երկարակյաց է:

Աճում է 700-1500 մ բարձրությունների վրա, խոնավ մութ անտառների երկրորդ շարահարկում, զետակների և առվակների ափերին: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի («Շիկահող» արգելոց) ֆլորիստիկական շրջաններում:

Ունի կարմիր գույնի արժեքավոր բնափայտ՝ ջրում չնեխող, սնկերի և միջատների նկատմամբ կայուն: Այստեղից առաջացել է կենու երկրորդ՝ կարմրածառ անունը: Կենին դեռ հնում օգտագործվել է սարկոֆագների պատրաստման համար և նավաշինության մեջ: Պարունակում է եթերայուղ և տաքսին ալկալոիդը, որոնք ունեն գրգռիչ հատկություն: Պտուղները կեր են հանդիսանում թռչունների համար, որոնց միջոցով տարածվում են: Գեղազարդային տեսակ է, նաև՝ մեղրատու:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես «Խոցելի տեսակ» (VU կատեգորիա):



Բույսի բոլոր մասերը թունավոր են:




Ծորենի սովորական (պտուղ)
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան



Ծորենի սովորական (ծաղիկ)
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան

Կաղնի խոշորառեց
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան



Կենի հատապտղային
© <http://vahemart.livejournal.com>



Կեչի Լիտվինովի

Betula litwinowii Doluch.
Береза Литвинова
(Կեչազգիներ - Betulaceae)

Սպիտակ բնով, մի փոքր կախված, ցրված ընծյուղներով ծառ է մինչև 18 մ բարձրության: Կեղևը հաճախ ծածկված է փոքրաթիվ գորտնուկային գեղձերով: Տերևները ձվաձև են կամ ձվաձև-շեղանկյունաձև, երկար կոթունով: Ծաղիկներն առանց ծաղկապատի են՝ միասեռ և միատուն: Առջավոր կատվիկները 3-ական են, կախված, վարսանդավորները՝ 1-ական, ավելի մանր: Պտուղն ընկույզիկ է, տափակ, կաշեկերպ, 1-2 անգամ ընկույզիկից լայն 2 թևերով: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 1800-2700 մ բարձրությունների վրա, հիմնականում անտառի վերին սահմանի մոտ, նոսրանտառի ձևով: Հյուսիսային Հայաստանում ձևավորում է նաև միատարր կեչուտներ: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու բույս է: Բողբոջները պարունակում են օրգանական թթուներ, ֆլավոնոիդներ, եթերայուղ և այլն: Կիրառվում է գիտական և ժողովրդական (հատկապես հյուսիսային երկրներում) բժշկության մեջ երիկամների հիվանդության, սիրտ-անոթային անբավարարության դեպքում և որպես լեղամուղ, հակաբորբոքիչ, խորխաբեր, ախտահանող միջոց: Կեչու հյութը նույնպես բուժիչ է և օրգանիզմի ընդհանուր տոնուսը բարձրացնող: Բնափայտից ստացվող փայտածուխը հիմք է հանդիսանում բժշկական ակտիվ ածուխի համար:

Կոկոռչենի թեքված

Grossularia reclinata (L.) Mill.
Крыжовник отклоненный
(Կոկոռչազգիներ - Grossulariaceae)

Փշոտ թուփ է մինչև 1 մ բարձրության: Տերևները մատնաձև են 3-5 բլթակներով, աղեղնա-ատամնաեզր, երկարակոթ: Ծաղիկները 1-ական են, երբեմն՝ 2-ական, կանաչավուն կամ բաց վարդագույն պսակով: Ծաղկաբույլը ողկույզ է: Պտուղը կարմիր, գնդաձև, երկարակոթ, կախված հատապտուղ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1800-2200 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Սննդային բույս է: Պտուղը պարունակում է շաքարներ, օրգանական թթուներ, վիտամիններ (C, P, B), կարոտին և այլն: Օգտագործվում է թարմ և վերամշակված ձևով:

Կռոնի (ջոնջուլենի) փետրավոր

Staphylea pinnata L.
Клекачка перистая
(Կռոնազգիներ - Staphyleaceae)


Տերևաթափ թուփ է կամ փոքր ծառ 2-6 մ բարձրության: Տերևները կենտ փետրաձև են, կազմված 5-7 լայն նշտարաձև կամ էլիպսաձև, ատամնաեզր, մերկ տերևիկներից: Ծաղիկները հնգատիպ են, սպիտակակաթնագույն, արտաքինից մի փոքր վարդագույն: Ծաղկաբույլը կախված երկարավուն բարդ ողկույզ է՝ կազմված մինչև 35 ծաղիկներից: Պտուղը բարակապատ կաշեկերպ տուփիկ է 2-3 բներով՝ յուրաքանչյուրում 1, հազվադեպ 2 գնդաձև, փայլուն, դարչնագույն սերմով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 600-950 մ բարձրությունների վրա, հատկապես բոխու անտառներում որպես ենթանտառի բաղադրիչ, թփերի մացառուտներում: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում: Բարեկամավան գյուղի մոտ, Նոյեմբերյանի անտառտնտեսության տարածքում գտնվող կռոնի մոտ 1 հա անտառակը տեղացիներն անվանում են «ջոնջուլկուտ»:

Ծաղկաբույլերը, հատկապես կոկոնակալման փուլում, ուտելի են վերամշակված ձևով:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես «խոցելի տեսակ» (VU կատեգորիա)



▲
Կեչի Լիսպինովի
© Denis Kochetkov (www.plantarium.ru)



▲
Կոկոռչենի թեքված
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան

Կռոնի փետրավոր
© Վահե Աբովյան



Հաղարջենի Բիբերշտեյնի

Ribes biebersteinii Berl. ex DC.
Смородина Биберштейна
(Կոկոնշագգիներ - Grossulariaceae)

Թուփ է մինչև 2 մ բարձրության: Տերևները մուգ կանաչ են, մատնածև, հնգաբլթակ, սրտածև հիմքով, վերևից՝ մերկ, ներքևից՝ ջղերի ուղղությամբ մազոտ: Ծաղիկները երկսեռ են, դեղնականաչավուն՝ խմբված ողկույզ ծաղկաբույլում: Պտուղը գնդաձև, կարմիր, հյութալի հատապտուղ է: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1700-2200 մ բարձրությունների վրա, խոնավ անտառներում, անտառեզրերին, ձորակների ժայռոտ տեղերում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի և Սևանի, ինչպես նաև Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Պտուղը թթվաչառ համեղ միրգ է: Այն պարունակում է շաքարներ, վիտամիններ, օրգանական թթուներ, պեկտինային նյութեր և այլն: Օգտագործվում է թարմ և վերամշակված ձևով:

Հաճարենի արևելյան

Fagus orientalis Lipsky
Бук восточный
(Հաճարագիներ - Fagaceae)

Հզոր, բարեկազմ, հարթ, բաց մոխրագույն կեղևով ծառ է մինչև 40 մ բարձրության: Տերևները կաշեկերպ են, էլիպսաձև կամ հակածված, սրագագաթ: Ծաղիկները միատուն են, մանր աննկատ: Պտուղը եռանիստ ընկույզիկ է, 1-2-ական նստած քառափեղկ պտղազավաթի մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին: Երկարակյաց է:

Աճում է 800-2000 մ բարձրությունների վրա, երբեմն հասնում է մինչև 2300 մ բարձրության: Հյուսիսային Հայաստանի անտառկազմող հիմնական ծառատեսակներից է: Կապված ծառուտի լրիվության աստիճանից առաջացնում է լավ արտահայտված թաղիքի շերտ, որը կարող է լինել մեռյալ (առանց խոտածածկի կամ հատ ու կենտ հանդիպող խոտային տեսակներով) կամ կենդանի (լավ արտահայտված խոտածածկով): Գերադասում է հզոր հողաշերտ, օդի և հողի բարձր խոնավություն: Հանդիպում է Լոռու, Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Ունի արժեքավոր, լայն կիրառություն ունեցող բնափայտ: Պտուղները սննդարար են, պարունակում են ճարպեր, սպիտակուցներ և այլ նյութեր: Օգտագործվում են թարմ և վերամշակված ձևով, դրանցից ստացվում է ձեթ, նաև հրաշալի կեր են հանդիսանում հատկապես խոզերի համար: Այստեղից ստացել են «խոզի արևածաղիկ» ժողովրդական անունը:

Հապալասենի մրտենական

Vaccinium myrtillus L.
Черника
(Հապալասագիներ - Vacciniaceae)


Տերևաթափ, փոքրիկ թփիկ է 20-30 սմ բարձրության: Տերևները կաշեկերպ են, վառ կանաչ, ձվածև, բութ գագաթով և մանրատամնավոր եզրով: Ծաղիկները կախված են, 1-ական, սափորանման կամ զանգակաձև, սպիտակ կամ բաց վարդագույն պսակով: Պտուղը բազմասերմ հյութալի հատապտուղ է, սև գույնի՝ թխակապույտ փառով: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 2800-3200 մ բարձրությունների վրա, անտառեզրին, ենթալպյան և ալպյան մարգագետիններում: Հանդիպում է Իջևանի, Ապարանի և Սևանի ֆլորիստիկական շրջաններում:

Քաղցրավուն մի փոքր թթվաչառ պտուղներն ուտելի են՝ թարմ և վերամշակված: Տերևները պարունակում են շաքարներ, վիտամին C, կարոտին, օրգանական թթուներ, դաբաղանյութեր և այլն: Դեղաբույս է, նաև՝ մեղրատու:



Հաղարջենի Բիբերշտեյնի
© Tamara Galstyan (www.plantarium.ru)



Հաճարենի արևելյան
© Վահե Աբովյան

Հապալասենի մրտենական
© Sergey Banketov (www.plantarium.ru)



Հասմիկ թփուտային

Jasminum fruticans L.
Жасмин кустарниковый
(Չիթենազգիներ - Oleaceae)

Կանաչ, անկյունավոր ցողուններով թուփ է մինչև 80 սմ բարձրության: Տերևները կոշտ են, եռանսյա, ամբողջաեզր, կարճակոթ: Ծաղիկները վառ դեղին են, բուրավետ, խմբված սակավաթիվ կիսահովանոցանման ծաղկաբույլերում: Պտուղը գնդաձև, սև, փայլուն հատապտուղ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է անտառային գոտու մինչև 1800 մ բարձրության վրա, հարավային դիրքադրության չոր քարքարոտ լեռնալանջերին, նոսրանտառում, թփուտների կազմում, անտառների առավել չորային ժայռոտ բացատներում: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Գեղամի, Երևանի, Դարեղեզիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Ծաղիկներից ստացվող հոտավետ յուղն օգտագործվում է օծանելիքի արտադրության մեջ: Գեղազարդային տեսակ է: Պիտանի է քարապարտեզների ձևավորման համար:

Հացենի բարձր

Fraxinus excelsior L.
Ясень высокий
(Չիթենազգիներ - Oleaceae)

Տերևաթափ ծառ է 20-30 մ բարձրության: Տերևները կենտ փետրաձև են, էլիպսաձև, սրագագաթ տերևիկներով: Ծաղիկները մանր են, փնջված հուրանաձև ծաղկաբույլերում: Պտուղը միասերմ թևավոր ընկույզիկ է: Ծաղկում է ապրիլ-մայիսին մինչև տերևների զարգանալը, պտղաբերում՝ հունիս-հուլիսին: Երկարակյաց ծառ է, ապրում է մինչև 300 տարի:

Աճում է մինչև 2200 մ բարձրության վրա, կաղնու, կաղնու-բոխու, հաճարենու անտառներում, լեռնային գետակների ափերին: Հանդիպում է գրեթե բոլոր անտառային շրջաններում:

Բնափայտը գեղեցիկ է, ճկուն և ամուր: Այն օգտագործվում է շինարարության և փայտագործության տարբեր բնագավառներում: Գեղազարդ ծառ է և կիրառվում է կանաչ շինարարության, անտառապաշտպան շերտերի ստեղծման, անտառաբուծության մեջ:

Հոնի սովորական

Cornus mas L.
Кизил обыкновенный
(Հոնազգիներ - Cornaceae)

Փոքրիկ ծառ է կամ թուփ մինչև 7 մ բարձրության: Տերևները հակադիր են, ձվաձև կամ էլիպսաձև, սրագագաթ: Ծաղիկները մանր են, դեղին, փնջերով խմբված հովանոցանման ծաղկաբույլերում: Ծածկոցի երկու թերթիկներով շրջապատված ծաղկաբողբոջներն առաջանում են ծաղկման նախորդ տարում: Պտուղն էլիպսաձև է կամ գլանաձև, մուգ կարմիր, երբեմն վարդագույն, պտղակոթից կախված: Ծաղկում է փետրվար ամիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 500-1000 մ բարձրությունների վրա, երբեմն հասնում է մինչև 1500 մ բարձրության: Հանդիպում է քարքարոտ ձորակներում, գետակների և առուների ափերին, անտառի վերին եզրի երկայնքով, կաղնու-բոխու անտառներում, մտնում է ենթանտառի կազմի մեջ: Չոր քարքարոտ արևկող լանջերին առաջացնում է նաև հոնուտներ: Տարածված է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Հայաստանում տարածված են նաև մշակովի սորտեր, որոնց պտուղներն ավելի մեծ են:

Ունի ամուր, լավ հղկվող կիրառելի բնափայտ: Պտուղները պարունակում են շաքարներ, վիտամիններ և այլ նյութեր: Դրանք օգտագործվում են թարմ, վերամշակված և չորացած ձևով: Ուտելու համար շատ համեղ է «կաթնուկ» հոնը (քաղելուց մի քանի օր հետո պինդ և մի փոքր տտիպ ու բռնող պտղամիսը փափկում է և քաղցրանում):



Հասմիկ թփուտային
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան

Հացենի բարձր
© Pavel Evseenkov (www.plantarium.ru)



Հոնի սովորական
© Նազիկ Խանջյան



Ճապկի հարավային

Swida australis (C. A. Mey.) Pojark. ex Grossh.

Свидина южная

(Հոնազգիներ - Cornaceae)

Ծյուղավորված թուփ է մինչև 5 մ բարձրության: Տերևները հակադիր են, լայն ձվաձև կամ լայն էլիպսաձև, սրագագաթ: Ծաղիկները մանր են, սպիտակ կամ սպիտակավուն՝ խմբված հովանոցանման ծաղկաբույլերում: Պտուղը կլորավուն, հյութալի, մուգ դարչնագույն կամ սևավուն, երկար պտղակոթով հատապտուղ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 700-1200 մ բարձրությունների վրա, երբեմն հասնում է մինչև 1700 մ բարձրության: Հանդիպում է անտառներում, անտառի եզրերին, թփուտների մացառուտներում, քարքարոտ ձորակներում, գետերի ափերին: Տարածված է Լոռու, Իջևանի և Ապարանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է: Օգտագործվում է կանաչ շինարարության մեջ:

Մամրիչ (հոտոտ) հարավային

Clematis orientalis L.

Ломонос восточный

(Գորտնուկազգիներ – Ranunculaceae)

Փաթաթվող թուփ է մինչև 5 մ երկարությամբ ցողուններով: Տերևները երկարակոթ են, փետրածև, բաժանված երկարավուն ձվաձև, հիմքում սրտաձև մասերի: Ծաղիկները երկսեռ են, առանց պսակաթերթերի, դեղնավուն ծաղկապատով՝ խմբված հուրանաձև ծաղկաբույլերում: Պտուղը բազմաընկույզիկ է. յուրաքանչյուր ընկույզիկ կրում է թելանման, երկար, բարակ, արծաթափայլ մազիկներով ծածկված կտուց: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հուլիսից մինչև սեպտեմբեր:

Աճում է 500-1600 մ բարձրությունների վրա, անտառի եզրերին, բացատներում, գետահովիտներում, այգիների ցանկապատերի վրա: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Հյուսիսային Հայաստանում աճում է նաև հազվագյուտ խաղողատերև մամրիչը (*Clematis vitalba* L.), որը հանդիպում է Նոյեմբերյանում և Զուջևանում, 700-1000 մ բարձրությունների վրա:

Գեղազարդային տեսակ է:



Թունավոր է:

Մասրենի շնային

Rosa canina L.

Роза собачья

(Վարդազգիներ - Rosaceae)

Փշոտ թուփ է մոտ 2 մ բարձրության: Տերևները կենտ փետրածև են, էլիպսաձև, սղոցաեզր տերևիկներով, կոթունի հիմքին ձուլված տերևակիցներով: Ծաղիկները մեծ են, 1-ական, 5 սպիտակ կամ բաց վարդագույն պսակաթերթերով: Պտուղները՝ ընկույզիկները տեղավորված են մեծացող, հասունանալիս կլորավուն կամ տանձաձև, կաշեպատ կարմրավուն ծաղկակալի՝ հիպանթումի մեջ: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:


Աճում է 800-2100 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, թփուտների մեջ, լեռնալանջերի բաց տարածքներում: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Ունի բազմաբնույթ կիրառություն: Պտուղները պարունակում են վիտամիններ, հատկապես վիտամին C (ասկորբինաթթու), շաքարներ, դաբաղանյութեր, ֆլավոնոիդներ և այլն: Պտուղներից ստացվող մասրենու յուղը վերքերը բուժող միջոց է, իսկ խոլոսաս պատրաստուկը՝ լեղամուղ: Ծաղիկներից ստացվող եթերայուղը նույնպես օգտագործվում է գիտական բժշկության մեջ, ինչպես նաև հանրահայտ է օժանելիքների արտադրության մեջ: Պտուղներն օգտագործվում են թարմ և վերամշակված ձևով: Մեղրատու և գեղազարդային բույս է: Օգտագործվում է կանաչ շինարարության մեջ, փշոտ ցանկապատերի համար: Ունի հողապաշտպան նշանակություն:



Մամրիչ հարավային
© Հովհաննես Ղազարյան

Ճապկի հարավային
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



▲ Մասրենի շնային (պտուղ)
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան
▼ Մասրենի շնային (ծաղիկ)



Մղանուճ (ճագոն) սպիտակ

Viscum album L.
Омела белая
(Փոկածաղկազգիներ - Viscaceae)

Մակարույծ, բնափայտավոր, խիտ ճյուղավորված, գնդաձև թուփ է մինչև 1 մ տրամագծով: Ցողունները կլորավուն են, հակադիր դասավորված: Տերևները երկարավուն էլիպսաձև են, դեղնականաչավուն, քիչ մսալի, ծմեռող: Ծաղիկները քառատիպ են, դեղնականաչավուն, աննկատ՝ խմբված 5-6-ական փնջերով ցողունների գագաթներին: Պտուղը գնդաձև, սպիտակ կամ դեղնավուն հյութալի հատապտուղ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է անտառային գոտում՝ թեղու, կաղնու, լորենու, բոխու, տանձենու և այլ ծառերի վրա: Տարածված է բոլոր անտառային շրջաններում: Լավ նկատելի է, հատկապես, տերևաթափից հետո, երբ ծառերը մերկանում են: Հայաստանում հանդիպում է միայն վայրի տեսակների և չի աճում կուլտուրական սորտերի վրա, թեև Եվրոպայում աճում է նաև տանձենու, խնձորենու և այլ կուլտուրական բույսերի վրա:

Հայտնի դեղաբույս է: Պարունակում է գլիկոզիդներ, սապոնիններ և այլ տարբեր տիպի յուրահատուկ քիմիական նյութեր՝ խոլին, վիսկոտոքսին, ինոզիտ և այլն: Տերևներն օգտագործվում են բարձր ճնշման, հոդաբորբի, երիկամաբորբի, չարորակ ուռուցքների, էպիլեպսիայի ժամանակ: Ունի հակաալերգային, ճիճվաթափ և արյան մեջ շաքարի մակարդակն իջեցնող հատկություն:



Բույսը հաճախակի և երկարատև օգտագործելիս թունավոր է:

Մոշենի թխակապույտ

Rubus caesius L.
Ежевика сизая, ожина
(Վարդազգիներ - Rosaceae)

Փշոտ, աղեղնաձև, փռված կորացած ցողուններով թուփ է 1-1,5 մ երկարությամբ: Տերևները բարդ են, հակածված, սրածայր, 3-5 բլթակներով: Ծաղիկը հնգատիպ է, սպիտակ կամ բաց վարդագույն պսակաթերթերով: Ծաղկաբույլը ողկույզ է: Պտուղը հյութալի կլորավուն բազմակորիզակ է, մուգ կարմիր, թխակապույտ փառով: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 500-2100 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, անտառահատված տեղերում, թփուտներում, ձորակներում, գետերի և առուների ափերին: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Բազմանում է շատ արագ և առաջացնում մացառուտներ: Որպես մոլախոտային տեսակ՝ ճնշում է այլ թփերին և խոտաբույսերին, գրավելով նրանց տեղը:

Պտուղները պարունակում են շաքարներ, օրգանական թթուներ, վիտամիններ և այլն: Դրանք օգտագործվում են թարմ և վերամշակված ձևով: Բնափայտը ընդունված է օգտագործել որպես թեյի փոխարինող:

Մոռենի ազնիվ, ազնվամորի

Rubus idaeus L.
Малина обыкновенная
(Վարդազգիներ - Rosaceae)

Թուփ է 1-1,5 մ բարձրությամբ: Առաջին տարվա ցողունները խոտային են, փշոտ, երկրորդ տարում փայտանում են, դառնում անփուշ և պտղաբերում: Տերևները եռմասնյա են կամ պարզ, ատամնաեզր, վերևից՝ կանաչ, ներքևից՝ գորշ թաղիքային մազմուկներով: Ծաղիկները հնգատիպ են, սպիտակ պսակաթերթերով: Պտուղը մորեզույն, հյութալի, բրզանման բազմակորիզակ է, ծաղկակալից հեշտությամբ անջատվող: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ օգոստոսին:

Աճում է 1800-2800 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, անտառահատված տեղերում, թփուտներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Սևանի, ինչպես նաև Վերին Ախուրյանի, Արագածի, Դարեղեգիսի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Մշակվում են բազմաթիվ կուլտուրական սորտեր, որոնք տարբերվում են հիմնականում պտղի չափով:

Դեղատու բույս է, ինչպես նաև՝ ուտելի: Պտուղը պարունակում է օրգանական թթուներ, տարբեր շաքարներ, վիտամին C, կարոտին, լիքոպենոլներ և այլն: Չորացած պտուղներն օգտագործվում են գիտական բժշկության մեջ որպես քրտնաբեր միջոց, տարբեր հավաքական բուժիչ թեյերի համը բարելավելու և դեղերը բուրավետ դարձնելու համար: Համեղ և հոտավետ պտուղներն օգտագործվում են թարմ և վերամշակված ձևով, բնափայտը՝ որպես թեյի փոխարինող:



▲
Մղանուճ սպիտակ
© Հովհաննես Դազարյան



▲
Մղանուճ սպիտակ
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան

Մոռենի թխակապույտ
© Հովհաննես Դազարյան



Մոռենի ազնիվ, ազնվամորի
© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան



Մրտավարդ (ալպիական վարդ) կովկասյան

Rhododendron caucasicum Pall.
Рододендрон кавказский
(Հավամրգազգիներ - Ericaceae)

Մշտադալար թուփ է 30-60 սմ բարձրության: Տերևները խոշոր են, կաշենման, կարճակոթ, երկարավուն-օվալ ուրվագծով, վերևից՝ փայլուն, ներքևից՝ շեկախավուտ: Ծաղիկները խոշոր են, սպիտակ կամ կրեմագույն՝ խմբված կիսահովանոցաձև ծաղկաբույլում: Պտուղը տուփիկ է, մանր սերմերով: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1900-2800 մ բարձրությունների վրա, ենթալպյան մարգագետիններում, անտառի վերին սահմանի մոտ, կեչու նոսրանտառում: Գերադասում է խոնավ և ստվերոտ միջավայր: Հանդիպում է Լոռու և Իջևանի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է գլիկոզիդներ, դաբաղանյութեր, ֆլավոնոիդներ, վիտամին P և այլն: Օգտագործվում է հիմնականում ժողովրդական բժշկության մեջ: Գեղազարդային տեսակ է, մաս՝ մեղրատու:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես «Վտանգված տեսակ» (EN կատեգորիա):



Բույսի բոլոր մասերը թունավոր են:

Նռնենի սովորական

Punica granatum L.
Гранат обыкновенный
(Նռնազգիներ - Punicaceae)

Թուփ կամ փոքր ծառ է մինչև 5 մ բարձրության: Տերևները կաշեկերպ են, ամուր, փայլուն, երկարավուն կամ նշտարաձև, ամբողջաեզր: Ծաղիկները խոշոր են, վառ կարմիր, երկսեռ: Պտուղը հատապտղանման է, գնդաձև, հաստ կաշեկերպ մաշկով և թաղանթային սպիտակավուն միջնապատերով, բազմաթիվ հյութալի սերմերով: Ծաղկում է մայիսից մինչև օգոստոս, պտղաբերում՝ սեպտեմբերից:

Աճում է 400-1200 մ բարձրությունների վրա, կիրճերում, ձորակներում, առավելապես չոր, խճոտ ու կավոտ լանջերին, նոսրանտառներում: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Մշակվում է:

Սերմերն ուտելի են, քաղցր կամ թթվաքաղցր հաճելի համով: Դրանք օգտագործվում են թարմ և վերամշակված ձևով: Կեղևի եփուկը ժողովրդական բժշկության մեջ տարածված է որպես կապող և ճիճվաթափ միջոց: Տերևը, կեղևը և արմատները հարուստ են դաբաղանյութերով և ներկանյութերով: Գեղազարդային տեսակ է:

Շրջահյուս (փաթթուկ) հունական

Periploca graeca L.
Обвойник греческий
(Թունաթափազգիներ - Asclepiadaceae)

Կաթնանման հյութ պարունակող տերևաթափ լիան է 15 մ և ավելի երկարության: Տերևները պարզ են, կաշենման, էլիպսաձև կամ ձվաձև, կարճակոթ, ցողունի վրա հակադիր դասավորված: Ծաղիկները դեղնականաչավուն են, արտաքինից և եզրերից կարմրավուն՝ խմբված հովանոցանման երկարակոթ ծաղկաբույլում: Պտուղը զույգ-զույգ դասավորված երկարավուն տերևապտուղ է: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 400-1300 մ բարձրությունների վրա, անտառի ստորին գոտու եզրերին, խոնավ տեղերում, գետերի ափերին: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Օգտագործվում է կեղևը, որը պարունակում է գլյուկոզիդներ, դաբաղանյութեր, ճարպեր, խեժ և այլն: Կաուչուկատու բույս է: Գեղազարդային տեսակ է:



Թունավոր է:



▲ Մրտավարդ կովկասյան
© <http://vahemart.livejournal.com>



▲ Նոնենի սովորական
© WWF-Հայաստան/ Արամ Մարտիրոսյան



◀ Շրջահյուս հունական (պտուղ)
© Alexander Ivanov (www.plantarium.ru)



Շրջահյուս հունական ▶
(ծաղիկ)
© Անուշ Ներսեսյան

Չիչխան (փշարմավ) դժնիկանման

Hipporhae rhamnoides L.
Облепиха крушиновидная
(Փշատազգիներ - Elaeagnaceae)

Փշոտ, խիտ ճյուղավորված թուփ կամ փոքր ծառ է 5-6 մ, երբեմն մինչև 10 մ բարձրության: Տերևները գծանշտարած են, ամբողջաեզր, կարճ կոթունով, վերևից՝ կանաչավուն, ներքևից՝ արծաթավուն, սպիտակ թավոտությամբ: Վարսանդավոր ծաղիկները կանաչավուն են, աննկատ, խմբված տերևների անոթներում: Պտուղը հյութալի կորիզապտուղ է, օվալ կամ կլորավուն, դեղին, նարնջագույն կամ կարմրավուն, 1 երկարավուն, մուգ դարչնագույն կորիզով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ սեպտեմբերին:

Աճում է 600-2300 մ բարձրությունների վրա, ավազոտ խոնավ տեղերում, գետերի ափերին, ձորերի լանջերին: Հանդիպում է Իջևանի, Ապարանի, ինչպես նաև Վերին Ախուրյանի, Երևանի, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Արհեստական տնկարկները շատ են հատկապես Սևանի ավազանում, լճի առափնյա գոտում:

Հանրահայտ է որպես ուտելի, դեղատու, մեղրատու և գեղազարդ տեսակ: Պտուղները պարունակում են տարբեր վիտամիններ (C, E, P, B), կարոտին, շաքարներ, օրգանական թթուներ, կորիզը՝ յուղ: Այն օգտագործվում է այրվածքների, ստամոքսի խոցի, էկզեմայի և մաշկային այլ հիվանդությունների ժամանակ: Պտուղներն օգտագործվում են թարմ և վերամշակված: Արժեքավոր տեսակ է կանաչ շինարարության համար՝ ավազների ամրացման, էրոզիայի կանխման, փշոտ ցանկապատերի ստեղծման, արմատների պալարաբակտերիաների շնորհիվ հողի որակի բարելավման և ազոտով հարստացման համար:

Չմենի (ցրպտկի) ամբողջաեզր

Cotoneaster integerrimus Medik.
Кизильник цельнокрайный
(Վարդազգիներ - Rosaceae)

Փոքրիկ, տերևաթափ թուփ է 3-5 մ բարձրության: Տերևները պարզ են, էլիպսաձև կամ կլորավուն, ներքևից սպիտակավուն թավոտությամբ, կարճակոթ, հերթադիր դասավորությամբ: Ծաղիկները մանր են, սպիտակ կամ նուրբ վարդագույն պսակաթերթերով՝ խմբված սակավածաղիկ ողկույզանման ծաղկաբույլում: Պտուղը խնձորանման է, մանր, վառ կարմիր, գնդաձև կամ ձվաձև, ալրանման պտղամսով և 2-5 կորիզով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 900-2400 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, նոսրանտառներում, քարքարոտ լեռնալանջերին: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Պտուղները քաղցր են և ուտելի: Դրանք պարունակում են շաքարանյութեր, տերևները՝ վիտամին C, իսկ սերմերը՝ անիզոնիլի գլիկոզիդ: Գեղազարդային տեսակ է: Կարելի է օգտագործել չոր քարքարոտ լանջերի կանաչապատման համար:

Պարիլյակ բարձր

Smilax excelsa L.
Смилакс высокий
(Պարիլյակազգիներ - Smilacaceae)

Երկտուն թուփ է, սողացող հաստ կոճղարմատով և փաթաթվող, փշոտ, 2-3 մ բարձրության ցողունով: Տերևները սրտաձև են, կաշեկերպ, հերթադիր, երկարակոթ, հիմքում 2 բեղիկներով: Ծաղիկները մանր են, կանաչավուն ծաղկապատով, 4-10 հատ խմբված կիսահովանոցանման ծաղկաբույլում: Պտուղը գնդաձև, վառ կարմիր, հյութալի հատապտուղ է: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 500-1000 մ բարձրությունների վրա, խոնավ անտառներում, գետերի ափերին: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Այրում, Նոյեմբերյան, Բերդ, Իջևան, Այգեհովիտ, Ախթալա):

Գեղազարդային տեսակ է: Ազգակից տեսակների կոճղարմատը հայտնի է «սարսապարիլ» անունով: Դրանք աճում են Մեքսիկայում և Չինաստանում, պարունակում են յուրահատուկ սապոնիններ (պարիլին, սարսապոնին) և հնուց օգտագործվում են բժշկության մեջ:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես «Վտանգված տեսակ» (EN կատեգորիա):



▲
Չիչխան դժնիկանման
© Սվետլանա Հարությունյան

Զննի անբողջաեզր
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան



Պարիլյակ բարձր
© Vladimir Saveliev (www.plantarium.ru)



Պիստակենի (խնկենի) բթատերև

Pistacia mutica Fisch. & C. A. Mey.
Фисташка туполистная
(Աղտոռագգիներ - Anacardiaceae)

Վրանանման սաղարթով ծառ է 8-12 մ բարձրության: Տերևները կաշեկերպ են, փայլուն, կենտ փետրածև, կազմված 3-5(7) զույգ երկարավուն-ձվածև, ամբողջաեզր տերևիկներից: Ծաղիկները միատուն են, միասեռ՝ խմբված հուրանածև ծաղկաբույլերում: արականները՝ 5-6 առեջներով, իգականները՝ միաբույն վարսանդով: Պտուղը օվալածև, ձիթենագույն կորիզապտուղ է, արևկող մասում կարմրող: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 500-1200 մ բարձրությունների վրա, երբեմն հասնում է մինչև 1600 մ բարձրության: Հանդիսանում է չորային նոսրամտառի բնորոշ տեսակներից մեկը: Տարածված է հարավային դիրքադրության չոր քարքարոտ լեռնալանջերին, գետերի հովիտներում, կիրճերի հին դարավանդներում: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Բնափայտը խիտ է և ծանր, հեշտությամբ հղկվում, փայլեցվում և օգտագործվում է դեկորատիվ արվեստում տարբեր իրերի պատրաստման համար: Դրանից ստացվում է փայտածուխ: Բնափայտը ներծծված է հոտավետ խեժով, որից ստացվում է խունկ (այստեղից ցեղի խնկենի անունը): Հոտավետ խեժն օգտագործվում են նաև տնտեսական նպատակներով:

Սալորենի (շլորենի) փռված

Prunus divaricata Ledeb.
Слива растопыренная, алыча
(Վարդագգիներ - Rosaceae)

Փոքր ծառ կամ թուփ է 2-8 մ բարձրության, երկար, երբեմն փշոտ ճյուղերով: Տերևները ձվաէլիպսածև են, սրածայր, երկարակոթ: Ծաղիկները սպիտակ են, բացվում են մախքան տերևների զարգանալը: Պտուղը կլորավուն է, դեղնավուն, հասունանալիս վառ դեղին, մեկ կորիզով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 400-2200 մ բարձրությունների վրա, լուսավոր անտառներում, անտառեզրերին, չոր բաց լեռնալանջերին: Հանդիպում է հաճախ, բոլոր ֆլորիստիկական շրջաններում: Մշակվում է:

Անտառներում հանդիպում է նաև փշոտ սալորենին կամ մամխին (*Prunus spinosa* L.), որը նույնպես մշակվում է: Մշակության մեջ լայնորեն տարածված է նաև տնային սալորենին կամ դամբուլը (*Prunus domestica* L.):

Պտուղը պարունակում է շաքարներ, վիտամիններ, օրգանական թթուներ և այլն: Այն ունի հաճելի թթվաշ համ: Օգտագործվում է թարմ և վերամշակված ձևով:

Սզնի (ալոճենի) հնգասունակ

Crataegus pentagyna Waldst. & Kit.
Боярышник пятистолбиковый
(Վարդագգիներ - Rosaceae)

Փշոտ ծառ է կամ հազվադեպ թուփ 3-12 մ բարձրության: Տերևները կոշտավուն են, հակածվածև ուրվագծով, 3-7 բլթականի, վերևից՝ մուգ կանաչ, ներքևից՝ թեթևակի աղվամազոտ: Ծաղիկները հնգատիպ են, սպիտակ պսակաթերթերով, խմբված հովանոցանման ծաղկաբույլերում: Պտուղը խնձորանման է, մանր, գնդածև, սև, թխակապույտ փառով, կարմրավուն պտղամսով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 800-1200 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, թփուտների կազմում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պտուղը պարունակում է սապոնիններ, ֆլավոնոիդներ, դաբաղանյութեր, խոլին, օրգանական թթուներ, ճարպաչուղեր և այլն, իսկ ծաղիկները՝ նաև եթերայուղ: Կիրառվում է գիտական բժշկության մեջ կենտրոնական նյարդային համակարգի գրգռվածության, արյան մեջ խոլեստերինի մակարդակի նվազեցման համար: Մեղրատու և գեղազարդային տեսակ է, օգտագործվում է կանաչ ցանկապատերի համար: Պտուղներն ունեն նաև սննդային նշանակություն և օգտագործվում են թարմ, չորացած և վերամշակված ձևով: Բնափայտը նույնպես կիրառելի է:



▲ Պիստակենի բթատերև
© Vladimir Ivanov (www.plantarium.ru)



▲ Սալորենի փռված
© Սվետլանա Հարությունյան



▲ Սզնի հնգաստնակ (ծաղիկ)
© Մերինե Սարգսյան



▲ Սզնի հնգաստնակ (պտուղ)
© Մերինե Սարգսյան

Սմախ դաբաղային

Rhus coriaria L.
Сумах дубильный
(Աղտոռազգիներ - Anacardiaceae)

Տերևաթափ թուփ է 1-3 մ բարձրության: Տերևները կենտ փետրածև են, կազմված 8-12 զույգ երկարավուն ձվածև ատամնաեզր կամ աղեղնաեզր տերևիկներից: Ծաղիկները միասեռ են, միատուն, մանր կանաչասպիտակ՝ խմբված զագաթնային արական և իգական հուրանածև ծաղկաբույլերում: Պտուղը երիկամածև կարմրավուն գեղձային մագիկներով ծածկված կորիզապտուղ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ սեպտեմբերին:

Աճում է մինչև 1400 մ բարձրության վրա, հարավայաց չոր քարքարոտ լանջերին, հաճախ փոքր խմբերով կամ մացառուտների տեսքով: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Գեղամի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Տերևներից ստացվող տանինի օգտագործումը բժշկության մեջ կապված է նրա հակաբորբոքային, ախտահանիչ և կապող-կպցնող հատկությունների հետ՝ այրվածքների, թարախային վերքերի, քրոնիկական էկզեմայի, ներքին արյունահոսությունների ժամանակ: Տանինը օգտագործվում է նաև կաշեգործության մեջ որպես դաբաղանյութ: Բույսի տարբեր մասերից ստացվում է դեղին (ցողունի կեղևից), դարչնագույն (արմատի կեղևից), սև (տերևից) և կարմիր (պտուղից) ներկ՝ մետաքսը և բուրդը ներկելու համար: Թթվաչափ պտուղներից ստացվող շաքարաման փոշին հայտնի համեմունք է:

Սոճի (շամի) Կոխի

Pinus kochiana Klotzsch ex K. Koch
Сосна Коха
(Սոճազգիներ - Pinaceae)

Մշտադալար ծառ է 15-35 մ բարձրության, կարմրավուն ուղիղ բնով, վերևում՝ ոչ մեծ կոնածև սաղարթով: Տերևները գծային են, սրածայր, զույգ-զույգ, կանաչ թխակապույտ: Կոները միատուն են, միասեռ. արականները նեղ երկարավուն են՝ ցողունների ծայրերին, իգականները՝ կոնածև, սկզբում՝ կախված, հետագայում՝ հորիզոնական կամ վեր ուղղված: Սերմերը թևավոր են: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին: Երկարակյաց է:

Աճում է 1000-2100 մ բարձրությունների վրա, անտառներում՝ որպես անտառկազմող տեսակ և, երբեմն, որպես խառը անտառների բաղադրիչ: Հանդիպում է բոլոր շրջաններում արհեստական տնկարկների ձևով:

Ունի արժեքավոր բնափայտ ամենատարբեր կիրառության, սկսած շինարարությունից մինչև տնայնագործական արտադրություն: Տալիս է հոտավետ խեժ և եթերայուղ, բենզնայուղ, սկիպիդար, կանիֆոլ, կուպր: Գեղազարդ տեսակ է: Օգտագործվում է հատկապես փոքր բնակավայրերի կանաչապատման համար, քանի որ զգայուն է մեծ քաղաքների տրանսպորտից արտանետված գազերի մեծ քանակի նկատմամբ: Կոներն օգտագործվում են ժողովրդական բժշկության մեջ:

Սրնգենի սովորական

Ligustrum vulgare L.
Бирючина обыкновенная
(Զիթենազգիներ - Oleaceae)

Թուփ է 2-5 մ բարձրության: Տերևները պարզ են, փայլուն, լայն էլիպսածև, կարճակոթ, ցողունի վրա հակադիր դասավորված: Ծաղիկները չափից ավելի քաղցրահոտ են, սպիտակ, քառաբլթակ, ծուլաթերթ պսակով: Ծաղկաբույլը ողկույզանման է, խիտ և բրզածև: Պտուղը գնդածև է, սև: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 700-1600 մ բարձրությունների վրա, անտառներում, նոսրանտառներում, թփերի մացառուտներում: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է: Օգտագործվում է բնակավայրերի կանաչապատման համար: Բնափայտից ստացվում է սև ներկ: Մեղրատու է:



◀ Սնախ դաբաղային
© Pavel Evseenkov
(www.plantarium.ru)

Սոճի Կոխի
© Vladimir Ivanov
(www.plantarium.ru)



Սրնգենի սովորական
© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան



Տանձենի կովկասյան

Pyrus caucasica Fed.
Груша кавказская
(Վարդագիներ - Rosaceae)

Բրգածն սաղարթով, փշոտ ճյուղերով ծառ է 10-20 մ բարձրության: Տերևները լայն էլիպսաձև են կամ ձվաձև, ամբողջաեզր, մերկ կամ եզրերից և ներքևից մազոտ, բարակ, երկար կոթերով: Ծաղիկներն երկսեռ են, խոշոր, սպիտակ պսակաթերթերով, խմբված վահանիկ ծաղկաբույլերում: Պտուղները կլորավուն են, մինչև 3 սմ տրամագծով, բևեռներից թեթևակի տափակացած, պտղին հավասար կոթով, սև սերմերով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին: Երկարակյաց ծառ է, ապրում է 100-150 տարի:

Աճում է 600-2200 մ բարձրությունների վրա, լայնատերև անտառներում: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր անտառային շրջաններում: Առաջացնում է նաև միատարր համակեցություններ՝ տանձուտներ: Հայաստանում տարածված են տանձենու բազմաթիվ, այդ թվում Կարմիր գրքում գրանցված տեսակներ: Կուլտուրայում տարածված է սովորական տանձենին (*Pyrus communis* L.), որը հնագույն կուլտուրա է: Հայտնի են բազմաթիվ սորտեր:

Պտուղները պարունակում են շաքարներ, օրգանական թթուներ, վիտամիններ, դաբաղանյութեր և այլն: Դրանք ունեն բարձրորակ պտղամիս, հաճելի, զովացնող համ և օգտագործվում են թարմ և վերամշակված ձևով: Ունեն կապող հատկություն և կիրառվում են ժողովրդական բժշկության մեջ որպես հակալուծողական միջոց:

Տխլենի (տկողին) ծառային, արջատխլենի

Corylus colurna L.
Лещина древесная, медвежий орех
(Տխլագիներ - Corylaceae)

Գեղեցիկ սաղարթով, ուղղաձիգ բնով, բարեկազմ ծառ է մինչև 30 մ բարձրության: Տերևները ձվաձև են, սրածայր: Ծաղիկները միատուն են և միասեռ. առջավորները՝ խմբված կախված, երկարավուն, կատվիկ ծաղկաբույլում, վարսանդավորները՝ 2-3-ական, տերևների անութներում: Պտուղը կլորավուն փայտացած ընկույզիկ է, կանաչ գավաթանման, վերևում խորը կտրատված և ծայրերը մանգաղաձև շրջված պտղագավաթի մեջ: Ծաղկում է մարտ-ապրիլին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 800-1600 մ բարձրությունների վրա, խորը ձորերի օդային հոսանքներից պաշտպանված տաք ու խոնավ միկրոկլիմայի պայմաններում: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում:

Ունի արժեքավոր, գեղեցիկ, վարդագույն բնափայտ: Գեղազարդ ծառ է: Պտուղները սննդարար են, սակայն չունեն լայն կիրառություն:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես «Վտանգված տեսակ» (EN կատեգորիա):

Տխլենի սովորական

Corylus avellana L.
Лещина обыкновенная
(Տխլագիներ - Corylaceae)

Խիտ ճյուղավորված 5-7 մ բարձրության թուփ է: Տերևները ձվաձև են, սրածայր: Պտուղը խոշոր փայտացած ընկույզիկ է, կանաչ գավաթանման, վերևում՝ կտրատված պտղագավաթի մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 500-1600 մ բարձրությունների վրա, երբեմն հասնում է մինչև 1800 մ բարձրության: Հանդիպում է կաղնու-բոխու խառը անտառներում որպես ենթանտառ, անտառեզրերին, ձորակների մեջ: Տարածված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում, ինչպես նաև Ջանգեզուրում: Մշակվում է:

Հանրահայտ է իր համեղ և սննդարար պտուղներով: Դրանք ունեն լայն կիրառություն որպես սնունդ՝ թարմ և վերամշակված ձևով, սննդի արդյունաբերության, հատկապես հրուշակագործության բնագավառում:



Տանձենի կովկասյան (պտուղ)
© Վրեժ Մանակյան



Տանձենի կովկասյան (ծաղիկ)
© Վրեժ Մանակյան



Տխլենի ծառային
© Նագիկ Խանջյան



Տխլենի ծառային (պտուղ)
© Նագիկ Խանջյան



Տխլենի սովորական
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան

Ցախակեռաս բուրավեն

Lonicera caprifolium L.
Жимолость душистая, козья ножка
(Այծատերևազգիներ - Caprifoliaceae)

Բնափայտավոր փաթաթվող լիան է մինչև 3 մ բարձրության: Տերևները կլորավուն են, ամբողջաեզր, ցողունի վրա նստադիր, ցողունագիրկ: Ծաղիկները խոշոր են, դեղնանարնջագույն, փնջերով: Պտուղը վառ կարմիր հյութալի հատապտուղ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ օգոստոսին:

Աճում է 800-1800 մ բարձրությունների վրա, անտառներում, թփուտների մացառուտներում, գետերի և առվակների երկայնքով: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում: Հյուսիսային Հայաստանում լայն տարածում ունեն նաև կովկասյան (*Lonicera caucasica* Pall.) և վրացական (*Lonicera iberica* M. Bieb.) ցախակեռասները, որոնք ոչ բարձր թփեր են, մանր սպիտակ-վարդագույն ծաղիկներով և հանդիպում են Հայաստանի գրեթե բոլոր անտառային շրջաններում:

Գեղազարդային տեսակ է: Օգտագործվում է բնակավայրերի կանաչապատման համար: Ժողովրդական բժշկության մեջ կիրառվում է որպես վերքամոքիչ միջոց, և մկնատամի բուժման համար: Ամուր բնափայտը նույնպես կիրառելի է:

Ցաքի (ժանտափուշ) փշոտ

Paliurus spina-christi Mill.
Держи-дерево
(Գժնիկազգիներ – Rhamnaceae)

Շատ փշոտ, զիզգազածև ճյուղավորված թուփ է մինչև 3 մ բարձրության: Տերևները ձվաձև են, էլիպսաձև կամ օվալ, կլորավուն հիմքով, պինդ, կաշեկերպ, դեղնականաչ, կարճակոթ: Ծաղիկները մանր են, 1-ական, դեղնավուն, աստղաձև: Պտուղը չոր է, կաշեման, եռասերմ, շրջապատված 3 սմ տրամագծով պսակաձև կլորավուն ալիքավոր թաղանթով (ամռանը՝ բաց դեղնավուն, աշնանը՝ կարմրադարչնագույն): Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 400-1200 մ բարձրությունների վրա, երբեմն հասնում է մինչև 1600 մ բարձրության: Հանդիպում է անտառային տարածքների չոր, քարքարոտ, արևկող, լուսավոր լանջերին: Առաջացնում է նաև խիտ անանցանելի ցաքուտներ: Հանդիսանում է բուսականության շիբլյակ տիպի կարևորագույն տարրը: Տարածված է Իջևանի, ինչպես նաև Արագածի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Պարունակում է ալկալոիդներ, E խմբի վիտամիններ, դաբաղանյութեր: Օգտագործվում է կենդանի փշոտ ցանկապատեր ստեղծելու համար:

Ուռենի այծի, այծուռի

Salix caprea L.
Ива козья
(Ուռազգիներ - Salicaceae)

Երկտուն ծառ է 6-10 մ բարձրության: Տերևները ձվաձև են, երբեմն անհավասար ատամնաեզր: Ծաղիկները մանր են, միասեռ, խմբված կատվիկ ծաղկաբույլերում: Կատվիկները մեծ են, 3-4 սմ երկարության, խիտ, աղվամագոտ առանցքով: Պտուղը տուփիկ է: Ծաղկում է մարտ-ապրիլին մինչև տերևների զարգանալը, պտղաբերում՝ մայիսին:

Աճում է 900-2100 մ բարձրությունների վրա, անտառներում առանձին ծառերի տեսքով, անտառի վերին սահմանի մոտ խմբերով, երբեմն ձևավորում է փոքր պուրակներ: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի և Սևանի, ինչպես նաև մնացած անտառային ֆլորիստիկական շրջաններում:

Հայաստանում հայտնի են ուռենու բազմաթիվ տեսակներ: Անտառային տեսակներից բացի շատ են գետափերին աճող «լացող», «զամբյուղային» ուռենիները, որոնք պիտանի են կանաչապատման համար:

Ուռենիների կեղևը պարունակում է գլյուկոզիդներ (սալիցիլին, սալիցիդին), դաբաղանյութեր և այլն: Ճյուղերն օգտագործվում են թեթև կահույքի, զամբյուղների, կողովների և այլ իրերի պատրաստման համար, ընծյուղները և տերևները՝ որպես անասնակեր: Օգտագործվում են նաև էրոզիան կանխող տնկարկների համար: Գեղազարդ են:



▲ Ցախակեռաս բուրավեն
© Նազիկ Խանջյան



Ցաքի փշոտ
© Սվետլանա Հարությունյան



◀ Ուռենի այծի
© Sergey Mayorov (www.plantarium.ru)

Ուրց (խոռն) անդրկովկասյան

Thymus transcaucasicus Ronn.
Тимьян закавказский
(Խուլեղինջազգիներ - Lamiaceae)

Փոքրիկ, հոտավետ, հիմքի մոտ թույլ փայտացած ցողունով կիսաթփիկ է 10-15 սմ բարձրության: Տերևները մանր են, ամբողջական, երկարավունից մինչև ձվաձև ուրվագծով: Ծաղիկները երկշուրթ են, վարդագույն կամ բաց մանուշակագույն պսակով: Ծաղկաբույլերը գլխիկանման են, ցողունների գագաթին: Պտուղը քառաընկույզիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1900-2500 մ բարձրությունների վրա անտառային գոտում: Հանդիպում է անտառեզրերին, բացատներում, մարգագետիններում: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Պեղատու բույս է: Պարունակում է եթերայուղեր, հատկապես թիմոլ: Օգտագործվում է գիտական բժշկության մեջ որպես ցավազրկող, ախտահանող, հակաճճվային միջոց: Համեմունքային բույս է: Օգտագործվում է պահածոների, լիկյորի և օղու արտադրության մեջ: Հայաստանում հանդիպող գրեթե բոլոր տեսակների տերևները կարելի է օգտագործել որպես համեմունք:

Փշատենի նեղատերև

Elaeagnus angustifolia L.
Лох узколистный
(Փշատազգիներ - Elaeagnaceae)

Արծաթավուն սպիտակ երիտասարդ ճյուղերով, հաճախ կորացած բնով ծառ է մինչև 10 մ բարձրության: Տերևները նշտարած են կամ երկարավուն-էլիպսաձև, վերևից՝ կանաչ, ներքևից՝ սպիտակ արծաթափայլ: Ծաղիկները մանր են, քառաբլթակ, տերևների անութներում, արտաքինից՝ արծաթափայլ, ներսից՝ դեղին, ինքնատիպ հաճելի բուրմունքով: Պտուղը գլանաձև կորիզապտուղ է, թղթանման, փայլուն, դեղնակարմիր կամ դարչնագույն կեղևով և սպիտակ ալրանման պտղամսով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 400-1600 մ բարձրությունների վրա, գետերի, առուների ափերին, խոնավ տեղերում: Ունի էկոլոգիական մեծ ճկունություն՝ չորադիմացկուն է, աղադիմացկուն, պահանջկոտ չէ հողի նկատմամբ: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում: Հայտնի են կուլտուրական բազմաթիվ սորտեր՝ մատնափշատ, ունաբ փշատ և այլն, որոնք մշակվում են հատկապես Արարատյան դաշտավայրում:

Պտուղը՝ փշատը հաճելի համով հայտնի միրգ է: Պարունակում է շաքարներ, սպիտակուցներ, օրգանական թթուներ, վիտամիններ և այլն: Օգտագործվում է թարմ և չորացած վիճակում, հրուշակագործության մեջ՝ ալյուրի տեսքով: Ծաղիկներից ստացվող յուղը կիրառվում է օժանելիքների արտադրության համար: Բնափայտը հիանալի շինանյութ է, պարունակում է խեժ, որն օգտագործվում է բարձրորակ լաքերի, նկարչական ներկերի, սոսնձի արտադրության մեջ: Գեղազարդային տեսակ է, նաև՝ մեղրատու:

Փռչնի կովկասյան

Celtis caucasica Willd.
Каркас кавказский
(Փռչնազգիներ - Celtidaceae)

Փռված սաղարթով ծառ է 10-15 մ բարձրության: Տերևները պարզ են, մուգ մոխրականաչ, ձվաձև եզրագծով, սրացած գագաթով և սեպաձև հիմքով: Ծաղիկները 1-2-ական են՝ տեղավորված տերևածոցերում: Պտուղը մուգ գույնի գնդաձև հյութալի կորիզապտուղ է: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 600-1800 մ բարձրությունների վրա, անտառներում, քարքարոտ լեռնալանջերին: Նոսրանտառի հիմնական ծառատեսակներից է: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Ունի արժեքավոր խիտ, ամուր, ծանր, կանաչադեղնավուն կիրառելի բնափայտ: Պտուղներն ուտելի են, կեղևը պարունակում է դաբաղային և ներկող նյութեր: Գեղազարդային տեսակ է:



▲
Ուրց անդրկովկասյան
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան

Փշատենի նեղատերև
© Sergey Mayorov (www.plantarium.ru)



Փռչնի կովկասյան
▼
© Alim Gaziev (www.plantarium.ru)



Ագռավագի հասկանման

Actaea spicata L.
Воронец колосовидный
(Գորտնուկազգիներ - Ranunculaceae)

Բազմամյա ուղղաձիգ ցողուններով խոտաբույս է 30-60 սմ բարձրության: Տերևները խոշոր են, 2-3 անգամ փետրաձև հատված, երկարակոթ: Ծաղիկները մանր են, սպիտակ խմբված ողկույզանման ծաղկաբույլում: Պտուղը կլորավուն, սև հատապտուղ է: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 900-1700 մ բարձրությունների վրա, ստվերոտ խոնավ անտառներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի և Ապարանի, ինչպես նաև Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում (Խուստուփի անտառներում):

Դեղաբույս է: Պարունակում է տրանսակոնիտային թթու, ալկալոիդներ: Պտուղներից ստացվում է նաև սև ներկ:

 Թունավոր է:

Ադիանտում վեներայի վարս, գիսակ աստղկավարս

Adiantum capillus-veneris L.
Адиантум венерин волос
(Ադիանտազգիներ – Adiantaceae)

Բազմամյա կոճղարմատավոր պտեր է մինչև 35 սմ բարձրության: Տերևանման վայաները 2-3 անգամ փետրաձև բաժանված են անհավասարակող, եռանկյունաձև, գազաթնային լայնացած մասում ատամնաեզր հատվածների: Սորուսները՝ սպորների զետեղարանները գծային են: Սպորները հասունանում են հունիսի երկրորդ կեսից:

Աճում է 700-1600 մ բարձրությունների վրա, մշտապես խոնավացող ժայռաճեղքերում, տրավերտինների վրա: Հանդիպում է Իջևանի (Գետահովիտ), ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է: Օգտագործվում է նաև որպես սենյակային բույս:

 Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես «Խոցելի տեսակ» (VU կատեգորիա):

Առյուծագի (առյուծատունկ) սովորական

Leonurus cardiaca L.
Пустырник обыкновенный
(Խուլեղինջազգիներ - Lamiaceae)

Բազմամյա, հոտավետ, կոճղարմատավոր, քառանիստ ցողունով խոտաբույս է մինչև 1 մ բարձրության: Տերևները մատնաձև հատված են 3-5 բլթակների, ցողունի վրա հակադիր դասավորված: Ծաղիկները մանր են, փշածայր բաժակով, երկշուրթ վարդագույն պսակով: Ծաղկաբույլերը տերևանութներում դասավորված են օղակաձև: Պտուղը քառաընկույզիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 800-2000 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, բացատներում, թփուտների մեջ, գետերի հովիտներում, ինչպես նաև որպես մոլախոտ բնակավայրերի մոտ, աղբոտ տեղերում: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Հայտնի դեղաբույս է: Պարունակում է եթերայուղեր, շաքարներ, սապոնիններ, դաբաղանյութեր, օրգանական թթուներ և այլն: Օգտագործվում է որպես սիրտ-անոթային և կենտրոնական նյարդային համակարգերը հանգստացնող միջոց: Սերմերը պարունակում են ճարպայուղ, որն օգտագործվում է բարձրորակ լաբերի համար: Սեղրատու է:



▲ Ագռավագի հասկանման
© Elvir Izmailov (www.plantarium.ru)

Ադիանտում վեներայի վարս
© Նազիկ Խանջյան



Առյուծագի սովորական
© Boris Assyov



Ասպլեն կովալեզվային

Asplenium scolopendrium L.
Костенец сколопендровый
(Ասպլենագզիներ - *Aspleniaceae*)

Հաստ կոճղարմատով պտեր է մինչև 50 սմ բարձրության: Տերևանման վայաները փոկանման են, կաշեկերպ և մերկ: Սորուսները՝ սպորների գետեղարանները գծանման են, թեք շարքերով, զույգ-զույգ դասավորված վայաների ստորին մակերեսին: Սպորները հասունանում են հուլիսի երկրորդ կեսից:

Աճում է 900-1900 մ բարձրությունների վրա, ստվերոտ, խոնավ անտառներում, ժայռոտ տեղերում: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Գեղագարդային բույս է: Օգտագործվում է քարապարտեզների ձևավորման համար:

Աստղաբույս ամենամեծ

Astrantia maxima Pall.
Звездовка наибольшая
(Նեխուրագզիներ - *Apiaceae*)

Բազմամյա, ուղիղ ցողունով խոտաբույս է մինչև 50 սմ բարձրության: Ներքևի տերևները մատնածև եռաբաժան են, երկարակոթ, վերինները՝ մատաղիր: Ծաղիկները մանր են, վարդագույն պսակով՝ խմբված պարզ հովանոցում և շրջապատված ծաղիկներից 2 անգամ երկար վարդագույն էլիպսաձև փաթեթի տերևիկներով: Պտուղը գլանաձև է, երկայնակի բարակ կողերով: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1100-1900 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառի վերին սահմանի երկայնքով, ենթալայյան մարգագետիններում: Հանդիպում է բոլոր ֆլորիստիկական շրջաններում: Ունի լայն տարածում և սովորական է հատկապես անտառային շրջաններում:

Գեղաբույս է: Պարունակում է ալկալոիդներ:

Աստղագազար արևելյան, մանդակ

Astrodaucus orientalis (L.) Drude
Морковница восточная
(Նեխուրագզիներ - *Apiaceae*)

Երկամյա խոտաբույս է 100-150 սմ բարձրության: Տերևները մերկ են կամ թույլ թավոտ, բազմակի փետրաձև կտրտված, գծանման ծայրային մասերով: Ծաղիկները մանր են, սպիտակ՝ խմբված բարդ հովանոցներում: Պտուղն էլիպսաձև է, կողքերից թեթևակի սեղմված՝ պատված մանր խոզաններով: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1000-1500 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերին, ճանապարհների, բնակավայրերի մոտ: Հանդիպում է գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում: Շատ տարածված տեսակ է:

Սննդային բույս է: Օգտագործվում են մատղաշ ընծյուղներն ու տերևները:



◀ Ասպլեն կովալեզվային
© WWF- Հայաստան/
Միրանուշ Գալստյան

Աստղաբույս ամենամեծ
© Անուշ Ներսեսյան



Աստղագազար արևելյան
© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան



Ավելուկ (թրթնջուկ) գանգուր

Rumex crispus L.
Щавель курчавый
(Մատիտեղազգիներ - Polygonaceae)

Բազմամյա խոտաբույս է 50-80 սմ բարձրության: Տերևները երկարավուն նշտարած են, սրածայր, գանգուր ալիքավոր եզրերով, երկարակոթ: Ծաղիկները մանր են, երկսեռ, աննկատ ծաղկապատով: Ծաղկաբույլը երկարավուն է, հուրանաձև, կազմված 20-30 ծաղիկներից: Պտուղը եռակող ընկույզիկ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 1000-1800 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, մարգագետիններում, գետերի և առուների ափերին, խոնավ տեղերում, բանջարանոցներում: Հանդիպում է գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Շատ տարածված և օգտագործվող սննդային բույս է: Մատղաշ տերևներն օգտագործում են թարմ և չորացած վիճակում: Այդ նպատակով ավելի գերադասելի է գանգուր ավելուկը, որը Հայաստանի տարբեր շրջաններում օգտագործվող մի քանի այլ տեսակների համեմատությամբ պակաս դառնահամ է: Հաճախ կիրառվում է ժողովրդական բժշկության մեջ մարսողության խանգարման, լյարդի հիվանդությունների և դիզենտերիայի ժամանակ:

Ավելուկի տեսակներն ընդհանրապես պարունակում են օրգանական թթուներ, դաբաղանյութեր, վիտամիններ, ներկանյութ, սապոնիններ, լորձ և այլ նյութեր, որոնք տարբեր տեսակների մոտ ունեն որակական և քանակական տարբերություններ, որով պայմանավորված է դրանց համը՝ թթվաշ, տարբեր աստիճանի դառնություն, լյարծունություն և այլն: Որպես թթվաշահամ ավելուկ ավելի հայտնի է թթվաշանման ավելուկը (*Rumex acetoselloides* Bal.), որը լայն տարածում ունի Հյուսիսային Հայաստանում:

Արյունխմիկ դեղատու

Sanguisorba officinalis L.
Кровохлебка лекарственная
(Վարդազգիներ - Rosaceae)

Բազմամյա, կոճղարմատավոր խոտաբույս է մինչև 1 մ բարձրության: Արմատները տերևները կոթունավոր են, կենտ փետրածև, ձվածև, կամ օվալ, սղոցաեզր, վերևից փայլուն տերևիկներով: Ծաղկաբույլը գլխիկ է, կազմված բազմաթիվ, մանր, խիտ դասավորված, արմազույն կարմիր ծաղիկներից: Պտուղը չոր ընկույզիկ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 1200-1600 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, հետանտառային մարգագետիններում, ենթալայան բարձրախոտում: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Կոճղարմատը պարունակում է սապոնիններ, հատկապես սանգվիսորբին, դաբաղանյութեր, օրգանական թթուներ և այլն: Օգտագործվում է արյունահոսությունների դադարեցման, մաշկային հիվանդությունների, ստոմատիտի բուժման համար: Սեղրատու է: Կերաբույս է, նաև՝ գեղազարդային տեսակ:

Արջտակ գարնանային

Cyclamen vernal Sweet
Дряква весенняя
(Գնարուկազգիներ - Primulaceae)

Պալարավոր խոտաբույս է 5-10 սմ բարձրության: Տերևները երկարակոթ են: Տերևաթիթեղները լայն ձվածև են, սրտաձև հիմքով, եռանկյունաձև գագաթով, վերևից՝ արծաթագույն խալերով, ներքևից՝ բոսորագույն կարմիր: Ծաղիկները մանր են, բաց կամ մուգ մանուշակագույն, հազվադեպ սպիտակ, օվալաձև պսակաթերթերով: Պտուղը գնդաձև տուփիկ է: Ծաղկում է փետրվար-մարտին, պտղաբերում՝ մարտ-ապրիլին:

Աճում է 700-1200 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառի եզրերին, բացատներում: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Կողբ, Աչաջուր, Գետահովիտ):

Գեղազարդային տեսակ է: Ունի լայն կիրառություն ծաղկագործության մեջ:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես «Խոցելի տեսակ» (VU կատեգորիա):



▲
Ավելուկ գանգուր
© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան



▲
Արյունխմիկ դեղատու
© Rostislav Lezhoyev (www.plantarium.ru)



▶
Արջտակ գարնանային
© Yuri Pirogov (www.plantarium.ru)

Բազմոտիկ (բասրայջ) սովորական

Polypodium vulgare L.
Многоножка обыкновенная
(Բազմոտիկազգիներ - Polypodiaceae)

Սողացող կոճղարմատով փոքրիկ պտեր է 10-20 սմ, երբեմն 30 սմ բարձրությամբ: Տերևանման վայաները բաց կանաչավուն են, կաշեկերպ, փետրածն բաժանված: Սորուսները՝ սպորների զետեղարանները դեղնականաչավուն են՝ դասավորված վայաների ստորին մակերեսին կենտրոնական ջղի երկու կողմերում: Սպորները հասունանում են հուլիսի երկրորդ կեսից:

Աճում է 1200 - 2200 մ բարձրությունների վրա, սովորոտ, խոնավ անտառներում, ժայռոտ տեղերում: Հանդիպում է գրեթե բոլոր անտառային շրջաններում:

Գեղազարդային բույս է: Օգտագործվում է քարապարտեզների ձևավորման համար:

Գայլուկ (հունուկ) սովորական

Humulus lupulus L.
Хмель обыкновенный
(Կանեփազգիներ - Canabaceae)

Փաթաթվող ցողունով, երկտուն լիան է մինչև 10 մ երկարությամբ: Տերևները պարզ են, 3-5-բլթակավոր, սրտածն հիմքով, երկար կոթունով, ծածկված գեղձային մազիկներով: Ծաղիկները մանր են, միասեռ: Իգական ծաղկաբույլը կատվիկ է, կոնածն կախված, արականը՝ հուրան: Պտուղը միասեռն տափակ ընկույզիկ է՝ շրջապատված պահպանող ծաղկապատով: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է մինչև 1000 մ բարձրության վրա, լայնատերև անտառներում, թփուտների մացառուտներում, ձորերի խոնավ տեղերում: Տարածված է Լոռու, Իջևանի, ինչպես նաև Դարեղեգիսի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Կոներից՝ իգական ծաղկաբույլերից ստանում են լուպուլին, որը պարունակում է եթերայուղ, խեժ, մոմ, դառը նյութեր: Օգտագործում են որպես նյարդային համակարգը հանգստացնող, հակաբորբոքային, ցավազրկող, ախորժաբեր միջոց: Եթերայուղը հանրահայտ վալուկարդինի բաղադրամասերից է: Կոները լայնորեն կիրառվում են նաև գարեջրի արտադրության մեջ, վերջինիս հաճելի բույր և դառնություն տալու համար:

Գետնաբաղեղ բաղեղանման

Glechoma hederacea L.
Будра плющевидная
(Խուլեղինազգիներ - Lamiaceae)

Բազմամյա, փռված կամ սողացող ընձյուղներով խոտաբույս է 15-40 սմ բարձրությամբ: Տերևները երիկամածն են, աղեղնաեզր, կոթունավոր: Ծաղիկները երկշուրթ են, կապտամանուշակագույն պսակով, 2-4-ական օղակածն դասավորված տերևածոցերում: Պտուղը քառընկույզիկ է: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 800-1300 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, բացատներում, մարգագետիններում: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Շիրակի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու բույս է: Պարունակում է եթերայուղեր, վիտամիններ, դաբաղանյութեր և այլն: Օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ, հատկապես, մաշկային հիվանդությունների՝ էկզեմայի, քորի, այրվածքների դեպքում:

 Թունավոր է:



▲ Բազմոտիկ սվորական
© Vasyi Heluta (www.plantarium.ru)



▲ Գայլուկ սվորական
© Sergey Mayorov (www.plantarium.ru)



◀ Գետնաբաղեղ բաղեղանման
© Pavel Evseenkov (www.plantarium.ru)

Գետնամորի (իծամորի) անտառային

Fragaria vesca L.
Земляника лесная
(Վարդագլուխներ - Rosaceae)

Բազմամյա, հաստ կոճղարմատով, սողացող և արմատակալվող ընձյուղներով խոտաբույս է 10-25 սմ բարձրությամբ: Տերևները եռմասնյա են, կազմված լայն էլիպսաձև, սղոցաեզր տերևիկներից և երկար կոթունից: Ծաղիկները հնգատիպ են, սպիտակ կամ բաց վարդագույն պսակաթերթերով, 1-ական կամ սակավածաղիկ ծաղկաբույլում: Պտուղը գնդաձև կամ օվալ, կարմիր կամ բալի գույնի կեղծ հատապտուղ է, վրան բազմաթիվ մուգ գույնի սերմերով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1700-2200 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, բացատներում, թփուտների մեջ: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում: Գետնամորին ունի բազմաթիվ կուլտուրական սորտեր, որոնցից Հայաստանում աճեցվում է իսկական ելակը, անանասայինը, վիրջինյանը (ամերիկյան) և այլն:

Հոտավետ պտուղներն ուտելի են թարմ և վերամշակված ձևով: Դեղաբույս է: Պտուղները պարունակում են շաքարներ, ասկորբինային և այլ թթուներ, վիտամիններ, դաբաղային և պեկտինային նյութեր: Գիտական բժշկության մեջ օգտագործվում է որպես միզամուղ միջոց, նյութափոխանակության խանգարման և ավիտամինոզի ժամանակ: Տերևների թուրմն ունի նաև լեղամուղ, արյունահոսությունը դադարեցնող հատկություն և կիրառվում է որպես հումք վիտամինային թեյերի համար:

Գնարբուկ խոշորաբաժակ

Primula macracalyx Bunge
Первоцвет крупночашечный
(Գնարբուկագլուխներ - Primulaceae)

Բազմամյա խոտաբույս է 10-25 սմ բարձրությամբ: Տերևները երկարավուն-ձվաձև են, կնճռոտ, ներքևում լայնացող կոթով, առաջացնում են արմատամերձ վարդակ: Ծաղիկները հնգատիպ են, վառ դեղին պսակաթերթերով: Ծաղկաբույլը հովանոցանման է, երկար ծաղկալաքի վրա՝ կազմված 3-15 ծաղիկներից: Պտուղը երկարավուն, բազմասերմ տուփիկ է: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1000 - 2100 մ բարձրությունների վրա, անտառներում, բացատներում, մարգագետիններում, թփուտների մեջ: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Ծաղիկները պարունակում են սապոնիններ, ֆենոլային գլիկոզիդներ, եթերայուղ, ֆերմենտներ, կարոտին, վիտամիններ (C, E), արմատներում կան նաև դաբաղանյութեր: Օգտագործվում է բրոնխիտի, թոքաբորբի, նյարդերն ամրապնդելու, միգրենի ժամանակ, ինչպես նաև որպես միզամուղ, խորխաբեր, քնաբեր միջոց: Գեղազարդային տեսակ է:

Դաղձ (անանուխ) երկարատերև

Mentha longifolia (L.) Huds.
Мята длиннолистная
(Խուլեղինջագլուխներ - Lamiaceae)

Բազմամյա, սողացող կոճղարմատով, հոտավետ խոտաբույս է 40-100 սմ բարձրությամբ: Տերևները երկարավուն կամ էլիպսաձև են, սղոցաեզր, սպիտակավուն թավոտությամբ, քառանիստ ցողունի վրա նստադիր: Ծաղիկները մանր են, երկշուրթ, բաց մանուշակագույն: Ծաղկաբույլը բազմածաղիկ է, խիտ հասկանման: Պտուղը քառաբնկույզիկ է: Ծաղկում է հունիսից-օգոստոս:

Աճում է 700-2200 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, բացատներում, խոնավ մարգագետիններում, գետերի և առուների ափերին: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է, եթերայուղատու: Պարունակում է հոտավետ եթերայուղ, որի հիմնական բաղադրամասը մենթոլն է, որով պայմանավորված է բույսի դուրեկան հոտը: Օգտագործվում է որպես քրտնաբեր, խորխաբեր միջոց մրսածության ժամանակ և աղեստամոքսային խանգարումները կարգավորող միջոց: Եթերայուղը կիրառվում է նաև հրուշակեղենի, ոչ ալկոհոլային խմիչքների, օժանելիքների բուրավետացման համար: Մեղրատու բույս է:



◀ Գետնամորի անտառային
 © WWF-Հայաստան
 / Սիրանուշ Գալստյան

Գնաբբուկ խոշորաբաժակ
 © WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան



Դաղձ երկարատերև
 © WWF-Հայաստան / Սիրանուշ Գալստյան



Դանդուռ բանջարանոցային

Portulaca oleracea L.
Портулак огородный
(Դանդուռազգիներ - Portulacaceae)

Միամյա խոտաբույս է 10-30 սմ երկարությամբ: Ցողունները մսալի են, գետնատարած, հիմքից ծյուղավորվող: Տերևները մանր են, լայն նշտարած, նստադիր, հյութալի: Ծաղիկները մանր են, վառ դեղին պսակաթերթերով, 1-3 հատ տերևների անուփներում: Պտուղը տուփիկ է: Սերմերը մանր են, կլորավուն, սևագորշավուն, փայլուն: Ծաղկում է մայիսից՝ ամբողջ վեգետացիայի ընթացքում:

Աճում է մինչև 1800 մ բարձրությունը, ճամփեզրերին, աղբոտ տեղերում, որպես մոլախոտ այգիներում, բանջարանոցներում և ցանքերում: Հանդիպում է գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում: Ավելի հաճախ տարածվում է ոռոգման ջրի միջոցով:

Դեղաբույս է: Պարունակում է C և E վիտամիններ, կարոտին, լորձային նյութեր և այլն: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է լյարդի և երիկամների հիվանդությունների ժամանակ: Սիրված ուտելի բույս է: Օգտագործվում է թարմ և վերամշակված ձևով:

Դաշտավլուկ (հուրանախոտ) կաղնուտային

Poa nemoralis L.
Мятлик дубравный
(Դաշտավլուկազգիներ - Poaceae)

Բազմամյա խոտաբույս է 40-100 սմ բարձրությամբ: Ցողունը սնամեջ է, մի փոքր հաստացած հանգույցներով: Տերևները նեղ գծային են, ներքևում՝ ցողունը գրկող տերևապատյանով: Ծաղիկները կազմված են 3-ական ծաղկային և հասկային թեփուկներից: Ծաղկաբույլը հուրանած է, փուխր, մինչև 20 սմ երկարությամբ: Պտուղը հատիկ է: Ծաղկում է հունիս-օգոստոսին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:

Աճում է 800-2200 մ բարձրությունների վրա, կաղնուտներում, կաղնու-բոխու, հաճարենու և այլ տիպի անտառներում, բացատներում: Հանդիպում է գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Արժեքավոր կերաբույս է, նաև՝ ճիմառաջացնող:

Եղեսպակ (մատնոցախոտ) կաչուն

Salvia glutinosa L.
Шалфей клейкий
(Խուլեղինզազգիներ - Lamiaceae)

Բազմամյա խոտաբույս է 70 սմ մինչև 1,5 մ բարձրությամբ: Տերևները խոշոր են, բարակ, սրտանետած, երկարակոթ: Ծաղիկները մեծ են, դեղին, երկշուրթ, բաց երախով, ծածկված կաչուն նյութ արտադրող գեղձային մազիկներով: Ծաղկաբույլը հուրանած է, ծաղիկները դասավորված են օղակներով: Պտուղը քառաբնկույզիկ է: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1600-2200 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, բացատներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, ինչպես նաև Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է:



▲ Դանդուռ բանջարանոցային
© WWF-Հայաստան / Սիրանուշ Գալստյան

Դաշտավլուկ կաղնուտային
© Elvir Izmailov (www.plantarium.ru)



Եղեսպակ կպչուն
© Tamara Galstyan (www.plantarium.ru)



Եղերդակ (Ճարձատուկ) սովորական

Cichorium intybus L.
Цикорий обыкновенный
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, իլիկածն արմատով, ճյուղավորված ցողունով խոտաբույս է 20-150 սմ բարձրության: Ներքևի վարդակային տերևները փետրածն բաժանված են, ատամնաեզր, վերինները՝ ավելի մանր, ամբողջական: Ծաղիկները մանր են, բոլորը լեզվակավոր, երկնագույն կամ նուրբ կապույտ՝ խմբված զանբյուղ ծաղկաբույլերում: Պտուղը փուփուլավոր սերմիկ է: Ծաղկում է մայիսից մինչև ուշ աշուն:

Աճում է 800 - 2100 մ բարձրությունների վրա, մարգագետիններում, անտառեզրերին, բացատներում, ճանփեզրերին, չոր տեղերում, բնակավայրերի մոտ: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Պարունակում է ինուլին, ցիկորին, գլիկոզիդներ, շաքարներ, օրգանական թթուներ, վիտամիններ, խեժ և այլ նյութեր: Օգտագործվում է գիտական բժկության մեջ որպես միզամուղ և լեղամուղ միջոց, շաքարախտի և այլ հիվանդությունների ժամանակ: Ուտելի է: Օգտագործվում են մատղաշ ընձյուղները և տերևները, իսկ չորացած և աղացած արմատը, հաճախ կաղնու պտուղների հետ միասին, ունի լայն կիրառություն որպես սուրճին փոխարինող:

Եղինջ երկտուն

Urtica dioica L.
Крапива двудомная
(Եղինջազգիներ - Urticaceae)

Բազմամյա, երկտուն, այրող գեղձային մազիկներով ծածկված խոտաբույս է 1,5 - 2 մ բարձրության: Տերևները մուգ կանաչ են, երկարավուն ձվածն, երկար կոթունով և տերևակիցներով: Ծաղիկները մանր են, միասեռ, կանաչ, փոքրիկ կծիկներով խմբված հասկանման կախված ծաղկաբույլերում: Պտուղը դեղնամոխրագույն ընկույզիկ է: Ծաղկում է հունիսից մինչև ուշ աշուն:

Աճում է լեռնային բոլոր գոտիներում սկսած 600 մ բարձրությունից, անտառային գոտում, տափաստաններում, գետերի հովիտներում, մարգագետիններում, աղբոտ տեղերում, բնակավայրերի մոտ: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Հարուստ է պոլիվիտամիններով, պարունակում է նաև գլիկոզիդներ, օրգանական թթուներ, դաբաղային և այլ նյութեր: Ունի արյունը մակարդող (հատկապես վիտամին K), հեմոգլոբին ավելացնող, հարթ մկանների տոնուսը բարձրացնող հատկություն, որի համար գիտական բժշկության մեջ օգտագործվում է տարբեր տիպի ներքին արյունահոսությունները դադարեցնելու համար: Կիրառվում է ավիտամինոզը բուժելու համար: Օգտագործվում է նաև տնտեսական նպատակով. տերևներից՝ կանաչ ներկ, ցողունից՝ կոշտ թելեր ստանալու համար:

Սիրված սննդային բույս է: Երիտասարդ ընձյուղներն ուտելի են թարմ և վերամշակված ձևով:

Երեկորնիկ, գիշերային մանուշակ

Hesperis matronalis L.
Ночная фиалка
(Կաղամբազգիներ – Brassicaceae)

Երկամյա, հազվադեպ բազմամյա խոտաբույս է 30-120 սմ բարձրության: Տերևները էլիպսածն են, սղոցաեզր՝ ծածկված կարճ մազիկներով, հերթադիր դասավորությամբ: Ծաղիկները 4 մանուշակագույն կամ վարդագույն, հազվադեպ սպիտակ պսակաթերթերով են, գեղձային մազիկներով ծածկված ծաղկակոթով: Պտուղը բացվող, երբեմն չբացվող երկար պատիճ է, միաշարք սերմերով: Ծաղկում է մայիս - հունիսին, պտղաբերում՝ հունիս - օգոստոսին:

Աճում է 800-2400 մ բարձրությունների վրա, անտառներում, քիուտներում, մարգագետիններում: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Սերմերը յուղատու են: Պարունակում են ճարպեր, եթերայուղեր, սապոնիններ, ալկալոիդներ և այլ նյութեր: Դրանք, ինչպես նաև տերևները, օգտագործում են որպես քրտնաբեր և միզամուղ միջոց:



Եղերդակ սվորական
© Andrey Lubchenko (www.plantarium.ru)



Եղինգ երկտուն
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան

Երեկորնիկ
© Natalya Demchenko (www.plantarium.ru)



Երեքնուկ մարգագետնային

Trifolium pratense L.
Клевер луговой
(Բակլազգիներ – Fabaceae)

Բազմամյա, ճյուղավորված բարակ ցողուններով խոտաբույս է 20-50 սմ բարձրության: Տերևը կազմված է 3 հակաձվածև տերևիկներից, երկարակոթ է, սրածայր տերևակիցներով: Ծաղիկները մանր են, կարմրավուն, կազմված դրոշից, թևերից և նավակից, որոնք ներքևի մասում խողովակաձև ծուլված են: Ծաղկաբույլը գլխիկ է: Պտուղն ունի է, 1-2 սերմերով: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1100-2000 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, խոնավ մարգագետիններում: Ունի լայն տարածում և հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Կերային բույս է: Օգտագործվում են բույսի բոլոր մասերը, թարմ և չորացած (կանաչ զանգված, ծղոտ, խոտալյուր): Մշակվում է Լոռու մարզում որպես կերաբույս:

Երեքնուկ ցեղի տեսակները, ինչպես բակլազգիների բազմաթիվ ցեղերի՝ կորնզանի (*Onobrychis Hill*), առվույտի (*Medicago L.*), եղջերառվույտի (*Lotus L.*), քարառվույտի (*Coronilla L.*) և այլնի ներկայացուցիչները, սպիտակուցներով հարուստ բարձրարժեք կերաբույսեր են: Դա կապված է նրանց արմատների վրա ապրող պալարաբակտերիաների հետ, որոնք յուրացնում են օդի ազոտը: Դրա համար էլ ուսելի տեսակների սերմերը (լոբի, ոսպ, սիսեռ, ոլոռ և այլն) հարուստ են բուսական սպիտակուցներով և սննդարար են: Միաժամանակ բակլազգիների բույսերն ունեն անփոխարինելի նշանակություն գյուղատնտեսության համար՝ հարստացնում են հողն ազոտով:

Երիցուկ (հավածաղիկ) երիցուկանման

Matricaria matricarioides (Less.) Porter ex Britt.
Ромашка ромашковидная
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Միամյա խոտաբույս է մինչև 30 սմ բարձրության: Տերևները փետրածև հատված են, ցողունը գրկող: Ծաղկաբույլը զամբյուղ է կազմված կանաչ միայն խողովակավոր ծաղիկներից: Պտուղը երկարավուն սերմիկ է, մեջքի կողմից՝ ուռուցիկ, փորի կողմից՝ 3-5 կողերով: Ծաղկում է մայիսից մինչև ուշ աշուն: Բույսի բոլոր մասերն ունեն սուր հոտ: Իր ազգակից երիցուկանմաններից տարբերվում իր ոչ երիցուկային կառուցվածքով՝ զամբյուղի եզրային լեզվակավոր ծաղիկների բացակայության պատճառով:

Աճում է մինչև 1800 մ բարձրության վրա, անտառի եզրին, գետերի ափերին, նաև բնակավայրերի շուրջը, ճանապարհների մոտ, աղբոտ տեղերում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Վերին Ախուրյանի, Շիրակի, Երևանի, Դարեղեգիսի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է եթերայուղեր, ֆլավոնոիդներ, կումարին և այլն: Թույլատրվում է միայն արտաքին օգտագործման համար որպես հակաբորբոքային և հակամեխիչ միջոց (ողողումներ, թրջոցներ, լոգանք և այլն): Այն փոխարինում է գիտական բժշկության մեջ ավելի լայն կիրառություն ունեցող դեղատու երիցուկին (*Matricaria recutita L.*), որն ունի լեզվակավոր սպիտակ ծաղիկներ և Հայաստանում չի աճում:

Զգայնուկ (հինածաղիկ) սովորական

Impatiens noli-tangere L.
Недотрога (бальзамин) обыкновенная
(Բալզամինազգիներ - Balsaminaceae)

Միամյա, հյութալի, հանգույցներում հաստացած ցողունով խոտաբույս է 80-120 սմ բարձրության: Տերևները շատ բարակ են, էլիպսաձև, սղոցաեզր, կոթունավոր, վերևից՝ կանաչ, ներքևից՝ թխակապտավուն: Ծաղիկները 3-5-ական են, խոշոր, լինոնի դեղին, երկարացած ծայրում թեքված խթանով: Պտուղը երկարավուն տուփիկ է բազմաթիվ կլորավուն դարչնագույն սերմերով: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին: Այս բույսի սերմերն ունեն տարածման յուրահատուկ ձև. հասուն տուփիկների փեղկերն աննշան հպումից բացվում են և սերմերն անսպասելիորեն ցրվում են տարբեր ուղղություններով:

Աճում է 1400-1900 մ բարձրությունների վրա, անտառներում, խոնավ տեղերում, գետերի ափերին: Հանդիպում է առատորեն Իջևանի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Պարունակում է ածխաջրեր, դաբաղամյութեր, ալկալոիդներ, վիտամին C և այլ նյութեր: Կիրառվում է շաքարախտի, ռևմատիզմի, միզաքարային հիվանդության ժամանակ: Գեղազարդային տեսակ է: Ծաղկագործության մեջ հայտնի է իր բազմաթիվ սորտերով:

Երեքնուկ մարգագետնային ▶
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



Երիցուկ երիցուկանման
© Sergey Appolonov (www.plantarium.ru)



Զգայնուկ սովորական
© Sergey Appolonov (www.plantarium.ru)



Չիվան հսկայական, դանթափար

Cephalaria gigantea (Ledeb.) Bobr.
Головчатка гигантская
(Ակրանազգիներ - Dipsacaceae)

Բազմամյա բույս է 100-150 սմ բարձրությամբ: Տերևները խոշոր են, գրեթե մերկ, փետրածև բաժանված եզրային 6 զույգ մասերի: Ծաղիկները մանր են, եզրայինները՝ մի փոքր մեծացած, բոլորը՝ դեղնավուն, քառաբլթակ պսակով: Ծաղկաբույլերը գլխիկանման են, խոշոր, տափակ, նեքևից շրջապատված կղմինդրածև դասավորված կանաչավուն ծածկոցի թերթիկներով: Պտուղն իլիկածև է, քառանկյունի: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1700-2500 մ բարձրությունների վրա, անտառի վերին սահմանի մոտ, բացատներում, մարգագետիններում, անտառային ճանապարհների եզրերին: Հաճախ աճում է խմբերով՝ առաջացնելով խիտ բուսուտներ: Հանդիպում է գրեթե բոլոր անտառային ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Լայն կիրառություն ունի ժողովրդական բժշկության մեջ որպես քրտնաբեր, խորխաբեր և ջերմ իջեցնող միջոց, հատկապես, շնչառական ուղիների հիվանդությունների ժամանակ:

Թիթեռնիկախլորձ կանաչածաղիկ

Platanthera chlorantha (Custer) Rehb.
Любка зеленоцветковая
(Խլորձազգիներ - Orchidaceae)

Բազմամյա, երկու երկարավուն հաստ պալարներով խոտաբույս է 30-50 սմ բարձրության ծաղկակիր ընձյուղով: Տերևները 2 են, լայն էլիպսածև, ամբողջաեզր թիթեղով: Ծաղիկները խոշոր են, բուրավետ, կանաչավուն սպիտակ, ծաղկակիցների անութներում: Ծաղկաբույլը բազմածաղիկ գլանածև հասկ է: Պտուղն երկարավուն տուփիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 700-2700 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերի մարգագետիններում, բացատներում: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պալարավոր խլորձազգիների այլ տեսակների նման, չորացած պալարները պարունակում են հեշտությամբ լուծվող լորձ, որը կազմված է հիմնականում մաննանա պոլիսախարիդից: Բացի այդ դրանք պարունակում են այլ շաքարներ, օսլա, սպիտակուցներ, խեժանյութեր, հանքային աղեր: Սալեպը՝ չորացած պալարների այլուրից ստացվող լորձանման զանգվածը, գիտական և ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է աղեստամոքսային ուղու, վերին շնչառական ուղիների հիվանդությունների, թունավորումների ժամանակ: Գեղազարդային տեսակ է:

Իշառվույտ դեղատու

Melilotus officinalis (L.) Pall.
Донник лекарственный
(Բակլազգիներ - Fabaceae)

Երկամյա, խիտ ճյուղավորված ցողունով խոտաբույս է 40-150 սմ բարձրությամբ: Տերևները եռմասնյա են, երկարավուն-օվալ սղոցաեզր տերևիկներով: Ծաղիկները մանր են, դեղին՝ խմբված երկար ողկույզներում: Պտուղը չբացվող ունդ է, մանր, ձվածև, լայնակի կնճռոտ, 1, երբեմն, 2 սերմով: Ծաղկում է հունիսից սկսած, պտղաբերում մինչև օգոստոս:

Աճում է 700-2100 մ բարձրությունների վրա, գրեթե ամենուրեք՝ թփուտներում, մարգագետիններում, այգիներում, ճամփեզրերին և այլն: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է ֆլավոնոիդներ, օրգանական թթուներ և այլ նյութեր, հիմնականում՝ հաճելի հոտով լակտոններ: Գիտական բժշկության մեջ օգտագործվում է որպես վերքերը բուժող միջոց: Ժողովրդական բժշկության մեջ հայտնի է որպես ցավազրկող, հողային ռևմատիզմը բուժող, ինչպես նաև խորխաբեր, միզամուղ, ջերմիջեցնող միջոց: Լայն կիրառություն ունի ծխախոտի, խմիչքների, օժանելիքի արտադրության մեջ: Բարձրորակ կերաբույս է: Մեղրատու է:



◀ Ջիվան
հսկայական
© Elena Antonova
(www.plantarium.ru)

Թիթեռնիկախոլորձ կանաչածաղիկ
© <http://vahemart.livejournal.com>



Իշառվույտ դեղատու
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



Լերկաբշտիկ մոծակային

Gymnadenia conopsea (L.) R. Br.
Кокушник комарниковый
(Խոլորձազգիներ - Orchidaceae)

Բազմամյա խոտաբույս է 25-60 սմ բարձրության: Պալարներն 2 են, երկարավուն տափակած: Տերևները նշտարած են, հյութալի: Ծաղիկները մանր են, հոտավետ, մանուշակավարդագույն կամ բաց մանուշակագույն, լավ արտահայտված թելանման խթանով: Ծաղկաբույլը բազմածաղիկ խիտ հասկ է: Պտուղն իլիկանման տուփիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 1200-3000 մ բարձրությունների վրա, լուսավոր անտառներում, անտառեզրերին, բացատներում, թփուտների մեջ, երբեմն ենթալպյան մարգագետիններում: Հանդիպում է Հայաստանի բոլոր անտառային ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու բույս է (կիրառությունը՝ թիթեմիկախոլորձի նման): Գեղազարդային տեսակ է:

Խատուտիկ դեղատու

Taraxacum officinale Wigg.
Одуванчик лекарственный
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, հաստ արմատով, տերևների արմատներձ վարդակով խոտաբույս է մինչև 15 սմ բարձրության: Տերևների ձևը փոփոխական է, բայց հիմնականում երկարավուն նշտարածև ուրվագծով, փետրածև հատված: Ծաղիկները վառ դեղին են, բոլորը լեզվակավոր՝ խմբված զամբյուղ ծաղկաբույլում, վարդակի կենտրոնից զարգացող ծաղկասլաքի վրա: Պտուղը փուփուլավոր սերմիկ է: Ծաղկում է վաղ գարնանից մինչև ուշ աշուն:

Աճում է ամենուրեք՝ բոլոր լեռնային գոտիներում և ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու, ուտելի, մեղրատու և գեղազարդ բույս է: Արմատը պարունակում է եռատերապենային միացություններ (տարաքսաստերոլ, տարաքսերոլ և այլն), խոլին, տարաքսոլ, շաքար, խեժ, կաուչուկ և այլն: Օգտագործվում է որպես մարսողական գեղձերի սեկրեցիան ակտիվացնող, լեղամուղ, ախորժաբեր միջոց: Տերևները և զամբյուղները պարունակում են կարոտինոիդներ, վիտամիններ, սերմիկը՝ տարբեր ճարպաթթուներ: Թարմ տերևները և դրանց եփուկն ուտելի են: Օգտագործվում են ժողովրդական բժշկության մեջ որպես ճնշումը կարգավորող:

Խնկածաղիկ (զվիրակ) սովորական

Origanum vulgare L.
Душица обыкновенная
(Խուլեղիմջազգիներ - Lamiaceae)

Բազմամյա հոտավետ կոճղարմատով խոտաբույս է 50-60 սմ բարձրության: Տերևներն երկարավուն ձվածև են, հակադիր դասավորված քառանիստ ցողունի վրա: Ծաղիկները մանր են, վարդամանուշակագույն, բազմաթիվ՝ խմբված գազաթնային բարդ վահանիկա-հուրանած ծաղկաբույլերում: Պտուղը քառաընկույզիկ է: Ծաղկում է հունիսից սկսած մինչև օգոստոս:

Աճում է 1200-2300 մ բարձրությունների վրա, անտառներում, բացատներում, անտառեզրերին, մարգագետիններում, թփերի մացառուտներում: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Հայտնի եթերայուղատու բույս է: Պարունակում է հաճելի բուրմունքով եթերայուղեր, վիտամին C, դաբաղանյութեր և այլն: Օգտագործվում է գիտական բժշկության մեջ որպես կենտրոնական նյարդային համակարգը հանգստացնող, աղեստամոքսային հիվանդությունները բուժող, ախորժաբեր և մարսողությունը լավացնող միջոց, ինչպես նաև անքնության դեմ: Բուրավետ եթերայուղն օգտագործվում է լիկյորների և հոտավետ թեյերի արտադրության մեջ, սննդի արդյունաբերությունում:



▲ Լերկաբշտիկ մոծակային
© Sergey Banketov (www.plantarium.ru)



▲ Խատուտիկ դեղատու
© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան



◀ Խնկածաղիկ սվորական
© Evgeny Komarov (www.plantarium.ru)

Խոլորձ (որձարմատ) արական

Orchis mascula (L.) L.
Ятрышник мужской
(Խոլորձազգիներ - Orchidaceae)

Բազմամյա, պալարավոր, կանաչ, հաստավուն մսալի երկարավուն արմատամերձ տերևներով խոտաբույս է 30 - 50 սմ բարձրության: Պալարները ձվաձև երկարավուն են կամ էլիպսաձև: Ծաղիկները բաց մանուշակագույն են կամ վարդագույն, հազվադեպ՝ սպիտակ: Ծաղկաբույլը բազմաժաղիկ, խիտ գլանաձև հասկ է: Պտուղը իլիկանման տուփիկ է: Ծաղկում է մայիս - հունիսին, պտղաբերում՝ հուլիս - օգոստոսին:

Աճում է 700-2600 մ բարձրությունների վրա, լուսավոր անտառներում, բացատներում, խոնավ մարգագետիններում: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է (կիրառությունը՝ թիթեռնիկախոլորձի նման): Գեղազարդային տեսակ է:

Ծնեփակ (ծնեբեկ) դեղատու

Asparagus officinalis L.
Спаржа лекарственная
(Ծնեփակազգիներ - Asparagaceae)

Բազմամյա, կոճղարմատավոր խոտաբույս է 60-150 սմ բարձրության: Ցողունները՝ կլադոդիումները տերևանման են, դասավորված փնջերով հետ զարգացած թաղանթային տերևների անուրներում: Ծաղիկները միասեռ են, ձագարած, կանաչավուն, երբեմն դեղնավուն ծաղկապատով և ներքև թեքված կոթունով: Պտուղները մանր են, զնդած, նարնջակարմիր, սև սերմերով: Ծաղկում է մայիս - հունիսին, պտղաբերում՝ հունիս - հուլիսին:

Աճում է 600-2000 մ բարձրությունների վրա, անտառի ստորին սահմանի երկայնքով, թփուտների մեջ, ծորակներում, մարգագետիններում: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Կոճղարմատը և երիտասարդ ընձյուղները պարունակում են ասպարագին ալկալոիդը, օրգանական թթուներ, շաքարներ, վիտամիններ և այլն, սերմերը՝ ճարպեր: Օգտագործվում է որպես միզամուղ, ջերմ իջեցնող, արյան շրջանառությունը և մարսողությունը կարգավորող միջոց: Երիտասարդ ընձյուղներն ուտելի են թարմ և վերամշակված:

Կանթեղախոտ (ծիծեռնախոտ) մեծ

Chelidonium majus L.
Чистотел большой
(Կակաչազգիներ - Papaveraceae)

Բազմամյա խոտաբույս է 30-80 սմ բարձրության: Տերևները կենտ փետրածև են, աղեղնաեզր մասերով, ներքևիները՝ երկար կոթերով, վերինները՝ նստադիր: Ծաղիկները 4 վառ դեղին պսակաթերթերով են, խմբված հովանոցանման ծաղկաբույլերում: Պտուղը պատիճանման տուփիկ է, բացվում է երկու փեղկով՝ հիմքից դեպի գագաթ: Բույսի բոլոր մասերը պարունակում են նարնջագույն կաթնախյութ: Ծաղկում է մայիսից սկսած մինչև աշուն:

Աճում է 500-1300 մ բարձրությունների վրա, թփուտների մեջ, անտառեզրերին, որպես մոլախոտ բնակավայրերի մոտ, այգիներում, աղբոտ տեղերում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, ինչպես նաև Երևանի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Բոլոր մասերը պարունակում են ալկալոիդներ (օպիումին մոտ), հատկապես խելիդոնին, խելիռուբին, հոմոխելիդոնին և այլն: Գիտական բժշկության մեջ ունի բազմաբնույթ կիրառություն, այդ թվում, մաշկային հիվանդությունների՝ գորտնուկի, պալարախոտի, չփակվող վերքերի, քուսի բուժման համար: Արմատներից ստացվում է դեղին գույնի ներկ:

 Բույսի բոլոր մասերը թունավոր են:



▲
Խղլորձ արական
© Անուշ Ներսեսյան



▲
Ծնեփակ դեղատու
© Նազիկ Խանջյան

Կանթեղախոտ մեծ
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



Կատվալեզու եռաբաժան

Bidens tripartita L.
Черда трехраздельная
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Միամյա խոտաբույս է 10-60 սմ բարձրության: Տերևներն ամբողջական են կամ եռաբաժան, հակադիր դասավորված: Ծաղիկները մանր են, երկսեռ, դեղին, խողովակավոր, երբեմն զարգանում են նաև եզրային լեզվակավոր ծաղիկները: Ծաղկաբույլը զամբյուղ է: Պտուղը երկարավուն տուփիկ է: Ծաղկում է հուլիսից մինչև սեպտեմբերի վերջը:

Աճում է 800-1600 մ բարձրությունների վրա, անտառամերձ գետերի, առուների ափերին, խոնավ տեղերում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Պարունակում է ֆլավոնոիդներ, կարոտին, դաբաղանյութեր, ասկորբինաթթու, լորձալին և դառը նյութեր: Օգտագործվում է գիտական և ժողովրդական բժշկության մեջ որպես քրտնաբեր, զարկերակային ճնշումն իջեցնող, սրտանկանի կծկումները կարգավորող միջոց, իսկ մանկաբուժության մեջ՝ դիաթեզների ժամանակ (բուժիչ լոգանքների ձևով):

Կատվախոտ (մրվան) դեղատու

Valeriana officinalis L.
Валериана лекарственная
(Կատվախոտազգիներ - Valerianaceae)

Բազմամյա խոտաբույս է 40-150 սմ բարձրության: Կոճղարմատը խիստ կարճացած է, բազմաթիվ երկար պարանանման արմատներով: Տերևները կենտ փետրածև են, 3-10 երկարավուն տերևիկներով: Ծաղիկները մանր են, սպիտակավուն կամ բաց վարդագույն, ձագարածն պսակով: Ծաղկաբույլը գագաթնային վահանիկ է: Սերմը երկարավուն է, վերևում՝ փուփուկով: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին: Սերմերն ունեն կատուների համար սիրելի վալերիանայի նուրբ հոտ: Այստեղից էլ առաջացել է բույսի հայերեն կատվախոտ անունը:

Աճում է 1500-2200 մ բարձրությունների վրա, անտառներում, բացատներում, անտառի եզրերին, մարգագետիններում: Հանդիպում է բոլոր անտառային ֆլորիստիկական շրջաններում:

Հայտնի դեղաբույս է: Կոճղարմատը և արմատները պարունակում են եթերայուղ, իզովալերիանային թթուներ, բարնեոլ և բազմաթիվ այլ նյութեր: Դրանցից ստացվում է բազմաբնույթ ազդեցությամբ հանրահայտ վալերիանայի թուրմը, որն օգտագործում են նյարդային գրգռվածության, անքնության, սրտի նևրոզի ժամանակ: Երբեմն օգտագործում են նաև որպես համեմունք:

Կղմուղ բարձր

Inula helenium L.
Девясил высокий
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, հաստ կոճղարմատով խոտաբույս է 1 - 2 մ բարձրության: Տերևները մեծ են, էլիպսաձև, ներքևից սպիտակաթավ, երկար կոթով: Ծաղիկները հոտավետ են, նարնջադեղնավուն, խմբված զամբյուղ ծաղկաբույլում, եզրինները՝ երկար լեզվակավոր են, կենտրոնականները՝ խողովակավոր: Ծաղկաբույլը ողկույզահուրանածն է, կազմված 5-20 զամբյուղներից: Պտուղը փուփուկավոր սերմիկ է: Ծաղկում է հուլիս-օգոստոսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 600-2200 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, բացատներում, թփուտների մացառուտներում, գետերի ափերին, խոնավ տեղերում: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Կոճղարմատը և արմատները պարունակում են ինուլին պոլիսախարիդը, մանուշակահոտ եթերայուղ, սապոնիններ, խեժ, լորձային ու դառը նյութեր և այլն: Օգտագործվում է որպես հակաբորբոքային, միզամուղ, խորխաբեր, լեղամուղ միջոց, նաև թոքային հիվանդությունների ժամանակ:



▲ Կատվալեզու եռարածան
© Elvir Izmailov (www.plantarium.ru)

Կատվախոտ դեղատու
© Lida Onishenko (www.plantarium.ru)



Կղմուղ բարձր
© Andrey Andreev (www.plantarium.ru)



Կնքաբույս (կույսարմատ) սովորական

Tamus communis L.
Тамус обыкновенный
(Դիոսկորեազգիներ - Dioscoreaceae)

Բազմամյա, երկտուն, պալարավոր, փաթաթվող, երբեմն ճյուղավորվող ցողունով խոտաբույս է մինչև 4 մ երկարությամբ: Տերևները մուգ կանաչ են, ամբողջական, հակասրտաձև, երկար սրածայր, երկարակոթ: Վարսանդավոր ծաղիկները կանաչավուն են, մանր, խմբված տերևանութային ողկույզ ծաղկաբույլում: Պտուղը համարյա զնդածն է, հասունանալիս՝ կարմիր մսալի հյութեղ հատապտուղ է: Ծաղկում է ապրիլ-հունիսին, պտղաբերում՝ հունիս-սեպտեմբերին:

Աճում է 700-2000 մ բարձրությունների վրա, անտառում, անտառեզրերին, թփուտների մացառուտներում, պուրակներում: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև՝ Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է ալկալոիդներ, սապոնիններ և այլ նյութեր: Օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ որպես ցավը հանգստացնող, արյունահոսությունը դադարեցնող, ճնշումը կարգավորող միջոց:

Կորթին (ծորթին) պարտեզային

Satureja hortensis L.
Чабер садовый
(Խուլեղինզազգիներ - Lamiaceae)

Միամյա, ճյուղավորված ցողունով, նուրբ խոտաբույս է 15-30 սմ բարձրությամբ: Տերևները ամբողջական են, նշտարած, հակադիր դասավորված: Ծաղիկները մանր են, վարդամանուշակագույն, երկշուրթ, խմբված փուխր ձգված ծաղկաբույլերում: Պտուղը քառաընկույզիկ է: Ծաղկում է հունիսից մինչև սեպտեմբեր:

Աճում է 800-1700 մ բարձրությունների վրա, չոր տեղերում, բնակավայրերի մոտ, այգիներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Սևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Սիրված համեմունքային բույս է: Մշակության մեջ տարածված ծիտրոնի վայրի ազգակիցն է:

Կռատուկ (կոծոծ) երեսնակ

Arctium lappa L.
Лопух репейник
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Երկամյա խոտաբույս է 50-150 սմ և ավելի բարձրությամբ: Տերևները մեծ են, երբեմն մինչև 50 սմ երկարությամբ, սրտաձև, երկար կոթունով, ներքևից՝ սպիտակաթավ: Ծաղիկները մանր են, խողովակավոր, հնգատամ, նուրբ մանուշակագույն՝ խմբված զամբյուղ ծաղկաբույլերում: Պտուղը սերմիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է մինչև 1400 մ բարձրության վրա, բնակավայրերի մոտ, աղբոտ տեղերում, ճանապարհների եզրերին: Հանդիպում է Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Արմատը պարունակում է ինուլին պոլիսախարիդը, եթերայուղեր, դաբաղանյութեր, դառը և այլ նյութեր: Օգտագործվում է գիտական և ժողովրդական բժշկության մեջ, որպես միզամուղ միջոց, ռևմատիզմի, մաշկային և այլ հիվանդությունների ժամանակ: Մատղաշ ընձյուղներն ու արմատներն ուտելի են: Մեղրատու է:



▲
 Կնքարույս սվորական
 © Maxim Kucherov (www.plantarium.ru)

Կորթին պարտեզային
 © Maxim Zaitsev (www.plantarium.ru)

Կռատուկ երեսնակ
 © WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



Կուսածաղիկ խոտային

Vinca herbacea Waldst. & Kit.
Барвинок травянистый
(Շմենուկազգիներ - Apocynaceae)

Բազմամյա խոտաբույս է, փռվող կամ մի փոքր բարձրացող ցողունով 10-30 սմ երկարության: Տերևներն ամբողջական են, էլիպսաձև, կաշեկերպ, փայլուն: Ծաղիկները հնգատիպ են, 1-ական, կապտավուն, տերևների անոթներում: Պտուղն երկարավուն տերևիկ է, բազմաթիվ դարչնագույն փուփուլավոր սերմերով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հունիսին:

Աճում է 600-1800 մ բարձրությունների վրա, անտառի եզրերին, թփուտների մացառուտներում, կրակավային մերկացումների վրա: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է ալկալոիդներ, հատկապես վինկամին, որն իր քիմիական կազմությամբ նման է ռեզերպինին: Գեղազարդային տեսակ է: Օգտագործվում է նաև ծաղկագործության մեջ:

Հագարատերևուկ սվորական

Achillea millefolium L.
Тысячелистник обыкновенный
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, յուրահատուկ հոտով, սողացող բարակ կոճղարմատով և ուղիղ ցողունով խոտաբույս է 20-70 սմ բարձրության: Տերևները 2-3 անգամ փետրածև հատված են փոքր երկարավուն մասերի: Ծաղկաբույլը՝ զամբյուղը կազմված է եզրային սպիտակ կամ հազվադեպ վարդագույն լեզվակավոր և կենտրոնական խողովակավոր ծաղիկներից: Ջամբյուղները խմբված են ցողունների զագաթին վահանիկներով: Պտուղը մանր, երկարավուն, տափակ սերմիկ է: Ծաղկում է հունիսից-սեպտեմբեր:

Աճում է մինչև 2500 մ բարձրության վրա, անտառներում, թփուտների մեջ, մարգագետիններում, տափաստանային համակեցություններում, ճանապարհների եզրերին: Հանդիպում է ամենուրեք, Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու բույս է: Տերևները պարունակում են բարդ կառուցվածքի եթերայուղ, ալիլլեին, վիտամին K, ծաղկաբույլը՝ ֆլավոնոիդներ, լակտոններ, այդ թվում բնորոշ միլլեֆոլիդ լակտոնը և այլն: Օգտագործվում է գիտական բժշկության մեջ որպես հակաբորբոքային, արյունահոսությունը դադարեցնող, աղեստամոքսային տրակտի հիվանդությունների, վերքերի բուժման միջոց:

Հարսնախոտ

Physalis alkekengi L.
Мохунка
(Մորմազգիներ - Solanaceae)

Բազմամյա խոտաբույս է 20-50 սմ, երբեմն մինչև 70 սմ բարձրության: Տերևները նուրբ են, ձվաձև, ամբողջաեզր, կոթունավոր: Ծաղիկները 1-ական են, սպիտակավուն, 5 պսակաթերթով: Պտուղը՝ հատապտուղը հյութալի է, նարնջակարմրավուն՝ տեղավորված խիստ փքված, վառ կարմիր, կաշեկերպ բաժակի մեջ: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսից մինչև օգոստոս:

Աճում է 800-1300 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, բացատներում, ստվերոտ տեղերում, թփուտների մացառուտներում: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է, նաև՝ սննդային: Օգտագործվում է գիտական և ժողովրդական բժշկության մեջ: Թարմ պտուղները պարունակում են շաքարներ, կարոտին, օրգանական թթուներ, պեկտինային և այլ նյութեր, իսկ սերմերը՝ ճարպեր և տարբեր ալկալոիդներ: Ժողովրդական բժշկության մեջ հայտնի է որպես լեղամուղ, միզամուղ, ցավազրկող միջոց: Պտուղներն օգտագործվում են հրուշակագործության մեջ մարինադի պատրաստման համար: Դրանք խակ կամ հասուն վիճակում կիրառվում են սննդի մեջ (աղցանների, թթուների, արգանակների, կոմպոտների համար) որպես բուրավետացնող, յուրահատուկ համ ու հոտ տվող նյութեր: Այդ նպատակով հարսնախոտը նաև մշակվում է:



▲
Կունածաղիկ խոտային
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան

Հարսնախոտ
© Vitali Gumenuk (www.plantarium.ru)



▲
Հազարատերևուկ սովորական
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



Հիրիկ ցանցավոր

Iris reticulata M. Bieb.
Касатик сетчатый
(Հիրիկազգիներ – Iridaceae)

Սոխուկավոր, 1-3 նեղ երկար տերևներով խոտաբույս է: Ծաղիկները 1-ական են, եռատիպ, ծաղկապատի մանուշակագույն թերթերով, արտաքինները՝ կենտրոնական վառ դեղին շերտով և դրանից սկսվող երկարավուն սպիտակ ճառագայթների նախշով: Պտուղը տուփիկ է: Ծաղկում է մարտ-ապրիլին, պտղաբերում՝ ապրիլից մինչև հունիս:

Աճում է 900-2800 մ բարձրությունների վրա, անտառային մարգագետիններում, գիհու նոսր-անտառում, թփուտներ մեջ, չոր քարքարոտ լանջերին: Հանդիպում է բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային բույս է: Օգտագործվում է ծաղկեփնջերի համար:

Հողմածաղիկ կովկասյան

Anemone caucasica Willd.
Ветреница кавказская
(Գորտնուկազգիներ - Ranunculaceae)

Բազմամյա, փոքր կոճղարմատով խոտաբույս է 8-15 սմ բարձրության: Տերևները եռաբաժան են, երկար կոթուններով: Ծաղիկները մեկական են, նուրբ երկնագույն: Պտուղը բազմաընկույզիկ է: Ծաղկում է ապրիլին, պտղաբերում՝ մայիսին:

Աճում է 1000-1800 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառի եզրերին: Ունի լայն տարածում և ծաղկում է համատած: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Դարեղեգիսի, Ջանգեղուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է:

Հովվամախաղ (ծտապաշար) սովորական

Capsella bursa-pastoris (L.) Medik.
Пастушья сумка обыкновенная
(Կաղամբազգիներ - Brassicaceae)

Միամյա, արմատներձ վարդակով խոտաբույս է 30-60 սմ բարձրության: Ծաղիկները մանր են, քառատիպ, թեքված ծաղկակոթերով, դասավորված երկարացած նոսր ողկույզ ծաղկաբույլում: Պսակաթերթերը սպիտակ են: Պտուղը հակաեռանկյունաձև, տափակ պատիճակ է, թաղանթանման միջնորմով և բազմաթիվ սերմերով: Ծաղկում է մայիսից մինչև սեպտեմբեր:

Աճում է 500-2000 մ բարձրությունների վրա, ամենուրեք՝ բնակավայրերի մոտ, դաշտերում, բանջարանոցներում, աղբոտ տեղերում: Հանդիպում է բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է բուրսին ալկալոիդը, սապոնիններ, օրգանական թթուներ և այլն: Օգտագործվում է որպես արյունահոսությունները դադարեցնող, արյան ճնշումն իջեցնող, լեղամուղ միջոց: Ուտելի է, նաև՝ մեղրատու:



▲
Հիրիկ ցանցավոր
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան

Հողմածաղիկ կովկասյան
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան



Հովվամախաղ սովորական
© Sergey Appolonov (www.plantarium.ru)



Չիածետ դաշտային

Equisetum arvense L.
Хвощ полевой
(Չիածետազգիներ - Equisetaceae)

Բազմամյա սողացող կոճղարմատով սպորավոր խոտաբույս է 50-80 սմ բարձրության: Ցողունը կոշտ է, ուղղաձիգ, գլանաձև, սնամեջ, ակոսավոր, ճյուղերի օղակաձև դասավորված հանգույցներով և թեփուկանման տերևներով: Սպորակիր ընձյուղները գազաթնային են, դեղնավուն կամ դարչնագույն սպորակիր հասկիկներով: Դրանք զարգանում են վաղ գարնանը՝ ապրիլ-մայիսին, սպորների հատումանալուց հետո չորանում են: Նույն կոճղարմատից առաջանում են ամառային վեգետատիվ ընձյուղները:

Աճում է 800-1900 մ բարձրությունների վրա, խոնավ, ճահճացած տեղերում, անտառներում, գետերի ափերին, մարգագետիններում: Հանդիպում է գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է սապոնիններ, ալկալոիդներ, օրգանական թթուներ, ճարպեր, եթերայուղեր և այլն: Օգտագործվում է որպես հակաբորբոքային, արյունահոսությունը դադարեցնող միջոց, ինչպես նաև միզամուղ է: Չիածետի որոշ տեսակներ թունավոր են, հետևաբար այն կարելի է օգտագործել միայն բույսը ճիշտ որոշելուց և ճանաչելուց հետո:

Չմեռնածաղիկ անդրկովկասյան

Galanthus transcaucasicus Fomin
Подснежник закавказский
(Շքանարգիզազգիներ - Amaryllidaceae)

Բազմամյա, փոքրիկ տխուկով խոտաբույս է մինչև 15 սմ բարձրության: Տերևները երկարավուն են, մուգ կանաչ, թեթևակի փայլով: Ծաղիկները 1-ական, սպիտակ, 2 շարքով 3-ական դասավորված ծաղկապատի թերթերով: Պտուղը տակառանման տուփիկ է, բաց դարչնագույն սերմերով: Ծաղկում է մարտին, պտղաբերում՝ ապրիլ-մայիսին:

Աճում է 700-1500 մ բարձրությունների վրա, խառը անտառներում: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է:

Մահամորմ (չիկատակ) բելլադոննա

Atropa bella-donna L.
Красавка белладонна
(Մորմազգիներ - Solanaceae)

Բազմամյա, հաստ կոճղարմատով, խիտ ճյուղավորված ցողունով խոտաբույս է մինչև 2 մ բարձրության: Տերևները հակադիր են, էլիպսաձև, տարբեր չափերի: Ծաղիկները 1-ական են, նուրբ մանուշակագույն կամ դեղնավուն, մանուշակագույն ջղերով: Պտուղը սև, փայլուն, հյութալի հատապտուղ է, բազմաթիվ կլորավուն տափակ սերմերով: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 800-1700 մ բարձրությունների վրա, անտառներում, բացատներում, հատատեղերում, գետերի ափերին: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Արժեքավոր դեղաբույս է: Բույսի բոլոր մասերը պարունակում են ալկալոիդներ, հատկապես ատրոպին, որի շնորհիվ ունի լայն կիրառություն գիտական բժշկության մեջ: Օգտագործվում է որպես ցավազրկող և ջղակծկումները հանգստացնող միջոց, աչքի բիբի լայնացման համար, սրտային և այլ հիվանդությունների ժամանակ, մտնում է տարբեր պատրաստուկների կազմի մեջ:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում որպես «Խոցելի տեսակ» (VU կատեգորիա):



Բույսի բոլոր մասերը թունավոր են:



▲
 Զիածետ դաշտային
 © Sergey Mayorov (www.plantarium.ru)



▲
 Զմեռնածաղիկ անդրկովկասյան
 © WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան



◀ Մահամորմ բելլադոննա (ծաղիկ)
 © Olga Shchedrova (www.plantarium.ru)

Մահամորմ բելլադոննա (պտուղ)
 © Vasyi Heluta (www.plantarium.ru)



Մատիտեղ (հավկտենի) ճնճուկի

Polygonum aviculare L.
Горец птичий
(Մատիտեղազգիներ – Polygonaceae)

Միամյա, գետնատարած, երբեմն կանգուն, խիստ ճյուղավորված խոտաբույս է 10-25 սմ երկարությամբ: Տերևները մանր են, երկարավուն, կարճակոթ, հերթադիր դասավորված: Ծաղիկները շատ մանր են, աննկատ, 1-ական կամ 2-5-ական խմբված տերևների անուբներում: Պտուղը եռակող ընկույզիկ է: Ծաղկում է հունիսից մինչև ուշ աշուն:

Աճում է մինչև 1700 մ բարձրության վրա, ամենուրեք՝ ճամփեզրերին, բնակավայրերի մոտ, այգիներում, ցանքերում, աղբոտ տեղերում: Հանդիպում է բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է ավիկուլյարին ֆլավոնոիդը, ասկորբինաթթու, դաբաղանյութեր, կարոտին, խեժեր և այլ նյութեր: Օգտագործվում է գիտական և ժողովրդական բժշկության մեջ, որպես արյունահոսությունները դադարեցնող, միզամուղ, արյան ճնշումը և մակարդելիությունը կարգավորող միջոց:

Մատնոցուկ (մատնածաղիկ) ժանգոտ

Digitalis ferruginea L.
Наперстянка ржавая
(Խլածաղկազգիներ - Scrophulariaceae)

Բազմամյա, կոճարմատավոր խոտաբույս է 40-80 սմ բարձրությամբ: Տերևները երկարավուն նշտարած են, հիմնականում խմբված արմատամերձ վարդակում: Ծաղկաբույլը բազմածաղիկ խիտ ողկույզ է, երկշուրթ, զանգակած, ժանգոտ դեղին պսակով: Պտուղը ձվածն տուփիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է մինչև 2300 մ բարձրության վրա, անտառներում, բացատներում, անտառեզրերին, մարգագետիններում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, ինչպես նաև Արագածի, Երևանի և Գեղամի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Պարունակում է գլիկոզիդներ, հիմնականում դիգիլանին, սապոնին, դիգոնին: Կիրառվում է գիտական բժշկության մեջ սրտային անբավարարության ժամանակ:



Բույսի բոլոր մասերը թունավոր են:

Մկնասոխ սիբիրյան

Scilla siberica Haw.
Пролеска сибирская
(Հակինթազգիներ – Hyacinthaceae)

Բազմամյա, սոխուկավոր խոտաբույս է 10-20 սմ բարձրությամբ: Տերևները 4-5 հատ են, երկարավուն, ներսի կողմից գոգավոր: Ծաղիկները 1-3-ական են, երկնագույն կամ կապույտ, զանգակած, ներքև թեքված: Պտուղը զնդածն կամ ձվածն տուփիկ է, սև սերմերով: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ մայիս-հունիսին:

Աճում է 1000-1800 մ բարձրությունների վրա, անտառներում, բացատներում, անտառի եզրերին: Հանդիպում է Լոռու և Իջևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է:



Մատիտեղ ճնճողուկի
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



Մատնոցուկ ժանգոտ
© Vladimir Epiktetov (www.plantarium.ru)

Սկնատի սիբիրյան
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան



Նվիկ արևելյան

Arum orientale M. Bieb.
Аройник восточный
(Նվիկազգիներ - Araceae)

Բազմամյա խոտաբույս է 20-30 սմ բարձրության, ուղղահայաց ձվաձև կամ գնդաձև պալարով: Տերևն ամբողջական է, երկարավուն նետաձև, երկարակոթ: Ծաղկաբույլը կողր է, շրջապատված կիսաձագարաձև ծածկոցով՝ ձևափոխված ծաղկակից տերևով, որն արտաքինից կարմրավուն է, իսկ ներսից՝ ավելի դժգույն: Պտուղաբույլը կազմված է միմյանց հպված գնդաձև կարմրավուն հատապտուղներից: Ծաղկում է մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 1100-1400 մ բարձրությունների վրա, ստվերոտ անտառներում, թփուտների մեջ: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում:

Դեղատու է: Կոճղարմատը պարունակում է օսլա, գլիկոզիդներ, այդ թվում արոմին, խեժ, յուղ, պիզոններ և այլն: Օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ մարսողական համակարգի, շնչուղիների, լյարդի բորբոքումների ժամանակ:



Թարմ վիճակում բույսի բոլոր մասերը, հատկապես կոճղարմատը և պտուղները շատ թունավոր են:

Շուշան հայկական

Lilium armenum (Misch. ex Grossh.) Manden.
Лилия армянская
(Շուշանազգիներ – Liliaceae)

Բազմամյա խոտաբույս է մինչև 110 սմ բարձրության, մսալի կղմինդրաձև դասավորված թեփուկավոր տիտուկով: Տերևները լայն էլիպսաձև են, առանց կոթունի, հերթադիր դասավորված: Ծաղիկները խոշոր են, ծաղկապատի ոսկեդեղին թերթիկներով: Ծաղկաբույլը կազմված է 6-20 ծաղիկներից: Պտուղը եռաբույն տուփիկ է: Ծաղկում է հունիսից մինչև օգոստոս, պտղաբերում՝ օգոստոս-սեպտեմբերին:

Աճում է 1900-2600 մ բարձրությունների վրա, անտառի եզրերին, բացատներում, մարգագետիններում: Հանդիպում է Իջևանի, Ապարանի և Սևանի, ինչպես նաև Գեղամի և Դարեղեգիսի ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է: Մշակության մեջ հայտնի են շուշանի բազմաթիվ սորտեր:



Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքի տեղեկատվական նյութերում, որպես «Վտանգված սպառնացող վիճակի մոտ գտնվող տեսակ» (NT կատեգորիա):

Շուշանբանջար (ղմի) ոսկեգոծ

Chaerophyllum aureum L.
Бутень золотистый
(Նեխուրազգիներ - Apiaceae)

Բազմամյա, կոճղարմատավոր խոտաբույս է 50-160 սմ բարձրության: Տերևները փետրաձև բաժանված են լայն բլթակավոր մասերի: Ծաղիկները մանր են, սպիտակ՝ խմբված բազմաճառագայթ բարդ հովանոցներում: Պտուղը երկարավուն է, կազմված 2 միանման մասերից՝ մերիկարպներից: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1300-2100 մ բարձրությունների վրա, անտառներում, բացատներում, անտառեզրերին: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Երիտասարդ ընծյուղներն ուտելի են: Ժողովրդի կողմից սիրված է հատկապես «շուշանի» թթուն: Դեղաբույս է: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է ստամոքսի հիվանդությունների ժամանակ: Ուտելի է նաև տիտուկավոր շուշանբանջարը (*Chaerophyllum bulbosum* L.):



▲ Նվիկ արևելյան

© Alexander Ivanov (www.plantarium.ru)



▲ Շուշան հայկական

© http://vahemart.livejournal.com

Շուշանբանջար ոսկեգոծ

▼ © Galina Konechnaya



Ոգնագլխիկ (թոփփուշ) գնդագլուխ

Echinops sphaerocephalus L.
Мордовник шароголовый
(Աստղաձաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, փշոտ խոտաբույս է 40-100սմ բարձրության: Տերևները փետրածև հատված են, եռանկյունաձև, երկար, փշածայր եզրերով, վերևից՝ կանաչ, ներքևից՝ մոխրագույն խավով, ջղերի երկարությամբ ծածկված գեղձային մազիկներով: Ծաղիկները երկնագույն կապույտ են, 1-ական յուրաքանչյուր զամբյուղում, որոնք խմբված են գնդաձև ծաղկաբույլում: Պտուղը գլանաձև սերմիկ է: Ծաղկում է հունիս-օգոստոսին, պտղաբերում՝ օգոստոս - սեպտեմբերին:

Աճում է մինչև 2400 մ բարձրության վրա, անտառեզրերին, ձորերում, տափաստանային և մարգագետնային համակեցություններում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի և Սևանի, ինչպես նաև Երևանի, Դարեղեգիսի, Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պտուղները պարունակում են ալկալոիդներ, հատկապես էփինոպսին, նաև հեղուկ ճարպեր: Օգտագործվում է գիտական բժշկության մեջ պարալիզների, մկանային ատրոֆիայի, ռադիկուլիտի, հիպոտոնիայի ժամանակ: Գործում է որպես կենտրոնական նյարդային համակարգը գրգռող, կմախքի մկանային համակարգի տոնուսը բարձրացնող, զարկերակային ճնշումը կարգավորող միջոց:

Ողկուզակ (խնդակ) կովկասյան

Dictamnus caucasicus (Fisch. & C. A. Mey.) N. Vint.
Ясенец кавказский
(Մապատազգիներ – Rutaceae)

Բազմամյա, վերին կեսուն սև, զանգուր, գեղձային մազիկներով ծածկված խոտաբույս է 50-100 սմ բարձրության: Տերևները բարդ են, կենտ փետրածև, երկարավուն նշտարած տերևիկներով: Ծաղիկները խոշոր են, նուրբ վարդագույն՝ խմբված երկարավուն ողկույզ ծաղկաբույլում: Պտուղը ներսի կողմից բաժանվում է 5 տերևապտղիկների: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 800-1300 մ բարձրությունների վրա, անտառի եզրերին, թփուտների մեջ: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Սևանի, ինչպես նաև Շիրակի, Երևանի, Դարեղեգիսի և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է եթերայուղեր, ասկորբինաթթու և այլ նյութեր: Թարմ բույսը առաջացնում է այրվածքներ:

 Թունավոր է:

Պատրինջ դեղատու

Melissa officinalis L.
Мелисса лекарственная
(Խուլեղինջազգիներ - Lamiaceae)

Բազմամյա խոտաբույս է 20-40 սմ բարձրության: Տերևները ձվաձև են, քառանիստ, ցողունի վրա հակադիր դասավորված: Ծաղիկները երկշուրթ են, սպիտակավուն, կրեմագույն կամ դեղնավուն պսակով՝ դասավորված օղակաձև տերևածոցերում: Պտուղը քառաընկույզիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 800-1300 մ բարձրությունների վրա, անտառներում, բացատներում, թփուտներում, ճանապարհների եզրերին: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Զանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու և համեմունքային բույս է: Պարունակում է լիմոնային հաճելի բուրմունքով եթերայուղեր, (բուրում է թարմ տերևները տրորելիս), օրգանական թթուներ, վիտամիններ և այլն: Օգտագործվում է մարսողության խանգարումների, թունավորումների, ուռուցքների, վերքերի բուժման, սրտային անբավարարության ժամանակ: Որպես հոտավետացնող համեմունքային բույս կիրառվում է խմիչքների և օժանելիքների արտադրության մեջ: Մեղրատու է:



Ոգնագլխիկ գնդագլուխ
© Sergey Appolonov (www.plantarium.ru)

Ողկուզակ կովկասյան
© Vitali Gumenuk (www.plantarium.ru)

Պատրինջ դեղատու
© Irina Peskova (www.plantarium.ru)



Պետասիտես հիբրիդային

Petasites hybridus (L.) Gaertn.
Белокопытник гибридный
(Աստղաձաղկազգիներ - Asteraceae)

Սողացող կոճղարմատով խոտաբույս է 10-40 սմ բարձրությամբ: Արմատամերձ տերևները խոշոր են, գրեթե կլորավուն, սրտաձև հիմքով, ցողունայինները՝ մանր թեփուկանման: Ծաղիկները շատ մանր են, խողովակավոր, խմբված զամբյուղներում, որոնք իրենց հերթին կազմում են երկարավուն ողկույզանման վահանիկներ: Պտուղը գլանաձև, փուփուկավոր սերմիկ է: Ծաղկում է ապրիլին, պտղաբերում՝ մայիսին:

Աճում է 800-1300 մ բարձրությունների վրա, անտառային բացատներում, անտառի եզրերին, խոնավ տեղերում: Հանդիպում է միայն Լոռու և Իջևանի ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է:

Պուշկինիա մկնաստխանման

Puschkinia scilloides Adam
Пушкиния пролесковидная
(Հակիմբազգիներ – Hyacinthaceae)

Սոխուկավոր խոտաբույս է, ծաղկալաքին հավասար գծային, մսալի տերևներով: Ծաղիկները 1-6 են, խմբված ողկույզ ծաղկաբույլում: Ծաղկապատը զանգակաձև է, կազմված սպիտակ, մեջտեղում երկնագույն զոլով բլթակներից: Պտուղը եռանիստ տուփիկ է: Ծաղկում է մարտ-մայիսին, պտղաբերում՝ ապրիլ-հունիսին:

Աճում է 1200-3400 մ բարձրությունների վրա, լեռնային մարգագետիններում, թփուտների մեջ, հալվող ձյան մոտ: Հանդիպում է բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է: Օգտագործվում է ծաղկափնջերի համար:

Ձղախոտ (եզան լեզու) մեծ

Plantago major L.
Подорожник большой
(Ձղախոտազգիներ - Plantaginaceae)

Բազմամյա խոտաբույս է 10-25 սմ բարձրությամբ: Տերևները ձվաձև էլիպսաձև են, լավ արտահայտված ջղերով և երկար կոթով: Տերևները խմբված են արմատամերձ վարդակում, որի կենտրոնից զարգանում է ծաղկացողունը, գագաթին խիտ հասկանման ծաղկաբույլով: Ծաղիկները քառատիպ են, մանր, աննկատ: Պտուղը երկբույն բազմասերմ տուփիկ է: Ծաղկում է մայիսից մինչև ուշ աշուն:

Աճում է 400-2300 մ բարձրությունների վրա, անտառի եզրերին, բացատներում, մարգագետիններում, խոնավ տեղերում, բնակավայրերի մոտ, այգիներում, աղբոտ տեղերում: Հանդիպում է բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու է: Պարունակում է պոլիսախարիդներ, ֆլավոնոիդներ, դաբաղային և դառը նյութեր, վիտամին K: Բժշկական կիրառումը հիմնականում պայմանավորված է աուկուբին գլիկոզիդի և լորձանյութերի հետ: Այս տեսակից ստացվող պլանտագլյուցին հատիկավոր դեղամիջոցը հայտնի է գաստրիտների, աղեստամոքսային խոցերի, կոլիտի բուժման համար: Տերևների թարմ հյութն օգտագործվում է վերքերի, ֆուրունկուլների բուժման համար: Լորձի շնորհիվ կիրառվում է կոսմետիկայի, տեքստիլ և սննդի արտադրության մեջ: Թարմ տերևներն ուտելի են: Խորհուրդ չի տրվում օգտագործել ջղախոտի մյուս տեսակները, որոնց այս տեսակից կարելի է հեշտությամբ տարբերել տերևների ձևով:



Պետասիտես հիբրիդային
© Tatyana Nikulina (www.plantarium.ru)



Պուշկինիա մկնաստիխանման
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան

Ջղախոտ մեծ
© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան



Ջոք սպիտակ

Veratrum album L.
Чемерица белая
(Մելանթազգիներ - Melanthaceae)

Բազմամյա, կոճղարմատավոր խոտաբույս է 1-1,5 մ բարձրության: Տերևները խոշոր են, հերթադիր, էլիպսաձև, երկայնական ծալքերով: Ծաղիկները խմբված են ցողունների գագաթներին հուրանաձև ծաղկաբույլերում: Ծաղկապատը դեղնականաչավուն է: Պտուղը բազմասերմ ձվաձև եռանիստ տուփիկ է: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1800-2500 մ բարձրությունների վրա, անտառի վերին սահմանի մոտ, հետանտառային մարգագետիններում, անտառային բացատներում:

Կոճղարմատը պարունակում է թունավոր ալկալոիդներ: Դրա թուրմն օգտագործվում է մարդու և կենդանիների մաշկային մակաբույծների, ինչպես նաև պտղատու և հատապտղատու կուլտուրաների վնասատուների դեմ պայքարելու համար:

 Բույսի բոլոր մասերը թունավոր են:

Սիբեխ սովորական

Falcaria vulgaris L.
Резак обыкновенный
(Նեխուրազգիներ - Apiaceae)

Բազմամյա խոտաբույս է 20-60 սմ բարձրության: Տերևները կաշեկերպ են, թխականաչ, եռաբաժան, կազմված երկարավուն սղոցաեզր մասերից: Ծաղկացողունը զարգանում է տերևների վարդակից: Ծաղիկները մանր են, սպիտակ պսակաթերթերով՝ խմբված հովանոց ծաղկաբույլում: Պտուղը մանր է, կախված, կազմված է երկու երկարավուն կնճռոտ կիսապտղիկներից: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 800-1900 մ բարձրությունների վրա, անտառների եզրերին, թփուտներում, բնակավայրերի մոտ: Հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Հանրահայտ և սիրված ուտելի բույս է: Օգտագործվում է թարմ, թթու դրած և տապակած:

Սինդրիկ (սողմոնի կնիք) արևելյան

Polygonatum orientale Desf.
Купена восточная
(Հովտաշուշանազգիներ - Convallariaceae)

Բազմամյա, հաստ, հորիզոնական կոճղարմատով խոտաբույս է 15-35 սմ բարձրության: Տերևները պարզ են, ամբողջական, էլիպսաձև կամ ձվաձև, կարճակոթ, ցողունի վրա հերթադիր դասավորված: Ծաղիկները կանաչավուն են, խողովակաձև ծաղկապատով, երկար ծաղկակոթերով, 2-5-ական տեղավորված տերևածոցերում: Պտուղը սև կամ կապտավուն հատապտուղ է: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հունիսին:

Աճում է 1000-1400 մ բարձրությունների վրա, սովորաբար անտառներում, անտառեզրերին: Հանդիպում է Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Վերին Ախուրյանի, Երևանի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է: Պարունակում է ալկալոիդներ, սապոնիններ, գլիկոզիդներ, վիտամին C, օսլա և այլն: Օգտագործվում է ժողովրդական բժկության մեջ որպես ցավազրկող, հակաբորբոքային միջոց: Երիտասարդ ընծյուղներն ուտելի են մշակված վիճակում: Գեղազարդային տեսակ է: Ունի ծաղկագործության մեջ օգտագործվող կուլտուրական սորտեր:

 Բույսի բոլոր մասերը թարմ վիճակում թունավոր են:



▲
Ջոք սպիտակ
© Vasyi Heluta (www.plantarium.ru)



▲
Սիբեի սովորական
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան

▼
Սինդրիկ արևելյան
© Alexander Ivanov (www.plantarium.ru)



Սոխ հաղթության, դանձիկ

Allium victorialis L.
Лук победный, черемша
(Սոխազգիներ - Alliaceae)

Բազմամյա, սոխուկավոր խոտաբույս է 30-100 սմ բարձրության: Տերևներն էլիպսաձև են կամ լայն նշտարաձև, ցողունը գրկող տերևապատյանով: Ծաղիկները կանաչավուն սպիտակ են, փայլուն, կազմված ծաղկապատի 6 թերթերից, ծաղկապատից 2-3 անգամ երկար ծաղկակոթերով: Ծաղկաբույլը գլխիկանման է, գնդաձև կամ կիսագնդաձև, հիմքում ծաղկաբույլից կարճ ծածկոցի 2 թերթերով: Պտուղը կաշեկերպ տուփիկ է, եռանիստ սերմերով: Ծաղկում է հունիս–հուլիսին, պտղաբերում՝ հուլիս–օգոստոսին:

Աճում է 1700-2700 մ բարձրությունների վրա, անտառային բացատներում, անտառի վերին սահմանի մոտ, ենթալպյան մարգագետիններում, թփուտների մեջ: Հանդիպում է միայն Իջևանի և Ապարանի ֆլորիստիկական շրջաններում:

Հայտնի ուտելի խոտաբույս է: Պարունակում է կենսաբանական ակտիվ նյութեր՝ ֆիտոնցիդներ, ինչպես նաև եթերայուղեր, ֆլավոնոիդներ, խնձորաթթու, լիմոնաթթու, շաքար, կարոտին և այլն: Ունի հաճելի նուրբ դուրեկան համ:

Ազգակից է հանրահայտ սովորական գլուխ սոխին (*Allium cepa* L.) և սխտորին (*Allium sativum* L.), որոնք լայնորեն մշակվում են: Գլուխ սոխի կծու համը պայմանավորված է եթերայուղերի, իսկ սխտորի սուր համը՝ հիմնականում ալիին ամինաթթվի առկայությամբ:

Սրոհունդ (արևքուրիկ) խոցված

Hypericum perforatum L.
Зверобой продырявленный
(Սրոհունդազգիներ - Hypericaceae)

Բազմամյա, վերին մասում բարակ ցողուններով ճյուղավորվող խոտաբույս է 15-40 սմ բարձրության: Տերևները մանր են, հակադիր դասավորված, նեղ ձվաէլիպսաձև, ամբողջաեզր, լուսաթափանցիկ կետավոր գեղձերով: Ծաղիկները հնգատիպ են, վառ դեղին, խմբված բազմածաղիկ ծաղկաբույլերում: Պտուղը բազմասերմ տուփիկ է: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 900-2000 մ բարձրությունների վրա, անտառներում, անտառեզրերին, մարգագետիններում, գետահովիտների խոտածածկ լանջերին: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղատու բույս է: Օգտագործվում են ծաղիկները և տերևները, որոնցից ստացվող թուրմը և տարբեր դեղամիջոցները կիրառվում են որպես միզամուղ, հակաբորբոքային, վերքերը բուժող, մանրէասպան միջոց, ինչպես նաև վարակիչ բաց վերքերի, տրոֆիկ խոցերի, այրվածքների բուժման համար: Արտադրում է ֆիտոնցիդներ: Համեղ և օգտակար է սրոհունդի թյուր: Մեղրատու է:

Վահանապտեր արական

Dryopteris filix-mas (L.) Schott
Щитовник мужской
(Բազմտիկազգիներ - Polypodiaceae)

Խոշոր պտեր է 30–120 սմ բարձրության: Կոճղամատը կարճ է և հաստ, ծածկված թխավուն թեփուկներով: Տերևները զարգացման սկզբում խխունջաձև ոլորված են, հետագայում՝ փետրաձև, մուգ կանաչ, ներքևից ջղերի երկարությամբ դասավորված սորուսներով՝ սպորանգիումների զետեղարաններով: Սպորները շատ մանր են, դարչնագույն, հասունանում են հուլիս–օգոստոսին:

Աճում է 1500-2000 մ բարձրությունների վրա, անտառներում, խոնավ ստվերոտ տեղերում: Հաճախ առաջացնում է միատարր անանցանելի բուսուտներ: Հանդիպում է գրեթե բոլոր անտառային շրջաններում:

Դեղաբույս է: Կոճղարմատը պարունակում է տարբեր ֆլորոգլյուցիդներ և օրգանական թթուներ, որոնք մահացու են ժապավենաձև որդերի համար: Պատրաստուկներն օգտագործվում են գիտական բժշկության մեջ՝ միայն բժշկի հսկողությամբ: Գեղազարդային տեսակ է:

 Թունավոր է:



▲ Սոխ հաղթության
© Sergey Banketov (www.plantarium.ru)

Սրտիկունդ խոցված
© Pavel Evseenkov (www.plantarium.ru)



Վահանապտեր արական
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան



Վիկ (գյուլուլ) ցանկապատի

Vicia sepium L.
Горошек (вика) заборный
(Բակլազգիներ – Fabaceae)

Բազմամյա, թույլ կառչող ցողունով խոտաբույս է 40-70 սմ բարձրության: Տերևները կենտ փետրածն են, մինչև 8 զույգ տերևիկներով, առանցքի վերջում ճյուղավորված բեղիկով: Ծաղիկները տարբեր գույնի են՝ բաց մանուշակագույն, կապտավուն կամ կարմրամանուշակագույն: Ծաղկաբույլը սակավածաղիկ ողկույզ է: Պտուղը երկար է, մերկ, հասունները՝ սև: Ծաղկում է մայիս-օգոստոսին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:

Աճում է 700-2600 մ բարձրությունների վրա, թփուտներում, հետամտառային մարգագետիններում, բարձրախոտերում, այգիներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի, ինչպես նաև Արագածի, Գեղամի, Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Վիկի տարբեր տեսակներն արժեքավոր կերաբույսեր են: Պարունակում են սպիտակուցներ, վիտամիններ և այլն:

Վուշ (կտավատ) սրոհունդատերև

Linum hypericifolium Salisb.
Лен звероболистный
(Վուշազգիներ, կտավատազգիներ - Linaceae)

Բազմամյա խոտաբույս է 20-80 սմ բարձրության: Տերևները ձվանշտարածն են, ցողունի վրա հերթադիր դասավորված: Ծաղիկները խոշոր են, բաց մանուշակագույն, կարճակոթ, խմբված հուրանած ծաղկաբույլերում: Պտուղը կլորավուն տուփիկ է: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1600-2200 մ բարձրությունների վրա, անտառային բացատներում, անտառեզրերին, ենթալպյան մարգագետիններում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, Սևանի ֆլորիստիկական շրջաններում, ինչպես նաև Ջանգեզուրում:

Վուշը թելատու է, նաև՝ ձիթատու և դեղատու: Պարունակում է ճարպեր, գլյուկոզա, լիմին, լորձային նյութեր, վիտամիններ, ֆերմենտներ: Ձեթն օգտագործվում է որպես սնունդ, տարբեր քսուքների պատրաստման, աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար: Աղացած սերմերի թուրմն օգտագործվում է խոցերի, գաստրիտների բուժման և մարսողության բարելավման համար: Միամյա սովորական վուշը (*Linum usitatissimum* L.) որպես ձիթատու մշակվում է Հայաստանում:

Տատրակ (խոճկորիկ) սովորական

Tussilago farfara L.
Мать-и-мачеха
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, սողացող կոճղարմատով խոտաբույս է 10-30 սմ բարձրության: Ամբողջ բույսը ծածկված է սպիտակաթավ մազիկների խավով: Տերևները խոշոր են, երկարակոթ, կլորասրտածն, եզրերից եռանկյունաձև մեծ ատամնավոր տերևաթիթեղով զարգանում են ծաղկումն ավարտելուց հետո: Ծաղիկները ոսկեդեղին են, խմբված զամբյուղ ծաղկաբույլում, եզրերինը՝ լեզվակավոր, կենտրոնականները՝ խողովակավոր: Պտուղը փոփոխվող սերմիկ է: Ծաղկում է ապրիլ-մայիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

Աճում է 600-1900 մ բարձրությունների վրա, անտառի ստորին սահմանի մոտ, գետերի հովիտներում, կավային լանջերի, փլվածքների վրա: Հանդիպում է Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Դեղաբույս է, նաև՝ ուտելի: Տերևները պարունակում են դառը գլիկոզիդներ, սապոնիններ, կարոտինոիդներ, ֆլավոնոիդներ, օրգանական թթուներ: Օգտագործվում է գիտական բժշկության մեջ որպես հակաբորբոքային, խորխաբեր, ախտահանող, հակաալերգային միջոց: Մեղրատու է:



▲ Վիկ ցանկապատի
© Lida Onishenko (www.plantarium.ru)



▲ Վուշ սրոհունդատերև
© Sergey Arevshatyan (www.plantarium.ru)



◀ Տատրակ սովորական
© WWF-Հայաստան/ Սիրանուշ Գալստյան

Տարկավան մուգ կարմիր

Tanacetum coccineum (Willd.) Grierson
Пижда багряная
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, հորիզոնական, փայտացող կոճղարմատով խոտաբույս է 50-70 սմ բարձրությամբ: Տերևները կրկնակի փետրածև են: Ծաղկաբույլերը՝ զամբյուղները խոշոր են, 1-ական ցողունների զագաթներին: Եզրային լեզվակավոր ծաղիկները բաց վարդագույնից մինչև մուգ կարմիր են, կենտրոնական խողովակավոր ծաղիկները՝ դեղին: Պտուղը երկայնակի կողերով սերմիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1500-2200 մ բարձրությունների վրա, ենթալպյան մարգագետիններում, խոտածածկ լանջերին, խոտհարքներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի և Սևանի, ինչպես նաև Վերին Ախուրյանի և Արագածի ֆլորիստիկական շրջաններում:

Միջատասպան է: Ծաղիկը պարունակում է պիրետրին, ցիներին և այլ թունավոր կենսաբանական ակտիվ նյութեր, որոնք ունեն ինսեկտիցիդ՝ միջատասպան հատկություն և կիրառվում է ամբարների և պահեստների, ինչպես նաև գյուղատնտեսության վնասատու միջատների դեմ պայքարելու համար: Նախկինում օգտագործվել է նաև որպես դեղատու միջոց մարդու աղիքային մակաբույծների դեմ պայքարելու համար: Գեղազարդային տեսակ է:



Թունավոր է:

Տափուռ վարդագույն

Lathyrus roseus Stev.
Чина розовая
(Բակլազգիներ – Fabaceae)

Բազմամյա, հաստացած կոճղարմատով խոտաբույս է 50-150 սմ բարձրությամբ: Տերևները կազմված են մեկ զույգ ձվածև տերևիկներից, առանցքի վերջում սրածայրով վերջացող: Ծաղիկները վարդագույն պսակով են: Ծաղկակիրը 1-4 ծաղիկներով է: Պտուղն ունի է: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիսին:

Աճում է 1000-2300 մ բարձրությունների վրա, անտառներում: Հանդիպում է Իջևանի և Ապարանի, ինչպես նաև Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Կերային բույս է: Միամյա տեսակներից մշակության մեջ տարածված են բազմաթիվ սորտեր: Սերմերից ստացվում է բուսական սոսինձ, որը կիրառվում է տարբեր բնագավառներում (նրբատախտակ պատրաստելիս, ավիացիայի և տեքստիլագործության մեջ):

Տելեկիա հրաշալի

Telekia speciosa (Schreb.) Baumg.
Телекия прекрасная
(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, հաստ կոճղարմատով խոտաբույս է 50-200 սմ բարձրությամբ: Արմատամերձ տերևները լայն ձվածև են, երկար մեղ թևավոր կոթերով, ցողունայինները՝ ձվածև, սրտածև հիմքով, վերինները՝ նստադիր: Ջամբյուղի եզրային ծաղիկները լեզվակավոր են, շատ երկար, ոսկեդեղին, կենտրոնիկները՝ խողովակավոր, դեղին: Պտուղը գլանաձև, երկայնակի կողերով սերմիկ է: Ծաղկում է հունիս-հուլիսին, պտղաբերում՝ օգոստոսին:

Աճում է 1300-2100 մ բարձրությունների վրա, անտառեզրերին, անտառային բացատներում: Հանդիպում է Լոռու, Իջևանի, Ապարանի, ինչպես նաև Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Գեղազարդային տեսակ է:



▲
Տարկավան մուգ կարմիր
© Andrey Lubchenko (www.plantarium.ru)

Տելեկիա հրաշալի
© Vasyi Heluta (www.plantarium.ru)
▼



▲
Տափուռ վարդագույն
© Vlarimir Dorofeyev



Փիփերթ (մոլոշ) արհամարիված

Malva neglecta Wallr.
Просвирник пренебреженный
(Փիփերթազգիներ – Malvaceae)

Միամյա կամ երկամյա խոտաբույս է 10-30 սմ բարձրության: Տերևները մատնաձև բլթակավոր են, երկար կոթուններով: Ծաղիկները մանր են, 5 բաց վարդագույն պսակաթերթերով, խմբված տերևների անութներում: Պտուղը կլորավուն է, տափակ, կազմված բազմաթիվ երկամաձև սերմերից: Ծաղկում է ապրիլ-հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 500-1900 մ բարձրությունների վրա, բանջարանոցներում, այգիներում, ճանապարհների մոտ, աղբոտ տեղերում: Հանդիպում է բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Ուտելի բույս է: Երիտասարդ ընձյուղները և տերևներն օգտագործվում են սննդի մեջ:

Քեմոն (հայչաման, ճապուռ) սովորական

Carum carvi L.
Тмин обыкновенный
(Նեխուրազգիներ - Apiaceae)

Երկամյա կամ բազմամյա, իլիկանման հաստացած արմատով խոտաբույս է 30-70 սմ բարձրության: Տերևները երկարավուն ձվաձև ուրվագծով են, եռակի փետրաձև հատված: Ծաղկաբույլը բարդ հովանոց է կազմված 8-16 անհավասարակոթ հովանոցիկներից: Ծաղիկները մանր են, հնգատիպ, սպիտակ կամ բաց վարդագույն պսակաթերթերով: Պտուղն երկարավուն է, կազմված երկու մերկարպներից՝ կիսապտուղներից: Ծաղկում է հունիսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

Աճում է 1200-2500 մ բարձրությունների վրա, լուսավոր անտառներում, անտառեզրերին, բացատներում, հետանտառային մարգագետիններում: Հանդիպում է Լոռու, Իջևանի Ապարանի և Սևանի, ինչպես նաև Դարեղեգիսի, Ջանգեզուրի և Մեղրու ֆլորիստիկական շրջաններում:

Ունի տնտեսական նշանակություն: Արժեքավոր համեմունք է սննդի և խմիչքների արտադրության համար: Եթերայուղն օգտագործվում է նաև որպես բուրավետացնող նյութ օժանելիքների, օժառի արտադրության մեջ: Դեղաբույս է: Պտուղներն օգտագործվում են աղեստամոքսային ուղու հիվանդությունների ժամանակ, իսկ դրանցից ստացվող եթերայուղը՝ նաև դեղերի բուրավետացման համար:

Քրքում հրաշալի

Crocus speciosus M. Bieb.
Шафран прекрасный
(Հիրիկազգիներ - Iridaceae)

Պալարասոխուկավոր խոտաբույս է 3-4 երկարավուն, նշտարաձև տերևներով: Ծաղիկները 1-ակն են, ձագարաձև, խոշոր, վառ գունավորված՝ յասամանագույն կամ բաց մանուշակագույն: Պտուղը տուփիկ է: Ծաղկում է սեպտեմբեր-հոկտեմբերին, պտղաբերում՝ հոկտեմբեր-նոյեմբերին:

Աճում է 900-2800 մ բարձրությունների վրա, անտառում, անտառեզրերին, խոտածածկ լանջերին: Հանդիպում է Իջևանի, ինչպես նաև Գեղամի, Երևանի, Դարեղեգիսի և Ջանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում:

Կարող է կիրառվել որպես համեմունքային բույս: Ցանովի քրքումի բազմաճյուղ, վառ նարնջագույն սպին հանդիսանում է թանկարժեք քրքում (զաֆրան, շաֆրան) համեմունքը: Այն նաև դեղին ներկանյութ է: Գեղազարդային տեսակ է:

Փիփերթ արհամարիված ▶
© WWF-Հայաստան/
Սիրանուշ Գալստյան



Քենոն սովորական
© Sergey Appolonov (www.plantarium.ru)



Քրքուն հրաշալի
© WWF-Հայաստան/ Ալեքսանդր Մալխասյան



Օշինդր (բարձվենյակ) դառը

Artemisia absinthium L.

Полынь горькая

(Աստղածաղկազգիներ - Asteraceae)

Բազմամյա, յուրահատուկ հոտով խոտաբույս է 60-100 սմ բարձրության: Բույսի բոլոր մասերը ծածկված են մոխրաարծաթագույն գեղձային մազիկներով: Տերևները ձվաձև կլորավուն են, 2-3 անգամ փետրաձև հատված, ներքևինները՝ երկարակոթ, վերինները՝ նստադիր: Ձամբյուղները համարյա գնդաձև են, ներքև թեքված, կազմված դեղին խողովակավոր ծաղիկներից: Ծաղկաբույլը հուրան է: Պտուղը մուգ գույնի երկարավուն սերմիկ է: Ծաղկում է հունիս-օգոստոսին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին:

Աճում է մինչև 2000 մ և ավելի բարձրությունների վրա, մարգագետիններում, թփուտների մեջ, ճանապարհների եզրերին, բնակավայրերի մոտ, այգիներում, աղբոտ տեղերում: Հանդիպում է ամենուրեք Հայաստանի բոլոր ֆլորիստիկական շրջաններում:

Հայտնի դեղաբույս է: Պարունակում է յուրահատուկ նյութեր, այդ թվում արտեմիսին ֆլավոնոիդը, աբսինտոլոն եթերայուղը, աբսինտին և անաբսինտին լակտոնը և այլն: Հանդիսանում է խամազուլենի աղբյուր, որն օգտագործվում է գիտական բժշկության մեջ աղեստամոքսային ուղու հիվանդությունների բուժման համար:



◀ Օշինդր դառը

© WWF-Հայաստան/ Միրանուշ Գալստյան

Ալիքասունկ վարդագույն

Lactarius torminosus
Волнушка розовая, волнянка

Գլխարկն ունի 50-120 մմ տրամագիծ, վարդագույն է, կարմրավուն շրջաններով, ուռուցիկ, կենտրոնում՝ ձագարածն, եզրերը՝ ներծաված, սկզբում՝ խոնավ թավշանման մակերեսով, հետո՝ թավտոությունը պահպանվում է միայն գլխարկի եզրերին: Ոտիկը գլանաձև է, 30-70 մմ երկարության, սկզբում՝ ծակոտկեն, հետո՝ սնամեջ: Պտղամիսը սպիտակ է, պինդ և փխրուն, չարտահայտված հոտով, երբեմն սկիպիդարին նմանակող հոտով:

Աճում է կեչուտներում կամ խառը անտառների կեչիների տակ, հողի վրա, հաճախ մեծ խմբերով: Հանդիպում է հազվադեպ Տավուշի և Լոռու մազերում:

Պայմանական ուտելի սունկ է: Օգտագործվում է միայն աղ և թթու դրած, այն էլ 15-20 րոպե եփելուց և ջուրը թափելուց հետո:

